

ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

2022

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյալի կողմից, ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթուղթը արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր են, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ՆԱԽԱԲԱՆ

2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը Աղբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած 44-օրյա պատերազմը եւ 2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ հրահրված ազրեսիան արմատապես փոխեցին Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը՝ տարածաշրջանային եւ զլորալ մակարդակներում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության անվտանգային ճարտարապետությունը լուրջ ցնցումների է ենթարկվել և՝ 2008թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքով, և՝ 2013 թ. սեպտեմբերի 3-ին, երբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հրաժարվեց ԵՄ արեւելյան գործընկերության ասոցացման համաձայնագրի ստորագրումից, և՝ 2016 թ. ապրիլին Աղբեջանի՝ Արցախի դեմ սանձազերծած պատերազմի հետևանքով:

Երեսունամյա անկախության ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունն ունեցել է ազգային անվտանգության երկու ռազմավարություններ, որոնք ընդունվել են 2007 և 2020¹ թթ.-ին: Միևնույն ժամանակ, ոչ առաջինը, ոչ էլ երկրորդն ի վիճակի չեղան Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգի վրա վերոնշյալ իրադարձություններից բխող հնարավոր մարտահրավերների գնահատման և դիմագրավման գործուն բանաձևեր առաջարկել, ինչի վար ապացույցն է 44-օրյա պատերազմն ինքնին և դրա հետևանքները Հայաստանի և Արցախի համար:

Ավելին, 2021 թ. մայիսի 12-ին և 2022 թ. սեպտեմբերի 13-ին Աղբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ սանձազերծած ազրեսիայի փաստը, դրա հետևանքով, ըստ պաշտոնական տվյալների, 140 քառակուսի կիլոմետր տարածքի զավթումը՝ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների հիմքի վրա ձևավորված երկկողմ պայմանագրերի և ՀԱՊԿ շրջանակներում ամրագրված Հավաքական անվտանգության ապահովման սկզբունքի առկայության պարագայում, ամրագրեցին Հայաստանի անվտանգային համակարգի անհամապատասխանությունը պետության ազգային և պետական շահերին:

Ներկայացվող հետազոտությունը մի կողմից վերլուծում է Հայաստանի Հանրապետության գործող անվտանգային համակարգի հարցերի լայն շրջանակ, մյուս կողմից ներկայացնում է անվտանգության ապահովման նոր հնարավորությունների շրջանակը՝ հանձնիս ԱՄՆ հետ ռազմավարական գործընկերության օրինակների: Իրենց ոլորտներում ճանաչված փորձագետների կողմից իրականացված սույն հետազոտության երկու Գլուխներն ել անվտանգային համակարգը վերստին դիտարկում են փոքր պետության հայեցակարգի շրջանակներում, որին անդրադարձել ենք Կազմակերպության նախորդ հետազոտության մեջ²:

Կարևոր է ընդգծել նաև, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես փոքր պետության, անվտանգային համակարգի ձևավորման հնարավորությունները

¹ https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

² <https://hcav.am/wp-content/uploads/2022/06/Green-paper-arm.pdf>

դիտարկվում են նախ արժեքային հենքի վրա, որոնք սահմանադրական սկզբունքներ են՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, ինքնիշխանություն, և ապա ցույց են տալիս ոչ բլոկային պետության կարգավիճակի առավելությունները:

Հետազոտության հիմնական գլուխներին նախորդում է «Արտաքին քաղաքականության մաներականության ընդլայնումն ու արդյունավետ դիվեսիֆիկացիան՝ որպես փոքր պետության առանցքային ռազմավարական առաջնահերթություն» խորագիրը կրող ներածական մասը՝ որպես կատարված հետազոտության հայեցակարգային հենք:

Հետազոտությունն արժեքավոր է նրանով, որ առաջին անգամ Հայաստանի Հանրապետության՝ ՀԱՊԿ անդամակցության առավելություններն ու թերությունները դիտարկվում են զուգահեռաբար՝ և՝ հայեցակարգային նշանակության փաստաթղթերի բովանդակության, և՝ դրանց պրակտիկ կիրառման, և՝ ռազմաքաղաքական ոլորտում Հայաստանի մաներելու անհրաժեշտությունը շեշտադրելու համատեքստում: Միևնույն ժամանակ, առաջին անգամ ներկայացվում են թե ինչ առավելություններ կարող է ունենալ Հայաստանի Հանրապետությունը որպես փոքր և ոչ բլոկային պետություն՝ տարածաշրջանային եւ գլոբալ մակարդակներում նոր մարտահրավերների ի հայտ գալու դեպքում իր անվտանգային համակարգերը համաշափ զարգացնելու, պատասխաններ գտնելու և վերաձևակերպելու տեսակետից:

Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՆԵՎՐԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՈՒՄՆ ՈՒ ԱՐԴՅՈՒԱՎԵՏ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Սառըպատերազմյան շրջանի միջազգային հարաբերությունների (հետայսու՝ ՍՀ) դասական գրականության գերակշիռ մասը, մեծամասամբ հիմնվելով քանակական չափանիշների վերլուծության վրա, համարում է, որ փոքր պետությունների գործունեությունը միջազգային քաղաքականության ոլորտում, ի տարբերություն միջին կամ մեծ տերությունների, եզրափակվում է սույն գոյաբանական առաջնահերթություններով, ինչն էլ պայմանավորված է փոքր պետության հնարավորությունները խիստ սահմանափակող համալիր-համակարգային գործուններով³: Մինչդեռ, այս մոտեցումը ժամանակակից հետազոտությունների շնորհիվ ոչ միայն ճանաչվել է գերպարզունակ⁴, այլև դարձել է խիստ անբավարար մեկնաբանելու ժամանակակից փոքր պետությունների ձկուն, խելամիտ, անվտանգային առումով դիմակայուն դիվանագիտական լուծումները և/ կամ ուժ ու ազդեցություն պրոյեկտելու ունակությունները՝ կրծատելով պայմանական փոքր և մեծ պետությունների միջև առկա համակարգային ասիմետրիան⁵:

Ի տարբերություն ավանդական պատկերացումների՝ ՍՀ ներկայիս համակարգում փոքր պետությունների գերակշիռ մասը ոչ միայն թույլ չեն, այլև կարողանում են օգտվել մաներելու (manoeuvring), քաղաքական առևտրի (political bargaining) և արտաքին դերերի վրա հիմնված ռազմավարությունների (role-based strategies) լայն հնարավորություններից: Ինչպես ցույց են տալիս մի շարք հետազոտություններ՝ վերջիններս ունեն բարդ միջավայրում արագ ու արդյունավետ աղապտացվելու համեմատական առավելություն⁶: Ավելին, արդի ՍՀ համակարգի

³ Այս մոտեցմանն են պատկանում ՍՀ ավանդական տեսությունների տեսանկյունից դիտարկվող մի շարք առանցքային գործեր, ինչպիսիք են Morgenthau, Hans. 1985. Politics Among Nations: the Struggle for Power and Peace; Waltz, Kenneth 1979. Theory of International Politics; Rothstein, Robert. 1968. Alliances and Small Powers; Singer, Marshall. Weak States in a World of Powers; Vital, David. 1967. An Inequality of States: A Study of Small Power in International Politics.

⁴ Դասական մոտեցման ըննադատության մասին տես՝ Elman, Miriam. 1995. The Foreign Policies of Small States: Challenging Neorealism in Its Own Backyard; Browning, Christopher. 2006. Small, Smart and Salient? Rethinking Identity in the Small States Literature. Կամ Keohane, Robert. 1969. Lilliputians' Dilemmas: Small States in International Politics.

⁵ Փոքր պետությունների միջազգային քաղաքականության մեջ ասիմետրիան կրծատելու շանքերի մասին ըննարկումներից են Long, Tom. 2017. Small States, Great Powers? Gaining Influence Through Intrinsic, Derivative, and Collective Power;

⁶ Փոքր պետությունների որպես համեմատական առավելություն արագ աղապտացվելու ունակություններին վերաբերող քննարկումներից են՝ Katzenstein, Peter. 1985. Small States in World Markets: Industrial Policy in Europe; Rosenau, James. 1981. The Adaptation of Small States; Edström, Håkan, et.al., 2019. Military Strategy of Small States: Responding to External Shocks of the 21st Century.

պոլիցենտրիկ առաջականությանների շնորհիվ փոքր պետությունները նախ կարողանում են իրենց միջավայր ներգրավել ավելի ազդեցիկ արտաքին խաղացողների՝ ստանալով մի կողմից այդ պետությունների տարածաշրջանային քաղաքականության վրա ազդելու հնարավորություն, մյուս կողմից՝ հնարավորություն են ստեղծում մեծ դերակատարների միջոցով դիվերսիֆիկացնել իրենց խոհարակած անվտանգային և տնտեսական քաղաքականությունը՝ խուսափելով միակողմանի կախվածությունից:

Ինչպես շեշտում են մի շարք գիտնականներ՝ ներկայում «փոքր պետությունները մեծ միջազգային համբավ և տեսանելիություն են վայելում»⁷ ունենալով «արտաքին քաղաքականության ոլորտում գործելու ընդարձակ դաշտ և ռազմավարական հնարավորությունների լայն շրջանակ, ավելին քան երբեմն հնարավոր է եղել [նախկինում]»⁸: Ուստի՝ «սա փոքր պետություն լինելու պատմության լավագույն ժամանակաշրջանն է», քանզի «բարդ փոխկախվածությունը [ժամանակակից միջազգային համակարգում] բարձրացնում է վերջինիս ազդեցությունն ու մաներականությունը»⁹:

Փոքր պետության հայեցակարգը՝ որպես ՄՀ տեսության վերլուծական շրջանակ, արտաքին քաղաքական, տնտեսական, ինչպես նաև՝ անվտանգային համապարփակ դիվերսիֆիկացիան համարում է փոքր պետության կենսունակությունն ու դիմակայունությունն ապահովող ֆունդամենտալ նախապայման: Փոքր պետության դիվերսիֆիկացիայի արդյունավետության չափման միավորներն են տվյալ պետության մաներականության ազատությունն (freedom of manuevure) ու գործելու տարածությունը (action space): Այս երկու որակական չափանիշները ծագում են ազդեցության ունակության (influence-capability) և ավտոնոմիայի (authonomy)¹⁰ այսինքն պետության դեկավարության արտաքին քաղաքական հարցերում ինքնուրույն որոշում կայացելու համարման արդյունքում¹⁰: Տվյալ փոփոխականների վերլուծության արդյունքում հնարավոր է դաշնում հասկանալ և բացատրել պետության հարաբերական ուժը միջազգային հարաբերություններում: Ի վերջո, ինչպես նշում է դասական հեղինակներից մեկը

«Հեղիեղուկ միջազգային համակարգում փոքր պետությունը պետք է շարունակապես մաների ոչ միայն գոյատևման, այլ նաև բարգավաճման համար: Մաներականությունը ենթադրում է

⁷ Hey, Jeanne. 2003. Introducing Small States Foreign Policy, p.1.

⁸ Wivel, Anders. 2016. Living on the edge: Georgian foreign policy between the West and the rest. p.92.

⁹ Long, Tom. 2017. Small States, Great Powers? Gaining Influence Through Intrinsic, Derivative, and Collective Power pp.185,191.

¹⁰ Առավել դասական գրականության մեջ այն ներկա է այլ տերմիննաբանության ներքո, օրինակ՝ “positive power” եւ “negative power” (Organski, Katherine. 1960. World Politics, pp. 111-12); “power base for offensive/defensive diplomacy” (Goldman, Kjel.1979., pp.115-41), կամ “offense-defence power capabilities” (Mouritzen, Hans, 1991. Tension between the Strong, and the Strategies of the Weak, p.219).

*տարատեսակ դաշինքների ստեղծում կամ համապատասխան
այլընտրանքային քաղաքականության [շարունակական] որոնում»¹¹:*

Այսպիսով, ՄՀ գրակնության համաձայն, արտաքին քաղաքականության ոլորտում փոքր պետության հարաբերական ուժն ու քաղաքական ունակություններն ունեն չափման երկու ցուցիչ՝ սեփական արտաքին միջավայրի վրա ազդեցություն ունենալու կարողություն (influence capability) և մանևրելու ազատության շրջանակ (freedom of manœuvre): Մինչ առաջինը ենթադրում է հարեւան պետություն(ներ)ի վարքագծի վրա ներազդելու նպատակով ազդեցություն պրոյեկտելու ունակություն, երկրորդը վերաբերում է այն ներքին կարողություններին, որոնք թույլ կտան սահմանափակել այլ պետություն(ներ)ի ազդեցությունը սեփական վարքագծի վրա¹²: Որպես կանոն, այս երկու չափման միավորները գտնվում են համակարգային փոխկապակցվածության մեջ: Սակայն առանցքային կարևորություն ունի փոքր պետությանը արտաքին մանևրականություն թույլ տվող ներքին ասպեկտները (գործելու տարածությունը), այսինքն սեփական վարքագիծը տնօրինելու արտաքին քաղաքականության ներքին կառուցվածքը: Վերջինս ձևավորվում է, որպես կանոն, մեծ տերությունների հետ ձևավորված հարաբերությունների ձևաչափից և մեծ տերությունների տվյալ փոքր պետության միջավայրում ներգրավվածության աստիճանից և առանձնահատկություններից¹³:

Հստ սկանդինավյան գիտնականների՝ գործելու տարածության ներքին հիմքերն ամրապնդելու ռազմավարության արդյունքում, այն է՝ դիվերսիֆիկացնելով արտաքին քաղաքականությունը և սեփական միջավայր ներգրավելով այլ տերությունների, փոքր պետությանը հաջողվում է վարել ավելի հավակնու արտաքին քաղաքականություն, ինչն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում մեծացնել իր արտաքին ընդգրկվածության շառավիղն ու բարձրացնել իր միջավայրում ազդեցություն պրոյեկտելու հնարավորությունները¹⁴: Այլ կերպ ասած, քաղաքական դեկավարության կողմից՝ պետության գործելու տարածությունը լայնեցնելու նպատակով մտածված և հետևողական քայլերի իրականացումը մեծացնում է պետություն արտաքին մանևրականության ազատությունը, որը դրսևորվում է երկու և ավելի պայմանագրահեն ռազմավարական գործընկերությունների զարգացման, այն է՝ իրական արտաքին դիվերսիֆիկացիայի միջոցով: Արդյունքում, բարձրանում է տվյալ փոքր պետության ոչ միայն կարևորությունը և անվտանգությունը միջազգային միջավայրում, այլև հնարավորություն է ընձեռնվում իմպլեմենտացնել բարդ արտաքին քաղաքական ռազմավարություններ¹⁵:

¹¹ Keohane, Robert. 1969. Lilliputians' Dilemmas: Small States in International politics. p.299.

¹² Mouritzen, Hans & Wivel, Anders. 2005. The Geopolitics of Euro-Atlantic Integration.p.33.

¹³ Mouritzen, Hans. 2005. A Hundred Years of Danish Action Space. p.118

¹⁴ Olsvig, Sara. 2022. Greenland's Ambiguous Action Space: Testing Internal and External Limitations between U.S. and Danish Arctic Interests; Mouritzen, Hans. 2020. Freedom of Manoeuvre in Nordic bilateral diplomacy; Peterson, Nikolaj. 2005. Danmark som international actør 705-2005.

¹⁵ Mouritzen, Hans. 2020. Freedom of Manoeuvre in Nordic bilateral diplomacy.

Կարևոր է արձանագրել, որ արտաքին մանկականություն ապահովող գործելու տարածությունը, որպես քաղաքական որոշումների կայացման դետերմինանտ՝ միևնույն ժամանակ, մասամբ, սոցիալական կոնստրուկտ է: Այլ կերպ ասած, փոքր պետության գործելու տարածության չափն ու մանկելու ազատությունից օգտվելու հնարավորությունն ուղղակիորեն կապված է տվյալ պետության որոշում կայացնող վերնախավի գիտելիքի, ինտելեկտուալ ունակությունների, պետական շահն ընկալելու առանձահատկությունների, դավանած արժեքների, աշխարհաընկալումների, ինչպես նաև ռիսկերն ու շահաբաժինները մասնագիտորեն գնահատելու համարման արդյունքից: Քաղաքական վերնախավի ունակությունները արտաքին քաղաքական այլընտրանքներ ստեղծելու կարողության ցուցիչն են, որը հիմնված է ինստիտուցիոնալ փորձի արդյունավետ վերլուծության, պետության վարած քաղաքականության հետևանքով ի հայտ եկած սխալների, պետության անմիջական կամ աշխարհաքաղաքական իրադարձություններից սովորելու/դասեր քաղելու ունակության վրա: Տեսական հայեցակարգի համաձայն, պետությունը դեկավարող վերնախավի ինտելեկտուալ կարողությունները արտացոլվում են արտաքին քաղաքական քայլերին վերաբերող դրական և բացասական սցենարների մշակման, դրանց որակական/համեմատական վերլուծության՝ «ըդունելի» կամ «անընդունելի» հետևանքներն ու գինը» հավարակշռված գնահատելու մեջ¹⁶:

Այս հանգամանքը գործելու տարածություն հասկացության սահմանները դարձնում է ոչ հստակ, սակայն դրանից փոքր պետության մանկականության ֆենոմենը չի դադարում լինել օբյեկտիվ: Փոխարենը՝ վերջինիս թուլատրելի չափսերն ու օգտվելու հնարավորություններն են պետության որոշում կայացնողների կողմից ընկալվում առավել սուրբեկտիվ:

Մյուս կողմից, փոքր պետության ինստիտուտների արտաքին մանկականության ազատությունն ընկալելու և դրանից օգտվելու ունակություններից բացի, նշանակություն ունի տվյալ փոքր պետության ներքին քաղաքական մշակույթի առանձնահատկությունները: Վերջինս ներառում է հանրության և քաղաքական ուժերի սեփական պետության արտաքին առաջնահերթությունների մասին ձևավորված պատկերացումները, ինչպես նաև «ներքնից վերև» (հանրությունից իշխանություն) օրակարգ ձևավորելու կարողությունը¹⁷:

Այսպիսով, այս աշխատության հետազոտական փիլիսոփայությունը կենտրոնացած է փոքր պետության հարաբերական ուժի և քաղաքական ունակության, այն է՝ մանկելու ազատության և գործելու տարածության, հայեցակարգված չափման միավորների վրա: Հետևաբար՝ այս հետազոտությունը Հայաստան-ԱՄՆ ուսումնական գործընկերության հեռանկարները և դրանց խոչընդոտող հանգամանքները Հայաստանի համար դիտարկում է հենց գործելու տարածության ներքին հնարավորությունները մեծացնելու և մանկելու ազատությունից օգտվելու տեսանկյունից:

¹⁶ Mouritzen, Hans. 2005. A Hundred Years of Danish Action Space. p.116.

¹⁷ Ibid.p.118.

Բացի այդ, հաշվի է առնվում այն եզրակացությունը, որ համակարգային բազմաբևեռության պայմաններում տեսական դիվերսիֆիկացիայի առարկայական դրսնորումը ոչ բլոկային բազմավեկտորությունն է: Վերջինս համարվում է ժամանակակից միջազգային համակարգի առավել մաներականություն ապահովող ձևաչափ: Ինչպես նշում է բազմավեկտորությունն հայեցակարգող հեղինակը՝ արտաքին քաղաքական այս սկզբունքը փոքր պետությանը հնարավորություն է տալիս «բացել մաներելու շառավիղ՝ շրջանցելով այն սահմանափակումները, որոնք առկա են համակարգային մակարդակում»¹⁸: Արտաքին քաղաքականության ոլորտում ոչ բլոկային բազմավեկտորության գործնական կիրառումն արտահայտվում է փոքր պետության կողմից որդեգրված «համադաշնության» ռազմավարության (co-alignment) տեսքով, ինչը պետության կողմից ենթադրում է համապատասխան ինստիտուցիոնալ վարքագիծ, ինչն էլ իր հերթին տվյալ փոքր պետությանը հնարավորություն է ընձեռնում դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքական միջավայրը հիմնական մեծ գործընկերների հետ, կանխելով մեկ ռազմավարական գործընկերոց գերակայությունն ու նրանից կախվածությունը, միևնույն ժամանակ՝ շվճասելով սեփական անվտանգային համակարգը:

Այսպիսով՝ հիմնվելով ՍՀ փոքր պետությունների հայեցակարգի՝ վերոնշյալ զիտական վերլուծական մոտեցումների վրա, այս աշխատանքի նպատակն է զիտահետազոտական ներդրում ունենալ Հայաստանի Հանրապետության հետպատերազմյան շրջանի արտաքին քաղաքականության այլրնտրանքային տարրերակների ձևակորման գործում: Առաջարկելով ոչբլոկային «համադաշնության» ռազմավարության մեր տարրերակը, այս աշխատությունը գրված է փոքր պետության արտաքին-անվտանգային դիվերսիֆիկացիայի, այսինքն մաներականության բարձրացման և գործելու տարածության ընդլայնման, ինչպես նաև դրանց խոչընդոտող հանգամանքների վերհանման համատեքստում: Ուստի մի կողմից քննության են արժանացել Հայաստան-ԱՄՆ ռազմավարական հարաբերությունների հեռանկարները՝ դրանցից բխող ոչբլոկային կարգավիճակի արտաքին և անվտանգային ձկունության առանձնահատկություններով, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի ՀԱՊԿ անդամակցության հետևանքով առկա սահմանափակումներն ու անվտանգային առումով արտաքին մաներականության բարձրացմանը խոչընդոտող հանգամանքները:

¹⁸ Contessi, Nicola. 2015. Foreign and Security Policy Diversification in Eurasia: Issue Splitting, Co-alignment, and Relational Power.p.301



Հեղինակ՝ Էդուարդ Աբրահամյան, պ.գ.թ., բժիշտանական
Լեռթերի Համալսարանի դրվագության և դասախոս:

2019-2021 թթ. Էդուարդը զբաղեցրել է ՀՀ Նախագահ
Արմեն Սարգսյանի օգնականի (արտաքին
հարաբերությունների ուղղություն) պաշտոնը:

Էդուարդը ներգրավված է եղել մի շարք արտաքին
քաղաքական նախաձեռնություններում, այդ թվում՝
Նախագահի Փոքր խելամիտ պետությունների ակումբի
նախաձեռնության կոնցեպտի մշակմանն ու իրականացմանը:

Էդուարդի մասնագիտական ոլորտը փոքր
պետությունների արտաքին քաղաքականության և
ռազմավարական ադապտացիան է, մասնավորապես՝ փոքր
պետությունների ասխմետրիկ փոխհարաբերությունները միջին
և մեծ պետությունների հետ և այդ փոխհարաբերությունների
արտացոլումն ու ազդեցությունը միջազգային
հարաբերությունների բնեօայնացման վրա:

Twitter: @abrahamyan13; email: ea269@le.ac.uk



Հեղինակ՝ Ալբերտ Ներզելյան, անվտանգային
քաղաքականության փորձագետ:

Ալբերտը 2014 թ. ավարտել է Տորոնտոյի համալսարանի
Քաղաքական գիտությունների և միջազգային
հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 2017 թ.՝ Հայաստանի
ամերիկյան համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: Նա
մասնակցել է նաև միջազգային վերապատրաստման ծրագրերի,
այդ թվում՝ Զորշ Մարշալի անվան անվտանգային խնդիրների
Եվրոպական կենտրոնում Կիբեռանվտանգության և Զոն Սմիթ
Թրաստ հիմնադրամի կրթաթոշակի ծրագրերին:

2016 թ. Ալբերտը զբաղեցրել է ՀՀ սփյուքի նախարարի
խորհականի պաշտոնը, իսկ 2017-2020 թթ. աշխատել է
Անվտանգության խորհրդի գրասենյակում՝ որպես
Տեղեկատվական քաղաքականության և կիբեռանվտանգության
բաժնի առաջատար մասնագետ, իսկ այնուհետ՝
Անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի խոսնակ:

Ալբերտը ծառայել է հայկական բանակում՝ որպես
ազգային պաշտպանական գիտահետազոտական
համալսարանի կրտսեր գիտաշխատող:

Վերջին երեք տարիների ընթացքում Ալբերտի
մասնագիտական գործունեությունը ներառել է նախազերի
կառավարման ոլորտը: Նա դեկանարել է միջազգային
դրույթների և մասնավոր ներդրումային ծրագրեր:

Ալբերտի հետազոտական հետաքրքրությունները
ներառում են ազգային անվտանգության քաղաքականությունը,
կիբեռանվտանգության քաղաքականությունը,
ապատեղեկատվությունը և հանրային քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ Ա

ԱՄՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՏՕ-ԻՑ ԴՈՒՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՆԵՎՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետազոտության սույն գլխի նպատակն է հասկանալ ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության հնարավոր հեռանկարների, այդ թվում՝ ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակից (ՄՆԴ, Major-Non-NATO-Allies) կարգավիճակի շրջանակներում ԱՄՆ-ի կողմից ակնկալվող քաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության իրագործելիությունն ու սահմանափակող հիմնական համակարգային գործոնները:

ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով ամրագրված է, որ «Հայաստան-ԱՄՆ հարաբերությունները բարձրացել են նոր՝ ռազմավարական երկխոսության մակարդակի: Կառավարությունը շարունակելու է հետևողականորեն աշխատել ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության զարգացման և խորացման ուղղությամբ»¹⁹: Կառավարության հանձնառությունից ենթադրելի է, որ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարությունն իր առջև Հայաստան-ԱՄՆ հարաբերությունները խորացնելու խնդիր է դրել՝ այն բարձրացնելով մինչև ռազմավարական գործընկերության մակարդակի: Հետազոտության սույն գլխի առարկան ռազմավարական գործընկերության ինստիտուցիոնալ դրսերումներն են, և այն չի ներառում երկկողմ հարաբերություններում «ռազմավարական գործընկերություն» եզրույթի կիրառումը հռետորական նպատակներով:

Սույն գլուխը բաղկացած է բաժիններից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների: Առաջին բաժինը կրում է ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության հնարավոր հեռանկարները անվանումը, իսկ երկրորդը՝ Ռազմավարական գործընկերության շրջանակներում ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակիցի կարգավիճակ անվանումը:

ԲԱԺԻՆ I

ԱՄՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐԸ

Տվյալ բաժինը որակական տվյալների բովանդակային վերլուծություն է, որը կառուցված է հետևյալ հետազոտական հարցերի շուրջ՝

¹⁹ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, [օնլայն] <https://www.gov.am/files/docs/4586.pdf> (28.11.2022թ.):

- ✓ ի՞նչ է ուազմավարական գործընկերությունը ԱՄՆ արտաքին հարաբերություններում,
- ✓ որո՞նք են դրանում ներառված ուղղություններն ու առավելությունները, և
- ✓ որո՞նք են Հայաստան-ԱՄՆ ուազմավարական գործընկերության զարգացման հիմնական խոչընդոտները:

Սույն բաժինը բաղկացած է տվյալ ենթաբաժիններից 1) ուազմավարական գործընկերությունը՝ որպես նոր գործիքակազմ արտաքին հարաբերություններում, 2) ԱՄՆ արտաքին քաղաքականության ուազմավարական գործընկերության երկկողմ ընկալումները՝ ուազմավարական գործընկերության փաստաթղթային ձևակերպման համատեքստում, 3) ԱՄՆ-ում ուազմավարական գործընկերության համապատասխան պայմանագրերի և օրենսդրական լրացուցիչ բաղադրիչների ընդունման բյուրոկրատական ընթացակարգերը, 4) ԱՄՆ-ի և այլ պետությունների միջև ուազմավարական գործընկերության համեմատական վերլուծությունը, դրանց ընդհանրությունները, առավելություններն ու զարգացման միտումները, 5) Հայաստան-ԱՄՆ ուազմավարական երկխոսությունը և Հայաստանի համար ուազմավարական գործընկերությանը խոչընդոտող արգելքները և 6) արգելքների հաղթահարման դեպքում Հայաստանի համար հնարավորությունները:

1) Ուազմավարական գործընկերությունը՝ որպես նոր գործիքակազմ արտաքին հարաբերություններում

Ուազմավարական գործընկերությունը՝ որպես փոխհարաբերությունների տարբերակվող կարգավիճակ, նոր երևույթ է միջազգային հարաբերություններում: Նմանատիպ որակումով փոխհարաբերություններ հիմնականում սկսել են ձևավորվել Սառը պատերազմից հետո՝ 1990-ականներին: ԽՍՀՄ փլուզմամբ և աշխարհակարգի փոփոխություններով պայմանավորված՝ միջազգային հարաբերություններում հիմնական դերակատարները արտաքին հարաբերությունների գործիքակազմում սկսեցին կիրառել ուազմավարական գործընկերություններ ստեղծելու մոտեցումը՝ նպատակ ունենալով ձևավորել երկկողմ և բազմակողմ «առանձնահատուկ հարաբերություններ»²⁰: Այն ընձեռնում էր արտաքին քաղաքականության ոլորտում մաներելու հնարավորություն և ուազմավարական մակարդակի փոխգործակցության դաշտ էր բացում՝ դասական հավաքական պաշտպանություն պարտավորեցնող դաշինքներից դուրս:

Առկա ուազմավարական գործընկերությունների վերաբերյալ հետազոտությունները²¹ ցույց են տալիս, որ ներկայում ձևավորված են մոտ 150 ուազմավարական գործընկերություններ: Միաժամանակ, դժվար է հստակ

²⁰ Kay, Sean. 2000. What Is a Strategic Partnership? Problems of Post-Communism. 47:3, 15-24, DOI: 10.1080/10758216.2000.11655882

²¹ Michalski, Anna & Pan, Zhongqi. 2017. Strategic Partnerships: A New Form of International Engagement. DOI: 10.1007/978-981-10-3141-0_2.

ներկայացնել դրանց քանակը՝ պայմանավորված դրանց վերաբերյալ պետությունների ընկալումների տարբերություններով, ինչպես նաև՝ ռազմավարական գործընկերություն ձևավորելու տարբեր պատճառներով, հետևաբար նաև՝ դրանց պայմանագրային հիմքերով ու կառուցվածքներով:

Որոշ ռազմավարական գործընկերություններ ձևավորվել են «ընկերական» պետությունների միջև, մյուսները՝ «մրցակցող»: Դրանք ներառում են ոչ միայն պետական դերակատարներին, այլև՝ վերպետական կառույցներին (ԵՄ): Նման գործընկերության մտադրությունը հաճախ ոչ ֆորմալ դաշինքների, կամ առավել ստույգ «փափուկ դաշինքներ» (soft alliance) ստեղծումն է՝ խարսխված համընդհանուր շահի վրա: Պայմանագրային ռազմավարական գործընկերության վրա զարգացած «փափուկ դաշինքներ» ձևավորվում են համախոհ և արժեհամակարգային առումով նույնանման պետությունների միջև՝ որոշակի աշխարհակարգի կամ տարածաշրջանային անվտանգային ձարտարապետության ամրապնդման, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և ռազմական համեմատական առավելություն զարգացնելու նպատակներով²²: Միջազգային հարաբերություններում դաշինքների ձևավորմանը վերաբերող գրականության մեջ նմանատիպ դրսորումները հաճախ դասակարգվում են որպես «ռազմավարական համաձայնեցվածություն» (strategic alignment)²³: Նմանօրինակ «փափուկ դաշինքի» բնույթի ռազմավարական գործընկերությունների թվին կարելի է դասել այնպիսի հարաբերություններն, ինչպիսիք են, օրինակ՝ Թուրքիա-Ադրբեյչան, Ռուսաստան-Ադրբեյչան, ԱՄՆ-Հնդկաստան, Ռուսաստան-Չինաստան, Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունները: Առհասարակ, ռազմավարական գործընկերություններն իրենց բովանդակությամբ ավելի լայն են, քան ֆորմալ դաշինքները: Վերջիններս սահմանափակված չեն միայն անվտանգային բաղադրիչով և պետությունների կողմից դիտարկվում են որպես ավելի ձկուն ու բազմավեկտոր գործիք՝ արագ փոփոխվող միջազգային հարաբերություններում:

Լիբերալ աշխարհակարգի ձևափոխման համատեքստում՝ բազմակողմ, ժողովրդավարական սկզբունքների ու նորմերի վրա հիմնված համակարգի թուլացման, ինչպես նաև պետությունների կողմից միջազգային պարտավորությունների չկատարման պայմաններում, պետությունները սկսեցին ավելի կարևորել արտաքին հարաբերություններում ռազմավարական գործընկերությունների ձևավորումն ու զարգացումը՝ այն դիտարկելով որպես կարևոր գործիք՝ ազգային շահի սպասարկման արդյունավետության տեսանկյունից: Ռազմավարական գործընկերությունը նաև հնարավորություն էր ընձեռում ոչ հավաքական անվտանգության անդամ պետությունների հետ ստեղծել երկկողմ

²² Kay, Sean. 2000. What Is a Strategic Partnership? Problems of Post Communism. 47:3, 15-24, DOI: 10.1080/10758216.2000.11655882

²³ Wilkins S., Thomas. 2011. ‘Alignment’, not ‘Alliance’ – the Shifting Paradigm of International Security Cooperation: Toward a Conceptual Taxonomy of Alignment, Cambridge University Press, 38:1

շահավետ համագործակցության միջոցներ²⁴: Քանակապես աճող պայմանագրահեն ռազմավարական գործընկերությունների ցանցը միջազգային հարաբերություններում կարևոր այլընտրանքային գործիքակազմի դեր է կատարում՝ հաճախ փոխլրացնելով փոխարինելով ավանդական միություններին, դաշինքներին և պակտերին²⁵:

Այսպես՝ ռազմավարական գործընկերությունը կարելի է սահմանել որպես «միջազգային հարաբերություններում պետությունների միջև երկկողմ հարաբերությունների հատուկ ձև, որի նպատակը արտոնյալ երկկողմ հարաբերությունների ստեղծումն է»²⁶: Ռազմավարական գործընկերություններն իրենց բնույթով և բովանդակությամբ ստատիկ և ֆիքսված չեն: Դրանք ենթարկվում են դինամիկ զարգացման և տրանսֆորմացիայի՝ ժամանակի ընթացքում երկու դերակատարների միջև տարբեր հարցերի շուրջ առկա շահերի համընկնման կամ հակասության արդյունքում: Այլ կերպ ասած՝ «ռազմավարական գործընկերությունն այն է, ինչ պետությունները դարձնում են այն»²⁷:

2) ԱՄՆ արտաքին քաղաքականության ռազմավարական գործընկերության երկկողմ ընկալումները՝ ռազմավարական գործընկերության փաստաթղթային ձևակերպման համատեքսում

ԱՄՆ արտաքին հարաբերություններում «ռազմավարական գործընկերությանը» (այդ թվում նաև «ռազմավարական երկխոսություն» որպես ռազմավարական գործընկերության հասնելու նախադրյալ) վերաբերող եզրույթները և դրանց ինստիտուցիոնալ դրսորումները սկսեցին ձևավորվել Սառը պատերազմից հետո: 1991 թ. Բուշ Ավագի վարչակազմը «ռազմավարական երկխոսություն» նախաձեռնեց ՆԱՏՕ-ի և Վարչակայի պայմանագրի միջև՝ ստեղծելով Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը: 1997 թ. Բուխարեստում Նախագահ Բիլ Քլինթոնը հայտարարեց Ռումինիայի հետ ռազմավարական գործընկերության մեկնարկի մասին: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի պաշտոնը զբաղեցնող Ստրոք Թալբոթը, խոսելով ռազմավարական գործընկերության մասին, նշեց, որ «ռազմավարական

²⁴ Michalski, Anna. 2019. Swedish Institute of International Affairs, [online]

<https://www.ui.se/globalassets/ui.se-eng/publications/ui-publications/2019/ui-paper-no.-10-2019.pdf>


²⁵ Pan, Z., & Michalski, A. 2019. Contending logics of strategic partnership in international politics. *Asia Eur J* 17, pp. 265–280. <https://doi.org/10.1007/s10308-019-00553-3>

²⁶ Michalski, Anna. 2019. Swedish Institute of International Affairs, [online]

<https://www.ui.se/globalassets/ui.se-eng/publications/ui-publications/2019/ui-paper-no.-10-2019.pdf>

²⁷ Tyushka, Andriy & Czechowska, Lucyna. 2019. “Strategic Partnerships, International Politics and IR Theory”, in States, International Organizations and Strategic Partnerships, Lucyna Czechowska et al. (Cheltenham, 2019), pp. 8–43 (36)

գործընկերությունն իրենից ներկայացնում է համակարգված համատեղ ջանքեր՝ միտված ընդհանուր նպատակների իրականացմանը»²⁸:



Չնայած Նախագահ Բուշ Կրտսերի կողմից միջազգային հարաբերություններում տարվող միակողմանիության քաղաքականությանը (unilateralism)²⁹ ահարեկչության դեմ համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ը «ռազմավարական գործընկերության» պայմանագրեր ստորագրեց Ղազախստանի, Ուզբեկստանի և Ղրղզստանի հետ՝ ապահովելով դեպի Աֆղանստան ԱՄՆ զինված ուժերի տարանցման ուղիները։ ԱՄՆ կողմից ռազմավարական գործընկերության ձևաչափի ընդլայնումը միջազգային հարաբերություններում առավելապես ակտիվացավ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմի ժամանակաշրջանում՝ նոր ինստիտուցիոնալ շունչ հաղորդելով Ինդոնեզիայի, Վիետնամի, Մալայզիայի և Նոր Զելանդիայի հետ երկկողմ հարաբերություններին²⁹։

Այսպես՝ ԱՄՆ տեսանկյունից ռազմավարական գործընկերությունը գտնվում է ռազմավարական երկխոսության և ֆորմալ դաշինքի մեջտեղում (տե՛ս պատկեր 1):

Պատկեր 1. Ռազմավարական գործընկերության դասակարգումը ԱՄՆ արտաքին հարաբերություններում

3) ԱՄՆ-ում ռազմավարական գործընկերության համապատասխան պայմանագրերի և օրենսդրական լրացուցիչ բաղադրիչների ընդունման բյուրոկրատական ընթացակարգերը

ԱՄՆ-ի համար ռազմավարական գործընկերության հիմք կարող են լինել ինչպես ռազմավարական գործընկերության բնույթն ընդգծող համապարփակ երկկողմ պայմանագրերը՝ լրացված փոխըմբռնման հուշագրերով (ԱՄՆ-Կանադա, ԱՄՆ-

²⁸ Talbott, Strobe. 1998. “The United States and Romania: A Strategic Partnership”, Bucharest, Romania, [online] https://1997-2001.state.gov/www/policy_remarks/1998/980319_talbott_bucharest.html

²⁹ Parameswaran, Prashanth. 2014. “Explaining US Strategic Partnerships in the Asia-Pacific Region: Origins, Developments and Prospects.” Contemporary Southeast Asia, vol. 36, no. 2, pp. 262–89. JSTOR, [online] <http://www.jstor.org/stable/43281291. Accessed 10 Nov. 2022.>

Վրաստան, ԱՄՆ-Ուզբեկստան, ԱՄՆ-Կիպրոս³⁰, ԱՄՆ-Սինգապուր), այնպէս է՝ ԱՄՆ Կոնգրեսի կողմից համապատասխան օրենսդրական ակտերի ընդունումը (Ուկրաինա, Խաղաղօվկիանոսյան երկրներ, Մոնղոլիա, Կոլումբիա)³¹: Նման օրենսդրական ակտերի նպատակն է երկկողմ ռազմավարական հարաբերություններին հաղորդել ինստիտուցիոնալ դրսորում՝ միաժամանակ հստակ սահմանելով երկկողմ հարաբերություններում ներգրավված Կոնգրեսական հանձնաժողովների ցանկը, գործադիր իշխանության պարտավորությունները, ինչպէս նաև՝ բյուջե հատկացնել նշված օրենքում հստակեցված նպատակներին հասնելու համար: Օրինակ՝ 2021թ. Խաղաղօվկիանոսյան երկրների հետ ռազմավարական գործընկերության օրենքով սահմանվել է, որ 2022-2026թթ. ընթացքում ԱՄՆ տարեկան բյուջեից ամենամայ Խաղաղօվկիանոսյան երկրներին հատկացվելու է 5 մլն. ԱՄՆ դոլարի աջակցություն՝³²:

Ռազմավարական գործընկերության մասին օրենքները հիմնականում հղում են կատարում երկու հիմնարար օրենսդրական ակտերի վրա, այն է՝ 1961 թ. Արտաքին աջակցության ակտը և 1976 թ. Զենքի արտահանման վերահսկման ակտը: Սույն օրենքներով սահմանվում է օտարերկրյա պետություններին ֆինանսական աջակցության և պաշտպանական միջոցների (defense articles) տրամադրման ընթացակարգերը: Օրենքներով սահմանված հնարավորությունները կրնարկվեն հաջորդիվ: Մինչ այդ, կարևոր է հասկանալ և վեր հանել ԱՄՆ այն օրենքները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ ԱՄՆ-Հայաստան փոխհարաբերությունները ռազմավարական գործընկերության մակարդակին հասցնելու համար:

4) ԱՄՆ-ի և այլ պետությունների միջև ռազմավարական գործընկերության համեմատական վերլուծությունը, դրանց ընդհանրությունները, առավելություններն ու զարգացման միտումները

Սույն ենթաբաժնում ներկայացվում է ԱՄՆ և այլ պետությունների միջև ձևավորված ռազմավարական գործընկերությանն առնչվող պայմանագրերի և օրենսդրական ակտերի որակական բովանդակային վերլուծությունը՝ կատարված կողավորման միջոցով, որի համար օգտագործվել է Dedoose ծրագրային ապահովումը³³: Վերլուծության միավոր է հանդիսանում տեքստերում

³⁰ 2018թ. ԱՄՆ-Կիպրոս երկկողմ անվտանգային գործընկերության մտադրությունների մասին հայտարարություն:

³¹ Հարկ է նշել, որ ռազմավարական համագործակցության գործադիր և օրենսդիր ուղղությունները իրար փոխադարձաբար բացառող չեն, և հաճախ նաև փոխվածնող են:

³² BLUE Pacific Act, H. R. 2967, 117th Congress, [online] <https://www.congress.gov/bill/117th-congress/house-bill/2967/text>

³³ Dane, Francis C. 2018. "Archival Research ." Essay. In Evaluating Research: Methodology for People Who Need to Read Research, 273–97. Thousand Oaks, CA: SAGE Publications, Inc. Կողավորման առարկա եղել է ռազմավարական գործակցության տեքստերում և բացահայտ բովանդակությունը, և՝ բաքնված բովանդակությունը (latent content):

գործընկերությանը վերաբերող հիմնական ուղղությունները (օրինակ՝ ժողովրդավարություն, տնտեսություն, անվտանգություն, ընդհանուր արժեքներ և այլն) և դրանց բաղադրիչները (տե՛ս պատկեր 2. օգտագործված Կոդեքսի և ենթակողերի համեմատական չափերը ըստ դրանց վերաբերող տեքստի քանակի): Ուսումնասիրության համար ընտրվել են ոչ ՆԱՏՕ-ի անդամ (եթե պայմանագրերը ստորագրվել են), ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակից (MNNA) և աշխարհագրորեն տարբեր պետություններ (ընդհանուր՝ 9 պետություն): Ստորև ներկայացվում են համեմատական բովանդակային վերլուծության արդյունքները/եզրակացությունները:

- **Համագործակցության ոլորտներ.** ռազմավարական գործընկերությանը վերաբերող պայմանագրերում և իրավական ակտերում նշվում է ԱՄՆ-ի և գործընկեր պետության հետ առնվազն չորս ռազմավարական ուղղություն՝ ժողովրդավարություն, տնտեսություն, անվտանգություն և մշակույթ:
- **Ռազմավարական գործընկերության իրագործման մեխանիզմները.** ռազմավարական գործընկերության պայմանագրերը իրագործելու համար հաճախ ատեղձվում են երկկողմ, բարձր մակարդակի հանձնաժողովներ (օրինակ՝ Ռազմական, Վրաստան), որոնք հանդիպում են առնվազն տարին մեկ անգամ և համակարգում են հանձնաժողովի ենթակայությամբ գտնվող ու վերոնշյալ ռազմավարական ուղղություններով աշխատող աշխատանքային խմբերի գործունեությունը:
- **Ընդհանուր արժեքներ.** բոլոր ռազմավարական գործընկերության փաստաթղթերում ընդհանուր արժեքները կամ ընդհանուր արժեհամակարգը դիտարկվում է որպես գործընկերության հիմք: Օրինակ՝ 2008 թ. ԱՄՆ-Վրաստան Ռազմավարական գործընկերության խարտիայում ամրագրված է, որ «*երկու ժողովրդավարական պետությունների միջև համագործակցությունը հիմնված է ընդհանուր արժեքների և շահերի վրա»³⁴: «Ընդհանուր արժեքներ» և «ժողովրդավարություն» կողերի խաչաձև աղյուսակավորումը (cross tabulation) ցույց է տվել դրանց համատեղ դիտարկման 12 դեպք: Նույն փաստաթղթում հատուկ ընդգծվում է, որ «*ԱՄՆ-ի և Վրաստանի միջև գործընկերությունը բխում է այն համատեղ փոխարժումումից և համոզմունքից, որ ժողովրդավարությունը քաղաքական լեզվի մուտքան և, հետևաբար, կայունության զինավոր հիմքն է»³⁵:**
- **«Ընդհանուր արժեքները» որպես գործընկերության առանցք.** 2020 թ. ԱՄՆ կոնգրեսականներ Զիմ Ռիչը և Ժան Շահինը քննադատական նամակ հղեցին Վրաստանի կառավարությանը՝ անհանգստություն հայտնելով Վրաստանի կառավարության կողմից խաղաղ ցույցերը խոշնդրություն և խոստացված ընտրական բարեկոնխումների հանձնառությունը չկատարելու վերաբերյալ: Նամակում մասնավորապես ընդգծված էր, որ Վրաստանում տեղի ունեցող գործընթացները

³⁴ “United States-Georgia Charter on Strategic Partnership - United States Department of State.” U.S. Department of State, 14 January, 2021.[online] <https://www.state.gov/united-states-georgia-charter-on-strategic-partnership/>.

³⁵ IBID

Դատկեր 2. Կողերի և ենթակողերի համեմատական չափսերը բայ դրանց վերաբող տեքստի քանակի



«հարցեր են բարձրացնում մեր ընդհանուր արժեքների վերաբերյալ Վրաստանի հանձնառության մասին»:³⁶

- Ժողովրդավարությունը գործընկերության կարևոր բաղադրիչ է ու ազգային պահպանական գործընկերության վաստաթղթերի որակական վերլուծությունը փաստում է, որ ժողովրդավարությունը ներառյալ դրա բաղադրիչները (քաղաքական և սոցիալական ազատություններ, օրենքի գերակայություն, ազատ և արդար ընտրություններ, անկախ դատական համակարգ, ազատ մամուլ, լավ կառավարում), հանդիպում են ամենաշատը՝ 110 անգամ՝ որպես առանձին կատեգորիա (համեմատության համար տնտեսությանը վերաբերող հիշատակումները 68-ն են):
- Գործընկեր պետությունների անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամրողականությունը՝ որպես կարևոր ռազմավարական ուղղություն. ԱՄՆ-ի ռազմավարական գործընկեր պետությունների

³⁶ “Risch, Shaheen Express Concern for Potential Backsliding of Georgian Democracy and Governance: United States Senate Committee on Foreign Relations.” US Senate Committee on Foreign Relations, 29 January 29 2020. [online] <https://www.foreign.senate.gov/press/rep/release/risch-shaheen-express-concern-for-potential-backsliding-of-georgian-democracy-and-governance>.

- անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ընդունումը և պահպանումը դիտարկվում է որպես գործընկերության հիմք: 2021 թ. ստորագրված ԱՄՆ-Ռուսական ռազմավարական գործընկերության խարտայի համագործակցության սկզբունքների հատվածի առաջին կետով ամրագրվում է, որ «Ինքնիշխանությանը, անկախությանը, տարածքային ամբողջականությանն ու սահմանների անձեռնմխելիությանն ուղղված միմյանց աշակցությունը հանդիսանում է մեր երկկողմ հարաբերությունների հիմքը»³⁷
- **ԱՄՆ աշակցությունը գործընկեր պետությունների անվտանգային կարողությունների զարգացմանը.** ռազմավարական գործընկերության վերաբերյալ բոլոր պաշտոնական տեքստերում ԱՄՆ-ը հանձնառություն է ստանձնում աշակցելու գործընկեր պետությունների անվտանգային կարողությունների զարգացմանը: Եթե դեպի ՆԱՏՕ/Եվրոպատլանտյան ինտեգրում ձգտող պետությունների ռազմավարական գործընկերությանը վերաբերող տեքստերում (օրինակ՝ 1998թ. Բալթյան Խարտիա³⁸) անվտանգային բաղադրիչը կապվում է Եվրոպատլանտյան ինտեգրման հետ, ապա Աֆղանստանի³⁹, Սինգապորի⁴⁰ և Ինդոնեզիայի⁴¹ օրինակները փաստում են, որ անվտանգային ոլորտում ԱՄՆ աշակցությունը կարող է համապատասխանել գործընկեր պետության կարիքներին և անվտանգային միջավայրին:
 - **Ռազմավարական գործընկեր պետություններին տրամադրվող անվտանգային աշակցության շրջանակը հիմնականում ներառում է 1) ԱՄՆ զենքերի արտահանման ծավալների մեծացում (օրինակ՝ 2014թ. Ռուսական անկախության աշակցման ակտ⁴²), 2) Արտաքին Ռազմական Ֆինանսավորման (Foreign Military Financing) ծրագրից օգտվելու հնարավորություն, 3) անվտանգային ոլորտի բարեփոխումներին աշակցություն (security sector reforms), 4) պաշտպանական ոլորտում կրթական ծրագրերի ներդրում և ընդլայնում:**
 - **Ռազմավարական գործընկերության տեքստերի ժամանակագրական զարգացումը ցույց է տալիս, որ անվտանգային ոլորտում ԱՄՆ աշակցությունը**

³⁷ “U.S.-Ukraine Charter on Strategic Partnership.” U.S. Department of State, 10 November, 2021. <https://www.state.gov/u-s-ukraine-charter-on-strategic-partnership/>.

³⁸ “The Baltic Charter.” U.S. Department of State, 16 January, 1998. https://1997-2001.state.gov/www/regions/eur/ch_9801_baltic_charter.html.

³⁹ “The U.S.-Afghanistan Strategic Partnership Agreement.” Obama White House, 1 May, 2012.

<https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2012/05/01/fact-sheet-us-afghanistan-strategic-partnership-agreement>.

⁴⁰ “Strategic Framework Agreement for a Closer Cooperation Partnership in Defence and Security.” Government of Singapore, 12 July, 2005.

https://www.nas.gov.sg/archivesonline/data/pdfdoc/MINDEF_20050712001/MINDEF_20050712003.pdf.

⁴¹ “Joint Statement by the United States of America and the Republic of Indonesia.” Obama White House, 16 October, 2015. <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2015/10/26/joint-statement-united-states-america-and-republic-indonesia>.

⁴² “H.R.5859 - 113th Congress (2013-2014): Ukraine Freedom Support Act.” 113th Congress, 18 December, 2014.

<https://www.congress.gov/bill/113th-congress/house-bill/5859>.

նաև համապատասխանեցվում է տվյալ ժամանակաշրջանի անվտանգային կարիքներին: Օրինակ՝ 2022թ. Վրաստանի աջակցության ակտով (Georgia Support Act) և 2021թ. Ուկրաինայի երկրորդ ռազմավարական գործընկերության խարտիայով ԱՄՆ-ն հանձնառություն է ստանձնում աջակցել գործընկեր պետություններին կիբեռանվտանգության կարողությունների զարգացման և ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտներում (օրինակ՝ 2022թ. պետական բյուջեից Ազատություն ռադիոկայանին հատկացվել է հավելյալ 30 մլն. դոլար):

- *Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ մոտեցումների փոփոխությունը:* Եթե 2008թ. ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության խարտիայում խոսվում է Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև հակամարտության կարգավորման մասին, ապա արդեն 2021թ. Ուկրաինայի խարտիայում, 2022թ. Վրաստանի աջակցության ակտի նախազգում և 2022թ. Ուկրաինայի աջակցության ակտում հստակ ընդգծվում է Ռուսաստանին զավելու և ռազմական գործողություն մեկնարկելու համար պատժամիջոցներ կիրառելու մասին:

Հաշվի առնելով ԱՄՆ-ի ձևավորած ռազմավարական գործընկերության բնույթը ոչ ՆԱՏՕ անդամ պետությունների հետ՝ տրամաբանական է առաջ քաշել այն տեսակտը, որ ԱՄՆ-ը ռազմավարական գործընկերությունները դիտարկում է իր պատկերացմամբ օրենքի վրա հիմնված հետսառպատերազմյան լիբերալ աշխարհակարգը պահպանելու և զարգացնելու տեսանկյունից՝ նպաստելու համար գործընկեր պետությունների ժողովրդավարական, տնտեսական և անվտանգային կարողությունների զարգացմանը: Այն իր հերթին հնարավորություն է տալիս ԱՄՆ-ին վարելու գլոբալ քաղաքականություն՝ օգտագործելով նաև գործընկեր պետությունների ցանցը:

5) Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսությունը և Հայաստանի համար ռազմավարական գործընկերությանը խոչընդոտող արգելքները

2019 թ. մեկնարկեց Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսությունը⁴³: Հայամերիկյան ռազմավարական երկխոսության առաջին նիստի ընթացքում ստորագրվեցին աջակցության համաձայնագրեր, որոնցով տնտեսական աճի խթանման և արդյունավետ կառավարման նպատակով հատկացվեց մինչև 16 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորում: Բացի այդ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ՄԶԳ) հայտարարեց ժողովրդավարության աջակցման ոլորտում հավելյալ 6 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորման մասին: Ռազմավարական երկխոսության գործընթացը որոշակի դադար ունեցավ 2020 թ. և վերականգնվեց 2022 թ. մայիսին՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Ա. Միրզոյանի Վաշինգտոն կատարած

⁴³ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, մայիս 2019, [online] <https://www.mfa.am/hy/press-releases/2019/05/07/us-armenia-strategic-dialogue/9532>

այցի ընթացքում: Համատեղ հայտարարությունն⁴⁴ ընդգծում է համագործակցության երկու հիմնական ուղղություններ՝ ժողովրդավարություն, բարեկեցություն, տարածաշրջանում կայունության հաստատում, անվտանգության ապահովում և հակամարտության լուծում: Ավելի ուշ՝ 2022 թ. հոկտեմբերին, Հայաստան - ԱՄՆ կոնգրեսականների այցի ժամանակ, ԱՄՆ Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի համանախազահ Ֆրենք Փալոնը նշեց, որ «անվտանգային ուղղությամբ ԱՄՆ-ն ակտիվ չի եղել, քանի որ Հայաստանում առկա է ռուսական ռազմաբազա, և Հայաստանն անդամակցում է ՀԱՊԿ-ին, որի կազմում է նաև Ռուսաստանը»⁴⁵:

Այս հայտարարության առումով կարևոր է նշել, որ այլ պետությունների հետ վերջին հինգ ռազմավարական գործընկերության օրենքների հիմքում (օրինակ՝ Ռուսաստան) հաճախ հղում է կատարվում 2017 թ. ընդունված ԱՄՆ հակառակորդներին պատժամիջոցներով հակազդելու մասին օրենքին (Countering America's Adversaries Through Sanctions Act, այսուհետ՝ Օրենք): Օրենքի նպատակն է գործադիր իշխանությանն օրենսդրորեն պարտադրել պատժամիջոցներ սահմանել Ռուսաստանի, Իրանի և Հյուսիսային Կորեայի հետ կարևոր ոլորտներում համագործակցող անձանց/կազմակերպությունների համար: Հայաստանի առումով հատկանշական է նույն Օրենքի 224-234 գլուխների առկայությունը, որոնք ԱՄՆ գործադիրին պարտավորեցնում են կիրառել առնվազն հինգ պատժամիջոցներ այն անձանց/կազմակերպությունների նկատմամբ, որոնք աջակցել են 1) Ռուսաստանի կողմից իրականացվող կիբեռհանցավորությանը, 2) Ռուսաստանի հում նավթի զարգացման ծրագրերին, 3) Ռուսաստանի այն կազմակերպություններին, որոնք փորձում են խուսափել պատժամիջոցներից, 4) Ռուսաստանի խողովակաշարերի զարգացման ծրագրերին, ինչպես նաև 5) այն անձանց և կազմակերպությունների նկատմամբ, որոնք ներգրավված են Ռուսաստանի *հետախուզական և պաշտպանական ոլորտների* հետ նշանակալի գործարքների մեջ (significant transaction):

Օրենքը կամ ԱՄՆ պետական դեպարտամենտը հստակ չի սահմանում նշանակալի գործարք եզրույթը՝ այն դիտավորյալ թողնելով ազատ՝ բայց իրավիճակի մեկնաբանելու համար: Միաժամանակ, սահմանվում է այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ նշանակալի գործարք կատարելը ներկայում կարող է դիտարկվել պատժամիջոցների կիրառման համար: Դրանք են մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զինավոր շտաբի զինավոր հետախուզական վարչությունը, Ռուսաստանի Դաշնության դաշնային անվտանգության ծառայությունը, Ռուսաստանի Դաշնության արտաքին հետախուզության ծառայությունը, ռազմաարդյունաբերական ոլորտի կազմակերպությունները և անվտանգային ոլորտի հետ կապված այլ կազմակերպություններ: Հատկանշական է,

⁴⁴ US State Department, May 2022, [online] <https://www.state.gov/2022-u-s-armenia-strategic-dialogue-joint-statement/>

⁴⁵ Անվտանգային հարցերում ԱՄՆ-ը Հայաստանում ակտիվ չի եղել, քայլ հիմա իրավիճակը փոխվում է. Ֆրենք Փալոն, Երևան, 2022, https://www.azatutyun.am/a/32089571.html?fbclid=IwAR2kFc-Uo5ARZJR_Wa0Dwx1eTvYiQfaoh8oC1ADKibaNzv-Q7ClIKNIP8c

որ 2020 թ. ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի հանդեպ կիրառված պատժամիջոցների համար իրավական հիմքն է հանդիսացել նույն օրենքը (S-400 հակաօդային համակարգերի ձեռքբերման համար)⁴⁶:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ (1) ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների կիրառումը այն անձանց նկատմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի աջակցել և համագործակցում են Ռուսաստանի Դաշնության հետ, ունի համապատասխան օրենսդրական հիմքեր, (2) օրենքի մեկնաբանումը դիտավորյալ բաց է թողնված՝ գործադիրին հնարավորություններ տալով ըստ իրավիճակի այն կիրարկելու համար: Միաժամանակ, կարելի է ենթադրել, որ (3) ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության զարգացման համար Հայաստանին անհրաժեշտ է դիտարկել Ռուսաստանի Դաշնության (այդ թվում՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում) հետ վերոնշյալ նշանակալի գործարքների ծավալները նվազեցնելու հարցը: Այս պարագայում դրական ազդակ կարող են հաղորդել զուտ քաղաքական որոշումները, օրինակ՝ Միրիայի Արարական Հանրապետությունից հայկական գորախմբի դուրս բերումը կամ Հայաստանի ՀԱՊԿ անդամակցությունից դուրս գալու գործընթացի մեկնարկը և այլն:

6) արգելքների հաղթահարման դեպում Հայաստանի համար հնարավորությունները

Միայն Հայաստանի կողմից օրենսդրական արգելքների հաղթահարման դեպքում իրատեսական կլինի ԱՄՆ գործադիր իշխանության և օրենսդիր իշխանությունների հետ աշխատանքներ վարելը, այդ թվում՝ լորրիստական, երկկողմ ռազմավարական գործընկերության մասին պայմանագրի/ակտի ուղղությամբ: Միաժամանակ, նման պայմանագրի կամ ակտի ընդունման դեպքում համագործակցության լայն հնարավորություններ կրացվեն ԱՄՆ արտաքին ռազմական ֆինանսավորման ծրագրի (The Foreign Military Financing program) շրջանակներում՝ ՀՀ գինված ուժերի կարողությունների զարգացման (The Authority to build the capacity of foreign security forces under section 333 of title 10, United States Code), պաշտպանական միջոցների (defense article), հավելյալ պաշտպանական միջոցների (excess defense articles, այն պաշտպանական գենքերի, որոնք ԱՄՆ-ն համարում է հավելյալ և առանց վճարի տրամադրում է գործընկերներին) ձեռքբերման, պաշտպանական ոլորտում համատեղ հետազոտական աշխատանքների⁴⁷ ուղղություններով: Արտոնություններն ավելի մանրամասն սահմանված են Արտաքին

⁴⁶ The United States Sanctions Turkey Under CAATSA 231, US State Department, December 14, 2020, <https://2017-2021.state.gov/the-united-states-sanctions-turkey-under-caatsa-231/index.html>

⁴⁷ “Cooperative Research and Development Agreements: NATO Organizations; Allied and Friendly Foreign Countries.” US Code, November 2022. [online] <https://uscode.house.gov/view.xhtml?req=granuleid%3AUSC-prelim-title10-section2350a&num=0&edition=prelim#:~:text=10%20USC%202350a%3A%20Cooperative%20research,allied%20and%20friendly%20foreign%20countries.>

աջակցության ակտի 517-րդ բանաձևում, որոնք ներկայացված են հաջորդ ենթագլխում՝ ԱՄՆ կողմից տրամադրվող ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակցի կարգավիճակի համատեքստում:

ԲԱԺԻՆ II

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱՏՕ-ԻՑ ԴՈՒՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ԱՄՆ-ի հետ ռազմավարական համագործակցության տեսանկյունից առանցքային կարևորություն ունի ԱՄՆ-ի կողմից ՆԱՏՕ-ից Դուրս Հիմնական Դաշնակից (ՆԴՀԴ) - Major-Non-NATO-Ally (MNNA) - ռազմաքաղաքական կարգավիճակի տրամադրումը: Վերջինս նախատեսված է այն պետությունների համար, որոնք Միացյալ Նահանգների համար ներկայացնում են «առանձնակի ռազմավարական նշանակություն»⁴⁸, ունեն ԱՄՆ կողմից «անվտանգային աջակցության կարիք»⁴⁹, սակայն «գտնվում են Հյուսիս-Ատլանտյան դաշինքից դուրս և/կամ չեն հավակնում անդամակցել վերոնշյալ դաշինքին»⁵⁰: Ըստ Էռլիյան, ՆԴՀԴ-ն ԱՄՆ կողմից մշակված առավել խորացված ռազմական և տիտղոսային քաղաքական նշանակություն ունեցող ռազմավարական գործընկերության ուրույն ձևաչափ է: Այս պահի դրությամբ, ԱՄՆ ՆԴՀԴ կարգավիճակ ունեցող պետություններն են Ավստրալիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Արգենտինան, Իսրայելը, Եգիպտոսը, Հորդանանը, Նոր Զելանդիան, Բրազիլիան, Կոլումբիան, Թունիսը, Բահրեյնը, Թաիլանդը, Ֆիլիպինները, Քուվեյթը, Պակիստանը, Մարոկկոն, Աֆղանստանը (կարգավիճակը դադարեցվել է 2022թ. հուլիսին) և Քաթարը⁵¹:

Սույն բաժնի նպատակն է ԱՄՆ ռազմական և ռազմատեխնիկական աջակցության հնարավորությունները քննելը՝ ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության զարգացման հեռանկարի շրջանակներում՝ ապագայում Հայաստանի Հանրապետության ոչ բլոկային դաշնակցի կարգավիճակ ստանալու հնարավոր հավակնությունների համատեքստում: Տվյալ ուսումնասիրությունն իրենից

⁴⁸ White House. 2015. Remarks by President Obama and President Essebsi of Tunisia after Bilateral Meeting 21 May, 2015. [online] <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2015/05/21/remarks-president-obama-and-president-essebsi-tunisia-after-bilateral-me>

⁴⁹ U.S. Code of 2017, Title 22, Chapter 32, §2321*j Authority to transfer excess defense articles*, amendments of 1987 and 1996. [https://www.gov.am/files/docs/4586.pdf] <https://www.govinfo.gov/content/pkg/USCODE-2017-title22/html/USCODE-2017-title22-chap32.htm>

⁵⁰ Նամակագրություն ԱՄՆ Պետքարտուղարության նախկին բարձրաստիճան աշխատակցի հետ: Անանուն, Սեպտեմբեր 2022.

⁵¹ Քաթարի Պետությանը ՆԴՀԴ տրամադրումը ներկայումս գրձնված մեջ է: Տես՝ ԱՄՆ Պաշտպանության Դեպարտամենտ 2022, 'Major Non-NATO Ally' Designation Will Enhance U.S., Qatar Relationship.

ներկայացնում է քննության ընթացքում ի հայտ բերված որակական տվյալների բովանդակային վերլուծություն, որը կառուցված է հետևյալ հետազոտական հարցի շուրջ՝

- ✓ *Ինչպես հասկանալ ԱՄՆ ՆԴՇԴ կարգավիճակը Հայաստանի արտաքին քաղաքականության և հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության զարգացման համատեքստում:*

Որպեսզի հնարավոր լինի բազմակողմանի պատասխանել այս հարցին, նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է ԱՄՆ ՆԴՇԴ-ն, և որոնք են այս կարգավիճակի ռազմական, քաղաքական և բյուրոկրատական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ինչ առավելություններ և թերություններ է իր մեջ պարունակում այս կարգավիճակը Հայաստանի անվտանգային մարտահրավերների և արտաքին քաղաքականության հետ համադրման պայմաններում:

1) Ինչ է ԱՄՆ ՆԴՇԴ (MNNA) ռազմաքաղաքական կարգավիճակը

ՆԴՇԴ կարգավիճակն առաջին անգամ պաշտոնական շրջանառության մեջ է դրվել նախագահ Ռոնալդ Ռեյգանի աղմինիստրացիայի կողմից՝ 1987 թ. «Ազգային Պաշտպանության Ակտի» (National Defense Authorisation Act of 1987)⁵² շրջանակներում: Մի շարք պետություններին տրամադրելով ոչ բլոկային դաշնակցի կարգավիճակ՝ վերջիններիս հնարավորություն էր տրվում մասնակցել 1986թ. գործող ՆԱՏՕ-ի Համատեղ հետազոտությունների և Զարգացման ծրագրին⁵³: Այս ծրագրի առանցքային նպատակը՝ ՆԱՏՕ-ի դաշնակիցների միջև պաշտպանական/անվտանգային համակարգերի և զինատեսակների, ինչպես նաև դրանց տեխնոլոգիաների փոխանակման, համատեղ հետազոտության, զարգացման ու արտադրության խթանումն էր: Չնայած ՆԴՇԴ-ում առկա «դաշնակից» արտահայտությանը, այն երկողմ հարաբերությունների համատեքստում չի ենթադրում դասական դաշնակցային՝ այն է հավաքական պաշտպանության պարտավորվածություն պարունակող պաշտոնական փաստաթղթի կնքում միջազգային հարաբերությունների երկու սուբյեկտների կողմից: Ուստի, այն համարվում է տիտղոսային և ունի քաղաքական կարգավիճակ ընդգծելու նպատակ: ՆԴՇԴ-ն մեկ սուբյեկտի կողմից մեկ այլ սուբյեկտին միակողմանի շնորհվող կարգավիճակ է, որն ընդգծում է տվյալ սուբյեկտի համար վերջինիս արտոնյալ դերը երկողմ ռազմավարական հարաբերություններում և հնարավորություն է ընձեռնում օգտվել մի շարք արտոնություններից, որոնք առկա են կարգավիճակը շնորհող սուբյեկտի տրամադրության տակ:

⁵² Ազգային պաշտպանության ակտն իրենից ներկայացնում է ֆեդերալ նշանակության ամենամյա օրենսդրական փաստաթուղթ, որը ենթադրում է ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի տարեկան բյուջեի և ծախսերի ծավալների հաստատում՝ ԱՄՆ Կոնգրեսի կողմից:

⁵³ Library of Congress. 1986. S.2638 - National Defense Authorization Act for Fiscal Year 1987; Sec. 1105 of 22 USC 2767a. [online] <https://www.congress.gov/bill/99th-congress/senate-bill/2638/text>

ՆԴՀԴ կարգավիճակի շպարտավորեցնող բնույթն ընդգծում է այս կարգավիճակը կրող պետության ոչ բլոկային առանձնահատկությունը, այլ կերպ ասած՝ ֆորմալ հավաքական անվտանգության պարտավորվածությունների բացակայությունը տվյալ պետության կողմից կամ նկատմամբ: Այստեղից էլ բխում է ՆԴՀԴ կարգավիճակի ԱՄՆ ռազմական, ռազմատեխնիկական և քաղաքական աջակցության հանձնառությունները, բայց ոչ հավաքական անվտանգության պարտավորվածություն իր ոչ բլոկային դաշնակցի նկատմամբ⁵⁴:

Ժամանակի ընթացքում և հատկապես 1990-ականների կեսերից սկսած, ՆԴՀԴ կարգավիճակը վերախմատավորվում և համալրվում է մի շարք «երկկողմ օգտակարություն պարունակող»⁵⁵ բաղադրիչներով, ինչն ԱՄՆ-ին իրավադարձական հնարավորություններ է ընձեռում ընդլայնելու համար իր ռազմական փոխգործակցության շրջանակը ՆԱՏՕ-ի համակարգից դուրս՝ անկախ, օպերատիվ և մարտական համատեղ միջոցառումների իրականացման, մասնագետների վերապատրաստման, համադրելի համակարգերի ներդրման, ինչպես նաև ոչ բլոկային դաշնակցի կարգավիճակը կրող պետությանը ամերիկյան ժամանակակից ռազմական արտադրանք և տեխնոլոգիաներ մատակարարելու համար: Օրենսդրական թարմացումները ԱՄՆ-ին հնարավորություն են տալիս նաև ներգրավվել տվյալ պետության ռազմական տեխնոլոգիական մտավոր ներուժի անվտանգության ոլորտին վերաբերող համատեղ գիտահետազոտական և արտադրական գործունեության մեջ, ինչպես նաև, որպես ոչ բլոկային դաշնակից, համատեղ կամ միջնորդավորված ուժ և ազդեցություն պրոյեկտել տվյալ պետության ռազմավարական միջավայրում: Այսպիսով, ԱՄՆ մեկնաբանության համաձայն, այս կարգավիճակը հիմնված է «win-win» փիլիսոփայության վրա⁵⁶, երբ ներգրավված երկու կողմերն են, չնայած համակարգային ասիմետրիային, օգտվում են համադրելի օգուտներից և հնարավորություններից՝ առանց միմյանց նկատմամբ ունենալու դասական պայմանագրահեն դաշինքներին բնորոշ հավաքական անվտանգության պարտավորվածություն:

2) Կարգավիճակի տրամադրման բյուրոկրատական գործընթացի առանձնահատկությունները

ՆԴՀԴ-ն խարսխված է ԱՄՆ օրենսդրական երկու անկյունաքարային ակտերի (օրենքների) վրա:

⁵⁴ Hamilton, S. Daniel. 2014. “The American Way of Partnership”, European Strategic Partnership Observatory. Working paper 6. 24 p. [Online]

https://www.egmontinstitute.be/app/uploads/2014/06/ESPO_WP6.pdf?type=pdf

⁵⁵ Jones, K. Debora. 1998. “Major Non-NATO Ally Status for Jordan: National Security or Peace Process Politics?”, National Defense University, National War College. Report. [Online]

<https://apps.dtic.mil/sti/pdfs/ADA441460.pdf>

⁵⁶ Hamilton, S. Daniel. 2014. “The American Way of Partnership”, European Strategic Partnership Observatory. Working paper 6. 24 p. [Online] https://www.egmontinstitute.be/app/uploads/2014/06/ESPO_WP6.pdf?type=pdf

Առաջինը՝ 1961 թ. դեռևս նախագահ Ջոն Քենեդիի ժամանակ ընդունված և ներկայումս փոփոխություններով գործող Արտաքին աջակցության ակտ (Foreign Assistance Act) կոչվող օրենքն է, որը կարգավորում է ԱՄՆ կողմից դաշնակիցներին և ռազմավարական կամ ռազմական նշանակություն ունեցող գործընկերներին «պաշտպանական կամ ռազմական նշանակության միջոցների» (defense articles) և «պաշտպանական կամ ռազմական ծառայությունների» (defense services) տրամադրումը և դրանց արդյունավետ ներդրումն ու հարմարեցումը այդ պետությունների գինված ուժերում⁵⁷: Այս օրենսդրական Ակտը համարվում է ԱՄՆ «Արտաքին հարաբերություններ և կապեր» Օրենքի 22-րդ հոդվածի բաղկացուցիչ մաս:

Երկրորդը՝ 1976 թ. փոփոխություններով գործող Զենքի արտահանման վերահսկման օրենք (Arms Export Control Act) կոչվող օրենսդրական ակտն է: Այն միտված է փոխլրացնելու և որոշակիորեն հստակեցում մտցնելու վերոնշյալ 1961թ. օրենքում՝ իրավունք տալով ԱՄՆ նախագահին վերահսկել պաշտպանական կամ ռազմական նշանակության արտադրանքի և պաշտպանական կամ ռազմական ծառայությունների արտահանումը կամ ներմուծումը⁵⁸:

ՆԴՀԴ կարգավիճակը շնորհվում է կամ ԱՄՆ նախագահի կողմից՝ Պետքարտուղարության և/կամ Պաշտպանության դեպարտամենտի առաջարկի հիման վրա (գործադիր մակարդակ), կամ ԱՄՆ Կոնգրեսի գործիքակազմի միջոցով, եթե համապատասխան օրենսդրական երկուսակցական նախաձեռնությամբ (օրենսդիր մակարդակ), Կոնգրեսն առաջարկում կամ պարտավորեցնում է նախագահին այս կամ այն պետությանը շնորհել ՆԴՀԴ կարգավիճակ՝ ելնելով հստակ քաղաքական կամ ռազմաքաղաքական դրդապատճառներից և հիմնավորումներից:

ԱՄՆ «Արտաքին հարաբերություններ և կապեր» օրենքի 22-րդ հոդվածի 2321կ կետի համաձայն՝ ԱՄՆ նախագահը պետքարտուղարությանը կարգադրում է առնվազն երեսուն օր առաջ ԱՄՆ Կոնգրեսին իրազեկել նախագահի կողմից, Արտաքին աջակցության ակտի 517 բանաձեկի շրջանակներում, տվյալ պետությանը ՆԴՀԴ կարգավիճակ շնորհելու նպատակի մասին: Միևնույն ժամանակ, ԱՄՆ «Զինված ուժեր» օրենքի 10-րդ հոդվածի շրջանակներում, ԱՄՆ նախագահը կարգադրում է Պաշտպանության դեպարտամենտին տվյալ պետությանը տրամադրել ՆԴՀԴ կարգավիճակ՝ այդ գործընթացը համակարգելով պետքարտուղարության հետ: Դրանից հետո, ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտն իրավունք է ստանում ԱՄՆ նորանշանակ ոչ բլոկային դաշնակից պետության հետ կնքել համապատասխան հուշագրեր կամ այլ պաշտոնական փաստաթղթեր՝ միտված ՆԴՀԴ պետության ԶՈՒ մարտունակության, պաշտպանական հնարավորությունների բարձրացմանը, ինչն էլ հնարավորություն է ընձեռում տվյալ պետությանն օգտվել ԱՄՆ ռազմական, ռազմատեխնիկական, ֆինանսական և ռազմատեխնոլոգիական աջակցության կամ համատեղ համագործակցության առավելություններից:

⁵⁷ ԱՄՆ Կառավարություն, FOREIGN ASSISTANCE ACT OF 1961, Sec. 516, As Amended Through P.L. 117-103, Enacted March 15, 2022. [Online] <https://www.govinfo.gov/content/pkg/COMPS-1071/pdf/COMPS-1071.pdf>

⁵⁸ Office of the Law Revision Council, United States Code, Arms Export Control Act of 1976, 39 Chapter of 22 Title. [Online] <https://uscode.house.gov/view.xhtml?path=/prelim@title22/chapter39&edition=prelim>

Այդ նույն օրենքի 2350a «Համատեղ հետազոտություն և զարգացում» կետի համաձայն՝ Պաշտպանության դեպարտամենտն ու Պետքարտուղարությունը պարտավորվում են յուրաքանչյուրն իր մասով գեկույց ներկայացնել ԱՄՆ Սենատի Զինված ուժերի հանձնաժողովին և Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների հանձնաժողովին՝ ՆԴՀ կարգավիճակը կրող պետության հետ փոխործակցության բովանդակության, չափանիշերի, ինչպես նաև նախատեսվող ռազմական, անվտանգային, ռազմատեխնիկական և ռազմատեխնիկական համագործակցության շրջանակների և աջակցության չափերի մասին⁵⁹:

ԱՄՆ նախագահը նաև իրավունք ունի առնվազն երեսուն օր առաջ տեղեկացնել ԱՄՆ Կոնգրեսին տվյալ պետությանը ՆԴՀ կարգավիճակից զրկելու որոշման վերաբերյալ՝ Պետքարտուղարության և/կամ Պաշտպանության դեպարտամենտի կողմից ներկայացված հիմնավորումների հիման վրա⁶⁰: Բայց այդ, համապատասխան օրենսդրական նախաձեռնության շրջանակներում, ԱՄՆ Կոնգրեսը նույնպես իրավունք ունի պահանջել ԱՄՆ կառավարությունից դադարեցնել ՆԴՀ կարգավիճակը տվյալ պետության նկատմամբ, եթե այդ պետության կողմից վարկող արտաքին քաղաքականությունը (օրինակ՝ Պակիստանի պարագայում) կամ այնտեղ տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները (օրինակ՝ Աֆղանստանի պարագայում) հակասում կամ հակադրության մեջ են ԱՄՆ շահերին, կամ մարտահրավեր են նետում վերջինիս որդեգրած քաղաքական արժեհամակարգին:

3) Կարգավիճակի չափանիշները

Ակնհայտ է, որ ԱՄՆ ՆԴՀ կարգավիճակին հավակնող թեկնածու պետությունը պետք է համապատասխանի որոշակի համակարգային, ներկառուցվածքային, արժեհամակարգային և քաղաքական չափանիշների: Դեռևս 1988թ. Պաշտպանության դեպարտամենտը ԱՄՆ Սենատի Զինված ուժերի կոմիտեին էր ներկայացրել ՆԴՀ կարգավիճակի թեկնածու պետությունների համար նախատեսված որոշակի պայմանական չափանիշների ցուցակ⁶¹, որը 1996 թ. և 2015թ. ենթարկվել է որոշակի վերահիմնաստավորման՝ ենելով փոփոխվող աշխարհաքաղաքական իրողություններից: Հատկանշական է, որ այս պահին գոյություն չունի որևէ մշակված համընդհանուր չափանիշների ցանկ, ինչը հնարավորություն է տալիս ԱՄՆ տարբեր պետական ինստիտուտներին ընդգծել իրենց իսկ ոլորտին համապատասխանող չափանիշների առաջնահերթությունները: Միևնույն ժամանակ, չափանիշների

⁵⁹ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի օրենքի գրասենյակ, ԱՄՆ Օրենքի 10-րդ հոդվածի կետ 2350a. ըստ մարտ 2022 թ. [online] <https://uscode.house.gov/view.xhtml?req=granuleid:USC-prelim-title10-section2350a&num=0&edition=prelim>

⁶⁰ Նամակագրություն ԱՄՆ Պետքարտուղարության նախկին բարձրաստիճան աշխատակցի հետ: Անանուն, սեպտեմբեր 2022.

⁶¹ Jones, K. Debora. 1998, Major Non-NATO Ally Status for Jordan: National Security or Peace Process Politics? National Defense University, National War College. Report. [Online]

<https://apps.dtic.mil/sti/pdfs/ADA441460.pdf>

պայմանականությունը նաև դաշտ է բացում ոչ բլոկային դաշնակցի կարգավիճակին հավակնող պետության համար՝ կարգավիճակ ստանալու գործընթացում իր պայմանները բանակցելի դարձնելու առումով, և ըստ էութայն, տվյալ պետությունը ձեռք է բերում ԱՄՆ որոշում կայացնող համակարգի վրա լորֆիստական միջոցներով ազդելու, միմյանց պետական շահերը արդյունավետ համադրելու և ԱՄՆ օրենսդիր և գործադիր մարմինների շրջանում ի նպաստ իրեն մաներելու հնարավորություն:

Այսպիսով՝ ԱՄՆ ՆԴՀԴ կարգավիճակ ստանալու պայմանական չափանիշները ընդհանուր առմամբ հետևյալն են.

- Տվյալ պետությունը, որը չի ցանկանում անդամակցել Հյուսիս-Ատլանտյան դաշինքին կամ գտնվում է տվյալ դաշինքի աշխարհագրական և աշխարհաքաղաքական շառավիղից հեռու, պետք է ունենա կամ կարողանա ձևավորել ԱՄՆ քաղաքական շահերի համար յուրահատուկ հետաքրքրություն կամ ռազմավարական նշանակություն: Այն, միևնույն ժամանակ, մի կողմից պետք է ցուցադրի ԱՄՆ հետ ռազմավարական փոխգործակցության մեջ մտնելու ցանկություն և վարքագիծ՝ հետաքրքրված լինելով որոշակիորեն համադրել իր և ԱՄՆ շահերը իր տարածաշրջանային միջավայրում, մյուս կողմից այն պետք է հետապնդի ԱՄՆ չափանիշներին համապատասխան տվյալ պետության անվտանգային համակարգի ստանդարտիզացում և փոխգործունակության բարձրացում՝ զուգահեռ զարգացնելով իր անվտանգային համակարգի համադրելիությունը ՆԱՏՕ-ի որոշ պետությունների համակարգերի հետ: (*Պետքարտուղարության, Պաշտպանության դեպարտամենտի չափանիշ*)⁶²:
- Տվյալ պետությունը պետք է ունենա ժողովրդավարական կառավարման համակարգ և արժեհամակարգ կրող հանրություն, իսկ քաղաքական իշխանությունները՝ ԱՄՆ հետ ռազմավարական մակարդակի փոխգործակցության իրական/բովանդակային նպատակներ: Այն չպետք է լինի որևէ բլոկի անդամ, որը ենթադրում է հավաքական անվտանգության պայմանագրահեն ռազմական կամ ռազմաքաղաքական պարտավորվածություններ: (*ԱՄՆ Կոնգրեսի կողմից նշանակման համար նախատեսված տարրերակվող չափանիշ*)⁶³:
- Կարգավիճակի հավակնող պետությունը պետք է կիսի ԱՄՆ միջազգային անվտանգային միջավայրի ընդհանուր տեսլականը՝ ձգտելով իր ներդրումն ունենալ միջազգային անվտանգության ամրապնդմանն ու օրենքի վրա հիմնված, ազդեցության գոտիները մերժող, առավել կանխատեսելի և

⁶² Նամակագրություն ԱՄՆ Պետքարտուղարության նախկին բարձրաստիճան աշխատակցի հետ: Անանուն, հոկտեմբեր, 2022թ.

⁶³ Նամակագրություն ԱՄՆ Կոնգրեսի Ստորին Պալատի ներկայացուցչի հետ: Անանուն: Հոկտեմբեր, 2022թ.

ժողովրդավարական միջազգային աշխարհակարգ կառուցելու հարցում: (*Պետքարտուղարության և Կոնտրեսի պայմանական չափանիշ*)⁶⁴:

- Տվյալ պետությունը այդ պահին պետք է կիրառության մեջ ունենա կամ ցանկություն ունենա լայն կիրառության մեջ դնել ԱՄՆ անվտանգային համակարգեր, տեխնոլոգիաներ և/կամ ռազմական միջոցներ: (*Պաշտպանության դեպարտամենտի չափանիշ*):
- Տվյալ պետությունը իր ներուժով պետք է ցանկանա աջակցել ԱՄՆ կոնվենցիոն պաշտնապանական միջոցների մոդերնիզացիային, ինչպես նաև՝ համատեղ մասնակցել անվտանգային-ռազմական ոլորտում բարդ նորարարական հետազոտությունների իրականացմանն ու զարգացմանը (*Պաշտպանության դեպարտամենտի չափանիշ*):
- Թեկնածու պետության պաշտպանական ոլորտի ինստիտուտները պետք է ունենան ԱՄՆ գործընկեր կառույցների հետ ռազմավարական հարաբերություններ ունենալու և դրանք խորացնելու առաջնահերթություն, որի արդյունքում հնարավոր է դառնում ԱՄՆ պաշտպանական, ռազմական համակարգերի և դրա բաղադրիչների փորձի հիման վրա թեկնածու պետություններում դրանց տեղայնացումն ու արդյունավետ ներդրումը: (*Պաշտպանության դեպարտամենտի չափանիշ*):

4) Կարգավիճակի գուտ ռազմական նշանակությունը

1996-2001 թթ. ՆԴՀԴ կարգավիճակին վերաբերող օրենսդրական լրացումների արդյունքում ռազմավարական հարաբերությունների այս ձևաչափը հզորացավ մի շաբաթ հստակ առավելությունների և արտոնությունների շնորհիվ:

Այսպիսով, Արտաքին աշակցության ակտի 517-րդ բանաձևից բխող արտոնություններից են՝

- ԱՄՆ Արտաքին ռազմական ֆինանսավորման (Foreign Military Financing) հնարավորություններից օգտվելու իրավունքն, այդ թվում ռազմաարդյունաբերական համալիրի կոմերցիոն ֆինանսավորման նպատակներով:
- Ռազմական կամ պաշտպանական տեխնոլոգիաների հետազոտության, զարգացման, փորձարկման և գնահատման համար ֆինանսական միջոցներ ստանալու իրավունքը:
- Արտոնալ պայմաններով՝ անվճար կամ արտոնյալ վարկային պարմաններով «ավելցուկ ռազմական միջոցներ» (excessive defense articles), այսինքն՝ ԱՄՆ արտադրության գենք, զինամթերք, տարատեսակ նշանակության ռազմական տեխնիկա, տեխնոլոգիաներ և/կամ այլ միջոցներ ձեռք բերելու իրավունքն, այդ

⁶⁴ Նամակագրություն ԱՄՆ Պետքարտուղարության նախկին բարձրաստիճան աշխատակցի հետ: Անանուն, Հոկտեմբեր, 2022թ.: Նամակագրություն ԱՄՆ Կոնգրեսի Ստորին Պալատի ներկայացուցչի հետ: Անանուն: Հոկտեմբեր, 2022թ.

թվում՝ չհարստացված ուրան պարունակող զինամթերքի ձեռքբերման թուլտվությունը:

- ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտին պատկանող ռազմական գույքի՝ ռազմական միջոցների ռեզերվային պահուստների՝ (DoD War Reserve Stockpiles) սեփական տարածքում տեղակայելու իրավունքը:
- ԱՄՆ ԶՈՒ հետ համատեղ շտաբային և դաշտային գորավարժություններ, համատեղ խաղարկային օպերացիաներ մշակելու և մարտական պարապմունքներ անցկացնելու իրավունքը:

Նույն Օրենքի 10-րդ հոդվածից բխող արտոնություններն են՝

- Ոչ բլոկային դաշնակից պետության ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների, ԱՄՆ ռազմական գիտահետազոտական պայմանագրերի մրցույթներին մասնակցելու իրավունքը:
- Ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների համատեղ լարորատոր, գիտահետազոտական գործունեության և արտադրանքի մասնակցության իրավունքը:
- Ռազմատեխնիկական և տեխնոլոգիական համատեղ գիտահետազոտական գործունեության համար համապատասխան սարքավորումների, նորարարությունների փորձարկման համար արտոնյալ պայմաններով վարկ ստանալու իրավունքը:
- Արբանյակային, ավտոնոմ և/կամ այլ բարձր տեխնոլոգիական համակարգերի և ծրագրերի՝ ԱՄՆ-ից արտահանման լիցենզիաների արտոնյալ իրավունքը:
- Հակաահաբեկչական նպատակներով ԱՄՆ համապատասխան կառույցների հետ համատեղ միջոցառումների, արագ հայտնաբերման, հատուկ պատրաստության միջոցների ձեռքբերման իրավունք:

5) Կարգավիճակի քաղաքական նշանակությունը

Հստ ԱՄՆ Պետքարտուղարության պաշտոնական տեղեկության՝ «ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակից կարգավիճակի տրամադրումը հզոր խորհրդանիշն է այն մտերիմ հարաբերությունների, որն ԱՄՆ կիսում է այդ կարգավիճակը կրող պետությունների հետ՝ ցուցադրելով ԱՄՆ խորը հարգանքն այդ պետությունների [շահերի և անվտանգության] նկատմամբ»⁶⁵: Ինչպես արդեն շեշտվեց, ՆԴՇ կարգավիճակը չի ենթադրում ԱՄՆ կողմից հավաքական անվտանգության կամ պաշտպանության ուղիղ պարտավորածություններ, ինչպիսիք առկա են ՆԱՏՕ-ի շրջանակներում, սակայն այն լայն հնարավորություններ է տալիս ռազմական, անվտանգային, տեխնոլոգիական ոլորտներում և ունի միջազգային հարաբերություններում առանձնակի քաղաքական նշանակություն: Քաղաքական իմաստով այս կարգավիճակն իրենից ներկայացնում է արտաքին քաղաքականություն վարելու գործիք, որը, որպես շարունակական

⁶⁵ U. S. Department of States, 2018, Bureau of Political-Military Affairs, *Major Non-Nato Ally: fact sheet*. [online] <https://www.state.gov/major-non-nato-ally-status/>

ոազմաքաղաքական փոխգործակցության մոդել, սահմանափակված չէ աշխարհագրական կամ նույնիսկ արժեհամակարգային սահմաններով:

Հորդանանի, Թայլանդի, Թունիսի, Եգիպտոսի, Ավստրալիայի, Արգենտինայի և Հարավային Կորեայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ զուտ քաղաքական իմաստով, ՆԴՇԴ կարգավիճակի տրամադրումը հանգեցնում է միջազգային հարթակում տվյալ պետության վարկանիշի և քաղաքական արժեկշրի բարձրացմանը: Տվյալ պետությունը ԱՄՆ աշխարհաքաղաքական պլանավորումների և քաղաքականության մեջ ձեռք է բերում նշանակություն և դերակատարություն՝ քաղաքական խնդիրների բաժանման (issue-splitting), բեռի բաժանման (burden-sharing) տրամաբանության շրջանակներում երկկողմ և տարածաշրջանային գործընթացներում համատեղ, համակարգված քաղաքականություն վարելու տեսանկյունից:

ՆԴՇԴ կարգավիճակը քաղաքական իմաստով ենթադրում է, որ տվյալ պետությունն իր տարածաշրջանային միջավայրում վայելում է ԱՄՆ քաղաքականության վստահությունը, և որ այդ պետության շահերին ու տարածաշրջանում դերակատարություն և գործառույթ ստանձնելու հավակնություններին ԱՄՆ կողմից աշխարհաքաղաքականության պլանավորման մեջ տրվում է առաջնահերթություն: Բացի այդ, կարգավիճակը քաղաքական առումով դրական ազդանշան և ձգողական ուժ է՝ ԱՄՆ ականդական դաշնակիցների և նույն ոչ բլոկային դաշնակցի կարգավիճակը կրող տասնյակ այլ պետությունների համար:

ԱՄՆ ՆԴՇԴ կարգավիճակն ունի երկու ճյուղավորում: Մեկը դասական կարգավիճակից առավել բարձր՝ Հիմնական ռազմավարական գործընկեր (Major Strategic Partner) դասակարգումն է, որը ԱՄՆ Կոնգրեսի կողմից տրամադրվել է Խրայելին՝ 2013 թ. օրենսդրական ակտի համաձայն և հաստատվել պետության նախագահի կողմից⁶⁶: Մյուս կարգավիճակային ճյուղավորումը ենթադրում է դասական ՆԴՇԴ կարգավիճակից որոշակի նվազ՝ Հիմնական պաշտպանական գործընկեր (Major Defense Partner) դասակարգումը, որն էլ 2018թ. ԱՄՆ 22-րդ օրենսդրական կողի թարմացման արդյունքում ստացել է Հնդկաստանը՝ ԱՄՆ հետ ռազմավարական, ռազմական և անվտանգային ոլորտում համատեղ պլանավորման, ռազմական նշանակության արտադրության և ռազմական տեխնոլոգիաների ուղղությամբ համատեղ հետազոտությունների և տեղեկատվության փոխանակման որոշակի սահմանափակումներով:

⁶⁶ U.S. Congress. 2014. S.462 - United States-Israel Strategic Partnership Act of 2013, [online] <https://www.congress.gov/bill/113th-congress/senate-bill/462/text>



Հեղինակ՝ Արմինե Մարգարյան, ռազմաքաղաքական հարցերով փորձագետ:

Արմինեն աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ Անվտանգության խորհրդում, որպես գրասենյակի ղեկավար, իսկ մինչ այդ՝ որպես Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական, ՀՀ արտաքին գործերի նախարարության Սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության փորձագետ, ԱՊՀ վարչության ռեժիսոր:

Արմինեն սովորել է ՌԴ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի «Համաշխարհային տնտեսություն» ֆակուլտետում, միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում է ստացել Երևանի Հրայա Աճառյան համալսարանում և մասնակցել է մասնագիտական փորձառության հարստացման ծրագրերի՝ ժնիվի անվտանգության քաղաքականության կենտրոնում (GCSP), Զորօ Մարշալի անվտանգային խնդիրների Եվրոպական կենտրոնում, ՆԱՏՕ-ի դպրոցում, Զորգիայի համալսարանի Միջազգային անվտանգության և ռազմավարական նշանակության ապրանքների արտահանման վերահսկման կենտրոնում, Նիդերլանդների «Քլինգենդալ» միջազգային հարաբերությունների խնստիտուտում և այլն:

Արմինեն հանդես է գալիս ռազմաքաղաքական ոլորտի գարգացումներն ու խնդիրները լուսաբանող հարցազրույցներով, հետազոտություններով, դաստիարակություններով և դասախոսություններով:



Արեգ Քոչինյան, պատմաբան, քաղաքականության հետազոտական կենտրոնի նախագահ:

Արեգն աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակում, որպես ԱԽ քարտուղարի խոսնակ (2018-2020), ՀՀ Սյունիքի մարզի Զարգացման և ներդրման հիմնադրամում, որպես սոցիալական ու կրթական ծրագրերի գլխավոր համակարգող (2017-2018 թթ.), «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոնում, որպես Կենտրոնի նախագահ (2016-2018 թթ.), «Ապագան Քոնն է» հասարակական կազմակերպությունում, որպես ծրագրերի համակարգող (2013-2016 թթ.):

Արեգը սովորում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում, ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրան, բակալավրիատը և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտություն մասնագիտության բակալավրիատը:

Արեգի հետազոտական հետաքրքրությունները ներառում են անվտանգային քաղաքականությունը, արտաքին քաղաքականությունը, հասարակությունների անցումային գործընթացները, ընտրանու դերը հասարակական փոխհարաբերություններում:

Հանդես է գալիս հարցազրույցներով, հոդվածներով, վերլուծություններով, պյունյակներով և դասախոսություններով: Բազմաթիվ միջազգային և հայկական համաժողովների, գիտաժողովների և կրթական ծրագրերի մասնակից է՝ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի շրջանավարտ, Պրահայի Կարլի Համալսարանի «ՏՔՀ ամերիկյան ինստիտուտի» շրջանավարտ և այլն:

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ VERSUS ՄԱՆԵՎՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատության սույն գլխի նպատակն է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (հետայսու՝ ՀԱՊԿ կամ Կազմակերպություն) եվոլյուցիոն փուլերը քննելու միջոցով երևան հանել Կազմակերպության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած այն պարտավորությունները, որոնք, թեպետ, Հայաստանի կողմից դիտարկվել և/կամ դիտարկվում են իր տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը հավաքական հիմունքներով ապահովելու տեսանկյունից, միևնույն ժամանակ՝ հակոտնյա են Հետազոտության առաջին գլխում դիտարկված հնարավորությունների հետ: Ըստ այդմ, սույն գլխում կատարված հետազոտությունը կպատասխանի ներքոնշյալ հարցերին՝

- ✓ արդյոք Հայաստանի Հանրապետության անդամակցությունը՝ ՀԱՊԿ-ին համատեղելի է սույն աշխատության առաջին գլխում ներկայացված հնարավորությունների հետ, և
- ✓ որքանո՞վ է ՀԱՊԿ անդամակցությունը՝ Հավաքական անվտանգության համակարգի միջոցով (հետայսու՝ ՀԱՀ), ՀԱՀ ուժերի և միջոցների կիրառմամբ, Պայմանագրի մասնակից պետությունների Հավաքական անվտանգության հիմնական սկզբունքների կիրարկմամբ և Հավաքական պաշտպանության իրավունքի իրացմամբ, ապահովել և/կամ ապահովում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, սուվերենությունն ու պաշտպանունակությունը:

Հավաքական անվտանգություն՝ VERSUS մաներականություն գլուխը բաղկացած է երկու բաժիններից, որոնք, իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների: Առաջին բաժինը կրում է Պայմանագրից դեպի Կազմակերպություն խորագիրը և ներառում է ՀԱՊԿ շրջանակներում համաձայնեցված և ընդունված կանոնադրական փաստաթղթերի հետազոտություն և վերլուծություն: Երկրորդ բաժինը կրում է Ռազմատեխնիկական համագործակցության բնույթը ու էռլայունը խորագիրը և ներառում է ՀԱՊԿ ՀԱՀ միջոցների և ուժերի, ինչպես նաև ՀԱՊԿ և հայուսական երկնորմ շրջանակներում իրականացվող ռազմատեխնիկական համագործակցության հետազոտություն և վերլուծություն:

ԲԱԺԻՆ I ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԴԵՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժինը բաղկացած է չորս ենթաբաժնից, որտեղ կքննվեն 1) Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը, 2) Հավաքական անվտանգության

պայմանագրի մասնակից պետությունների հավաքական անվտանգության հայեցակարգը 3) ՀԱՊԿ կանոնադրությունը և 4) Մինչև 2025թ. ժամանակահատվածի համար ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարությունը:

1) Հավաքական անվտանգության մասին Պայմանագիր

ՀԱՊԿ-ը ռազմաքաղաքական կառույց է, որը ստեղծվել է 1992թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի⁶⁷ (հետայսու՝ Պայմանագիր) հիման վրա: Կազմակերպության անդամներն են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը և Տաջիկստանը:

Պայմանագիրը ստորագրվել է 1992թ. մայիսի 15-ին, Տաջիկստում՝ Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Ուզբեկստանի նախագահների կողմից: 1993թ. Պայմանագրին միացան նաև Ադրբեյջանը, Վրաստանն ու Բելառուսը: Պայմանագրին ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20-ին: 1999 թ. ապրիլի 2-ին, Մոսկվայում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի նախագահները ստորագրեցին Պայմանագրի երկարաձգման արձանագրությունը, որը նախատեսում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ Պայմանագրի ժամկետի ավտոմատ երկարաձգման նորմ: Ադրբեյջանը, Վրաստանը և Ուզբեկստանը հրաժարվեցին ստորգրել Պայմանագրի երկարաձգման արձանագրությունը:

Պայմանագրի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվել են չանդամակցել ռազմական միուրյունների կամ չմասնակցել պետությունների որևէ խմբավորման, ինչպես նաև գործողությունների՝ ուղղված մասնակից որևէ պետության դեմ⁶⁸: Պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ մեկ կամ մի քանի մասնակից պետությունների անվտանգությանը, կայունությանը, տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը սպառնացող կամ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում մասնակից պետությունները պետք է իրենց դիրքորոշումները համակարգելու նպատակով անհապաղ գործողության մեջ դնեն համատեղ խորհրդակցությունների մեխանիզմը, մշակեն և ձեռնարկեն միջոցներ նման մասնակից պետություններին օգնություն ցուցաբերելու համար՝ առաջացած սպառնալիքը վերացնելու նպատակով:

Պայմանագրի 4-րդ հոդվածը նախատեսում է հավաքական պաշտպանության պատասխանատվություն: Մասնավորապես՝ եթե մասնակից պետություններից մեկը ենթարկվում է ազրեսիայի, դա մասնակից պետությունների կողմից դիտվում է որպես ազրեսիա Պայմանագրի բոլոր մասնակից պետությունների նկատմամբ, և բոլոր մյուս մասնակից պետությունները, այդ մասնակից պետության խնդրանքով, պարտավորվում են անհապաղ նրան տրամադրել անհրաժեշտ օգնություն, ներառյալ

⁶⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁶⁸ Տես՝ Պայմանագրի 1-ին հոդվածը:

ոազմական, ինչպես նաև աջակցություն ցուցաբերել իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով՝ ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան հավաքական պաշտպանության իրավունքի իրականացման կարգով: 2-րդ և 4-րդ հոդվածների հիման վրա ՀԱՀ ուժերի և միջոցների օգտագործման վերաբերյալ որոշումը կայացվում է Պայմանագրի մասնակից պետությունների ղեկավարների կողմից: Դրանց օգտագործումը մասնակից պետությունների տարածքից դուրս կարող է իրականացվել բացառապես ի շահ միջազգային անվտանգության՝ ՄԱԿ Կանոնադրության և Պայմանագրի մասնակից պետությունների օրենսդրության համաձայն⁶⁹: Պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածները հանդիսանում են Կազմակերպության կազմավորման, գործունեության, զարգացման խարիսխը, և Պայմանագրին հաջորդիկ բոլոր կանոնադրական և ոլորտային փաստաթղթերը՝ միտված գործուն ՀԱՀ-ի ձևավորմանը, ոլորտային համագործակցության խորացմանն ու հավաքական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ միջոցների և մեխանիզմների ներդրմանը, անդամ պետությունների կողմից բանակցվել և ընդունվել են հենվելով այդ հոդվածների ոգու և տարի վրա:

Պայմանագիրը ստորագրելիս մասնակից պետություններն արձանագրել են, որ այն ուղղված չէ երրորդ երկրների դեմ և չի ազդում այլ պետությունների հետ մասնակից պետությունների կնքած գործող երկկողմ և բազմակողմ պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած իրավունքների և պարտավորությունների վրա, ինչպես նաև մասնակից պետությունների՝ ՄԱԿ կանոնադրությանը համապատասխան ագրեսիվից անհատական եւ հավաքական պաշտպանության իրավունքի վրա⁷⁰: Միևնույն ժամանակ, Կողմերը պարտավորվել են չկնքել Պայմանագրի հետ անհամատելի միջազգային համաձայնագրեր: Սույն դրույթը կրում է առանցքային նշանակություն ՀՀ պատկան մարմինների կողմից ՀԱՊԿ մարմիններում Հայաստանի մասնակցության մակարդակը վերանայելու և/կամ Կազմակերպությունում Հայաստանի անդամակացությունը շարունակելու/դադարեցնելու վերաբերյալ քաղաքական որոշում կայացնելու համատեքստում: Աշխատությունն առաջարկում է նման որոշում կայացնելուն միտված գործնթացում սույն դրույթը դիտարկել ՀՀ տարածքային ամբողջականության և սուվերենության պաշտպանության գործում ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ապահովման սկզբունքների իրացման փաստի և/կամ կիրարկման արդյունավետության և/կամ անարդյունավետության տեսանկյունից, և դիտարկման արդյունքները քննել (և՝ բացասական, և՝ դրական) սույն հետազոտության ներածական մասում ներկայացված հայեցակարգային դրույթներից բխող հնարավորությունների և առաջին զյուտ հետազոտված հնարավորությունների և սահմանափակումների համատեքստում:

⁶⁹ Տես՝ Պայմանագրի 6-րդ հոդվածը:

⁷⁰ Տես՝ Պայմանագրի 8-րդ հոդվածը:

2) Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների հավաքական անվտանգության հայեցակարգ (1995թ.)

Պայմանագրին հաջորդող առաջին հայեցակարգային նշանակության փաստաթուղթը, որն ընդունվեց Ալմաթիում Հավաքական անվտանգության խորհրդի (հետայսու՝ ՀԱԽ) 1995 թ. փետրվարի 10-ի որոշմամբ, Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների հավաքական անվտանգության հայեցակարգն էր⁷¹ (հետայսու՝ Հայեցակարգ): *Հայեցակարգը սահմանում է Պայմանագրի մասնակից պետությունների ռազմական քաղաքականության և Հավաքական անվտանգության ապահովման հիմունքները, ինչպես նաև՝ ՀԱՀ ստեղծման հիմնական ուղղություններն ու փուլերը:* Սույն հայեցակարգը կդիտարկվի 1997թ. ՌԴ կողմից ընդունված ազգային անվտանգության հայեցակարգի⁷² հետ համեմատական քննության համատեքստում՝ ներկայացնելու համար Հայեցակարգում առկա դիրքորոշումների ձևավորման համապարփակ պատկերը:

Այսպես՝ Պայմանագրի բոլոր մասնակից պետությունները պայմանավորվեցին իրականացնել համաձայնեցված քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ միջոցառումներ՝ միտված Հայեցակարգի դրույթների իրականացմանը: Ռազմական քաղաքականության ոլորտում Կողմերը պայմանավորվեցին գործարկել խորհրդակցությունների անցկացման մեխանիզմ, որի նպատակը դիրքորոշումների համակարգումն ու անվտանգության ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացումն էր: Եթե նման անհրաժեշտություն առաջանար ԱՊՀ այլ անդամ պետությունների մասով, ապա, խորհրդակցությունները պետք է ներառեին ռազմական համագործակցության և ռազմական շինարարությանը վերաբերող խնդիրների լուծման ժամանակ փոխադարձ օգնություն տրամադրելու հարցերը: Վերոնշյալ դիրքորոշումը՝ հիմնված ԱՊՀ այլ անդամ պետություններին փոխադարձ օգնություն ցուցաբերելու մոտեցման վրա, միանգամայն օրինաշափ էր, քանի որ Պայմանագիրն առհասարակ դիրքավորվում և դիտարկվում էր որպես Խորհրդային միության փլուզումից հետո ԱՊՀ համակարգում ներառված պետությունների՝ միասնական պաշտպանական տարածք պահպանելու նպատակադրվածություն: Ավելին՝ Պայմանագրի մասնակից պետությունների ռազմական քաղաքականության հիմքում ընկած էր այն գաղափարը, ըստ որի մասնակից պետությունները միավորված էին ռազմաքաղաքական և տնտեսական շահերի, ձևավորված ռազմատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների առումով և ձգուում էին վարել համաձայնեցված քաղաքականություն՝ Հավաքական անվտանգության ապահովման ուղղությամբ: Սույն մոտեցումը ամբողջովին համահունչ էր 1997թ. ՌԴ կողմից ամրագրված արտաքին քաղաքական կուրսի հետ: Այսպես՝ Ռուսաստանի ազգային շահերը պահանջում էին այնպիսի արտաքին քաղաքական կուրսի որդեգրում և կիրարկում,

⁷¹ Հասանելի է հետյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/kontseptsiya_kollektivnoy_bezopasnosti_gosudarstv_uchastnikov_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁷² Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.armscontrol.ru/start/rus/docs/snconold.htm>

որն ուղղված կլիներ «Ռուսաստանի՝ որպես մեծ տերության, ձևավորվող քազմաքնչեռ աշխարհի ազդեցիկ կենտրոններից մեկի դիրքերի ամրապնդմանը» և վերոնշյալ քաղաքական կուրսի հիմնական բաղադրիչների թվում իր ուրույն տեղն էր զբաղեցնում «կամավոր հիմունքներով» ԱՊՀ ինտեգրացիոն խմբավորման ձևավորումը:

Հայեցակարգը, ռազմական քաղաքականության ոլորտում դիրքորոշումների համակարգման և անվտանգության ոլորտում համաձայնեցված քաղաքականություն իրականացնելու համատեքստում, դիտարկում էր նաև ՆԱՏՕ-ին և այլ ռազմաքաղաքական կազմակերպություններին: Այս պարագայում հիմքը դրվում էր առհասարակ համագործակցությանը, գործընկերությանը և տարածաշրջանային անվտանգային առկա և նոր հիմնադրվող կառույցներին մասնակցելու հարցերի վրա: Հայեցակարգը ընդունելու աշխարհաքաղաքական ժամանակահատվածով պայմանավորված՝ Կողմերը, Հավաքական անվտանգության ապահովման միջոցներ մշակելիս, հաշվի էին առել այն հանգամանքը, որ «Արևելի և Արևմուտքի միջև զլորակ դիմակայության ավարտը զգալիորեն նվազեցրել է համաշխարհային պատերազմի վտանգը»: Հետևաբար, ռազմական սպառնալիքի կանխմանն ուղղված համատեղ գործունեության գերակա ուղղությունների թվում (ի թիվս այլ ուղղությունների) Հայեցակարգը ներառում էր նաև ՆԱՏՕ-ի, ռազմաքաղաքական այլ կազմակերպությունների և անվտանգության տարածաշրջանային կառույցների հետ իրավահակասար գործընկերային հարաբերությունների հաստատումն ու զարգացումը: Սույն դիրքորոշումն առավել համապարփակ դիտարկելու տեսանկյունից հատկանշական է, որ այն լիովին համահունչ էր նույն ժամանակահատվածում միջազգային ասպարեզում առկա զարգացումների վերաբերյալ Ո՞Դ ձևավորված դիրքորոշման հետ: Մասնավորապես՝ Ռուսաստանի կողմից միջազգային ասպարեզում իրավիճակը բնութագրվում էր հիմնականում բազմաթիւ աշխարհի ձևավորման միտումների ուժեղացմամբ՝ միջազգային հարաբերությունների ապահովմականացման, վիճելի միջազգային խնդիրների կարգավորման գործում իրավունքի դերի ամրապնդման և Ո՞Դ դեմ ուղղակի ազրեսիայի վտանգի թուլացման նախադրյալներով: Միևնույն ժամանակ, Ռուսաստանն ընդգծում էր, որ միջազգային քաղաքական, տնտեսական, ֆինանսական և տեղեկատվական գործընթացները պետք է լինեն համակարգված, քանի որ միջազգային հարաբերություններում ռազմական ուժային գործոնների նշանակությունը պահպանելիս ավելի ու ավելի մեծ դեր են խաղալու տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, տեղեկատվական և այլ գործոնները: Հատկանշական է, որ Ռուսաստանն ընդունում էր նաև, որ երկրի ազդեցությունը միջազգային կյանքի արմատական հարցերի լուծման վրա զգալիորեն նվազել է և զուգահեռաբար ուժեղացել է «մի շարք պետությունների ցանկությունը՝ թուլացնելու Ռուսաստանի դիրքերը քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում»: Այս համատեքստում ընդգծվում էր, որ ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնման հեռանկարն անընդունելի է, քանի որ այն սպառնալիք է Ռուսաստանի ազգային անվտանգության համար: Զուգահեռաբար, Ռուսաստանն ընդունում էր, որ իր ազգային անվտանգության շահերը քաղաքական և իրավական միջոցներով ապահովելու

հնարավորությունները սահմանափակ են՝ ինչպես գլոբալ (ՍԱԿ), այնպես էլ տարածաշրջանային (ԵԱՀԿ, ԱՊՀ) խաղաղության և անվտանգության ապահովման բազմակողմ մեխանիզմների ոչ բավարար արդյունավետ լինելու հանգամանքով պայմանավորված:

ՀԱՊԿ հայեցակարգի համաձայն՝ Պայմանագրի բոլոր կողմերը, որպես ռազմական վտանգի հիմնական աղբյուրներ դիտարկում են (ի թիվս այլ աղբյուրների) մասնակից պետությունների նկատմամբ այլ պետությունների տարածքային հավակնությունները, լոկալ պատերազմների և զինված հակամարտությունների գոյություն ունեցող և պոտենցիալ օջախները (նախնառաջ մասնակից պետությունների սահմանների անմիջական հարևանությամբ), ինչպես նաև՝ մասնակից պետությունների ներքին գործերին դրսից միջամտելու, նրանց ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելու փորձերը: Վերոնշյալ դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ռուսաստանը պաշտպանական ոլորտում իր համար առավել իրական սպառնալիք դիտարկում էր իր պետական սահմանների մոտ լոկալ պատերազմների և զինված հակամարտությունների առկա և հավանական օջախները և մինչ գործնականում բացառում էր իր դեմ լայնածավալ ազրեսիայի սպառնալիքը, գուգահեռաբար չէր բացառում նաև իր հետ ուժային մրցակցության փորձերը:

Հայեցակարգի համաձայն՝ Հավաքական անվտանգության ապահովման գործում մասնակից պետությունների նպատակը պատերազմներն ու զինված հակամարտությունները կանխելն էր, իսկ դրանց սանձազերծման դեպքում՝ մասնակից պետությունների շահերի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխավորված պաշտպանությունն ապահովելը: Հայեցակարգը հղում էր կատարում նաև Պայմանագրի 4-րդ հոդվածին՝ ընդգծելով, որ ազրեսիայի դեպքում մասնակից պետությունները վերոնշյալ հոդվածի համաձայն «դիմադրում են այն և միջոցներ ձեռնարկում ստիպելու ազրեսորին դադարեցնել ռազմական գործողությունները»:

Հայեցակարգը սահմանում էր նաև այն հիմնական սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնվեր մասնակից պետությունների հավաքական անվտանգությունը, մասնավորապես

- ✓ անվտանգության անքակտելիություն, (неделимость безопасности), այն է՝ մեկ մասնակից պետության դեմ ազրեսիան դիտվում էր որպես ազրեսիա բոլոր մասնակից պետությունների դեմ,
- ✓ մասնակից պետությունների հավասար պատասխանատվություն՝ անվտանգության ապահովման համար,
- ✓ տարածաշրջանային հիմքի վրա ձևավորվող հավաքական բնույթի պաշտպանություն,
- ✓ Հավաքական անվտանգության ապահովման սկզբունքային հարցերի վերաբերյալ որոշումների ընդունում՝ կոնսենսուսի հիման վրա (սույն սկզբունքը հետագայում փոխվեց՝ ՀԱԽ սահմանափակ ձևաչափով որոշումների ընդունման մեխանիզմի ներդրմամբ),

- ✓ տարածքային ամբողջականության և ինքնիշխանության հարգում և այլն:

Հայեցակարգի հաջորդ առանցքային արձանագրումն այն էր, որ հավաքական անվտանգության հիմքը ՀԱՀ-ն էր, որը դիտարկվում էր որպես միջազետական և պետական կառավարման մարմինների, ուժերի և միջոցների մի ամբողջություն, որոնք կոչված էին ընդհանուր իրավական հիմքով (հաշվի առնելով ազգային օրենսդրությունը) ապահովելու մասնակից պետությունների շահերի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը: Ինչ վերաբերում է ՀԱՀ ուժերին և միջոցներին, ապա, Հայեցակարգը դրանց մեջ ներառում էր մասնակից պետությունների զինված ուժերն ու այլ զորքերը, տարածաշրջաններում զորքերի (ուժերի) կոալիցիոն (միավորված) խմբավորումները, որոնք պետք է ստեղծվեին մասնակից պետությունների դեմ ազրեսիան հետ մղելու համար, ինչպես նաև համատեղ (միավորված) հակաօդային պաշտպանության համակարգերը: ՀԱՀ ուժերի և միջոցների ստեղծումն ուղղված էր հնարավոր ազրեսորին զսպելուն, հնարավոր ազրեսիայի պատրաստությունը ժամանակին բացահայտելուն և հետ մղելուն, մասնակից պետությունների սահմանների պաշտպանության ապահովմանը և խաղաղության պահպանման գործողություններին մասնակցելուն: *Այսպիսով՝ ՀԱՀ ուժերի և միջոցների ստեղծումը բխում էր Պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածների դրույթների գործառնական ապահովման հանձնառությունից, հետևաբար դրանց ստեղծման նպատակով Պայմանագրի մասնակից պետությունները պայմանավորվեցին մոտարկել պաշտպանության և անվտանգության ոլորտին վերաբերոց օրենսդրական ակտերը, ընդհանուր մոտեցումներ մշակել զորքերին (ուժերին) մարտական պատրաստության բարձրագույն աստիճանին, դրանց ուսուցման ձևերին և միջոցներին, օպերատիվ և մարտական կիրառմանը, տնտեսության համաձայնեցված գորահավաքային նախապատրաստմանը վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև՝ համաձայնեցնել ռազմական կադրերի և մասնագետների պատրաստման ծրագրերը, համակարգել զենքի և ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության, մատակարարման և վերանորոգման պլանները և այլն: Այն հանգամանքը, որ Հայաստանը (ի թիվս բոլոր անդամ պետությունների) հանձնառություն ստանձնեց սույն միջոցառումների անցկացման վերաբերյալ, անհրաժեշտ է դիտարկել որպես պաշտպանության և անվտանգության ոլորտում համակարգված/ միասնական քաղաքականություն ձևակորելուն և իրականացնելուն միտված դիրքորոշում, ինչը լավագույնս արտահայտված է «Մինչև 2025 թ. Հավաքական անվտանգության պայմանագրի հավաքական անվտանգության ռազմավարության» դրույթներում (Ռազմավարությունը դիտարկվում է սույն բաժնի 4-րդ ենթաբաժնում):*

3) Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կանոնադրություն

2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնեում Պայմանագրի մասնակից պետությունները հիմնադրեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը

(ՀԱՊԿ)` որպես միջազգային տարածաշրջանային կազմակերպություն: ՀԱՊԿ կանոնադրությունն՝⁷³ ու Կազմակերպության իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրն՝⁷⁴ ուժի մեջ են մտել 2003թ. սեպտեմբերի 18-ին: Կանոնադրությունը ՄԱԿ-ի քարտուղարությունում գրանցվել է 2003թ. դեկտեմբերին: *Պայմանագիրը Կազմակերպության վերածելու որոշումը մասնակից պետությունների կողմից մեկնարանվում էր որպես հաստատակամ ցանկություն հետազոտում նույնպես զարգացնել և խորացնել ռազմաքաղաքական համագործակցությունն՝ իշխանական, տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև նպատակադրվածություն շարունակել և խորացնել սերտ և համակողմանի դաշնակցային հարաբերությունները՝ արտաքին քաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական ոլորտներում՝⁷⁵: Մինչ Կանոնադրության հիմնական դրույթներին անրադառնալը, անհրաժեշտ է շեշտել, որ 2000թ. Ռուսաստանը վերանայեց 1997թ. իր ազգային անվտանգության հայեցակարգը՝⁷⁶: Վերանայված հայեցակարգն ընդգծում էր, որ երկրներ կոնֆրոնտացիայի դարաշրջանի ավարտից հետո գերակշռում են երկու փոխադարձ բացառող միտումներ: Մասնավորապես՝ առաջին միտումը արտահայտվում էր «նշանակալից խումբ պետությունների և նրանց ինտեգրացիոն խմբավորումների տնտեսական և քաղաքական ամրապնդմամբ, ինչպես նաև՝ միջազգային գործընթացների կառավարման բազմակողմ մեխանիզմների կատարելագործմամբ», և Ռուսաստանը նպատակ էր հետապնդում աջակցել բազմաքննությունների կայացման գաղափարի ձևավորմանը հենց վերոնշյալ միտումի հիման վրա: Երկրորդ միտումը, ըստ ՌԴ վերանայված հայեցակարգի, արտահայտվում էր միջազգային հարաբերությունների այնպիսի համակարգ ձևավորելուն միտված փորձերով, որտեղ «դոմինանտ կլինեին արևմտյան պետությունները՝ ԱՄՆ գլխավորությամբ, և որտեղ համաշխարհային քաղաքականության առանցքային խդիրները կլուծվեին միակողմանի, առաջին հերթին՝ ռազմական/ուժային միջոցներով՝ շրջանցելով միջազգային իրավունքի հիմնարար նորմերը»: Այսպիսով, Ռուսաստանի Դաշնությունը, միջազգային գործընթացների կառավարման ընկալման համատեքստում ընդգծում էր իր և Հավաքական Արևմուտքի միջև հետզհետե խորացող գաղափարական տարածայնությունը:*

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանն ընդգծում էր ռազմական ոլորտում սպառնալիքների և դրանց մաշտաբների աճը: Մասնավորապես՝ «Ռազմավարական դոկտրինի աստիճանի բարձրացրած ՆԱՏՕ-ի անցումը դեպի Դաշինքի պատասխանատվության գոտուց դուրս և առանց ՄԱԿ ԱԽ

⁷³ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/ustav_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁷⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/documents/soglashenie_o_pravovom_statuse_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti/#loaded

⁷⁵ Տես՝ ՀԱՊԿ կանոնադրության ներածական մասը:

⁷⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.kremlin.ru/acts/bank/14927>

համապատասխան սանկցաների ուժային (ռազմական) գործողությունների պրակտիկան հղի է աշխարհում ողջ ռազմավարական իրավիճակի ապակյունացման սպառնալիքով»: Ռուսական կողմի համոզմամբ՝ միջազգային ոլորտում իր հիմնական սպառնալիքները պայմանավորված էին առաջին հերթին «ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնմամբ, ռուսական սահմանների անմիջական հարևանությամբ ռազմական բազաների և խոշոր ռազմական կոնտիգենտների առաջացման հնարավորությամբ, ԱՊՀ տիրույթում ինտեգրացիոն գործընթացների թուլացմամբ, ՌԴ պետական սահմաններին մոտ ԱՊՀ մասնակից պետությունների ներքին սահմաններում հակամարտությունների առաջացմամբ և էսկալացիայով»: Հետևաբար, Ռուսաստանի ազգային շահերը միջազգային ոլորտում ներառում էր Ռուսաստանի՝ «ռազես գերտերության և բազմաքննության աշխարհի ազդեցիկ կենտրոնի, շահերի ամրապնդում», «հավասարազոր և փոխահավետ հարաբերությունների զարգացում բոլոր պետությունների և ինտեգրացիոն խմբավորումների հետ, առաջին հերթին՝ ԱՊՀ մասնակից պետությունների հետ»: Ռազմական ոլորտում իր ազգային շահերի պաշտպանությունը պետությունը տեսնում էր այդ թվում նաև «Ռուսաստանի և իր դաշնակիցների դեմ ռազմական ազրեսիայի կանխարգելման մեջ»: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա, այն ի թիվս այլ ուղղությունների, ուղղված էր ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերությունների և «իր ազգային շահերին համապատասխանող» ԱՊՀ շրջանակներում առկա ինտեգրացիոն խմբավորումների զարգացմանը:

ՀԱՊԿ կանոնադրության համաձայն՝ Կազմակերպության նպատակը⁷⁷ խաղաղության, միջազգային և տարածաշրջանային անվտանգության և կայունության ամրապնդումն է, ինչպես նաև՝ անդամ պետությունների անկախության, տարածքային ամրողականության և ինքնիշխանության հավաքական հիմքի վրա պաշտպանությունը: Սույն նպատակներին հասնելու համար Հայաստանը (ի թիվս բոլոր անդամ պետությունների) հանձնառություն ստանձնեց համատեղ միջոցներ ձեռնարկել ՀԱՊԿ-ի շրջանակներում գործուն ՀԱՀ ձևավորելու ուղղությամբ: Այդ համակարգը պետք է ի վիճակի լիներ ապահովել «հավաքական պաշտպանություն՝ անվտանգության, կայունության, տարածքային ամրողականության և ինքնիշխանության սպառնալիքի առաջացման դեպքում, ինչպես նաև՝ ապահովել հավաքական պաշտպանության իրավունքի իրացում»: Գործուն ՀԱՀ-ի ձևավորումը ներառում էր նաև Կազմակերպության կոալիցիոն (հավաքական) ուժերի, գորքերի (ուժերի) տարածաշրջանային (միավորված) խմբավորումների, խաղաղապահ ուժերի, միավորված համակարգերի և դրանց կառավարման մարմինների, ռազմական ենթակառուցվածքի ստեղծում: Այսպիսով, այդ համակարգի ձևավորումը պահանջում էր բոլոր անդամ պետությունների հանձնառությունն ու համատեղ աշխատանքը: Միանգամայն տրամաբանական է, որ խաղաղության, միջազգային և տարածաշրջանային անվտանգության և կայունության ամրապնդման, ինչպես նաև անդամ պետությունների անկախության, տարածքային ամրողականության և

⁷⁷ Տես՝ կանոնադրության 3-րդ հոդվածը:

ինքնիշխանության հավաքական հիմքի վրա պաշտպանության իրազործման համար անդամ պետությունները պետք է փոխգործակցեին նաև ռազմատեխնիկական (ռազմատնտեսական) համագործակցության ուղղությամբ, «զինված ուժերին, իրավապահ մարմիններին և հատուկ ծառայություններին անհրաժեշտ սպառազինությամբ, ռազմական, հատուկ տեխնիկայով և հատուկ միջոցներով ապահովման ուղղությամբ, ինչպես նաև ազգային զինված ուժերի, հատուկ ծառայությունների եւ իրավապահ մարմինների համար ռազմական կազմերի և մասնագետների պատրաստման ոլորտներում»⁷⁸:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անդամ պետությունները պարտավորվել են իրենց տարածքներում Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունների գորքերի (ուժերի) խմբավորումներ, ռազմական ենթակառուցվածքի օրենկուներ տեղակայելու մասին որոշում կայացնելուց առաջ անհետաձելի խորհրդակցություններ անցկացնել այլ անդամ պետությունների հետ, ասել է թե՝ համաձայնեցնել մյուս անդամ պետությունների հետ իրենց վերոնշյալ դիրքորոշումը⁷⁹: Կանոնադրության սույն դրույթը մի կողմից բխում է ռազմաքաղաքական ոլորտում համակցված քաղաքականություն վարելու, ինչպես նաև հավաքական պաշտպանություն ապահովելու և ամրապնդելու հանձնառությունից, իսկ մյուս կողմից խոչընդուռ է հանդիսանում Կազմակերպության անդամ չհանդիսացող որեւէ պետության ռազմական կարողությունները սեփական տարածքում տեղակայելու համար՝ ի շահ սեփական ազգային կարիքների: Հստ էության, այս սահմանափակումը կարող էր գործել ի շահ անդամ պետությունների, եթե անդամ պետությունների անկախությունը, տարածքային ամրողականությունն ու սուվերենությունը հավաքական հիմքի վրա պաշտպանելու հանձնառությունը գործեր իրականում և ոչ ընտրովի: Հետևարար, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության պատկան մարմինների կողմից այն դիտարկել որպես խոչընդուռ ՀԱՊԿ անդամ չհանդիսացող պետությունների հետ իր անկախության, տարածքային ամրողականության և սուվերենության պաշտպանության կարիքներից բխող և արժեհամակարգային հենքի վրա ձևավորվող ռազմաքաղաքական համակարգային համագործակցություն (այդ թվում նաև՝ ռազմավարական գործընկերություն) ծավալելու առումով:

Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ), Արտարին գործերի նախարարների խորհրդի (ԱԳՆԽ), Պաշտպանության նախարարների խորհրդի (ՊՆԽ) և Անվտանգության խորհրդների քարտուղարների կոմիտեի (ԱԽԶԿ) որոշումները, բացի ընթացակարգային հարցերից, ընդունվում են կոնսենսուսով: Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ 2010 թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված «2002 թ. հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության համաձայն՝ ՀԱԽ-ը ձեռք բերեց սահմանափակ ձևաչափով որոշումներ ընդունելու իրավասություն, պայմանով, որ անդամ պետություններից ոչ

⁷⁸ Տես՝ ՀԱՊԿ Կանոնդարության 7-րդ հոդվածը:

⁷⁹ Տես՝ նույն տեղում:

մեկը չի առարկում որոշման ընդունման նման կարգի և կոնկրետ որոշման դեմ: Վերոնշյալ ձեւաչափով որոշման ընդունման օգտին չքվեարկած անդամ պետությունը պատասխանատվություն չի կրում ընդունված որոշման հետևանքների համար: Սույն փոփոխությունը Կազմակերպության անդամ պետությունների կողմից դիտարկվում է որպես առաջընթաց, քանի որ հնարավորություն է ընձեռում մի կողմից ՀԱՊԿ դրոշի ներքո իրականացնել հավաքական պաշտպանությունից բխող գործառույթներ, իսկ մյուս կողմից՝ այն անդամ պետությանը/ններին, որը/որոնք վերապահումով է/են մոտենում խնդրին՝ չմասնակցել այդ գործառույթների կատարմանը միտված գործողություններում: *Միևնույն ժամանակ, սույն դրույթն ընդունելու անհրաժեշտությունն ինքնին խոսում է Կազմակերպության էվոլյուցիայի ընթացքում անդամ պետությունների ռազմակարական շահերի աստիճանական չհամընկման միտումի մասին:*

Ցանկացած ՀԱՊԿ անդամ պետություն կարող է լրել Կազմակերպությունը: Ընթացակարգի համաձայն՝ Կազմակերպության շրջանակներում առկա իր պարտավորությունները կարգավորելուց հետո տվյալ անդամ պետությունը Կանոնադրության դեպոգիտար կողմին պետք է ուղարկի ՀԱՊԿ-ը լրելու վերաբերյալ պաշտոնական ծանուցում՝ ոչ ուշ քան այն լրելու ամսաթվից վեց ամիս առաջ⁸⁰: Եթե որևէ անդամ պետություն չկատարի Կանոնադրության դրույթները, ՀԱԽ և այլ մարմինների որոշումները ապա Խորհուրդը կարող է կասեցնել նրա մասնակցությունը Կազմակերպության մարմինների գործունեությանը: Այն պարագայում, եթե անդամ պետությունը շարունակում է չկատարել վերոնշյալ պարտավորությունները՝ Խորհուրդը կարող է որոշում ընդունել Կազմակերպությունից նրան հեռացնելու մասին: Այս պարագայում որոշումներն ընդունվում են առանց հաշվի առնելու տվյալ անդամ պետության ձայնը⁸¹:

Ուշագրավ է ՀԱՊԿ-ը լրելու Ուգբեկստանի Հանրապետության օրինակ՝ և՝ որպես քաղաքական գործընթաց, և՝ Կազմակերպության ընթացակարգերի առումով: Մասնավորապես՝ Ուգբեկստանը հանդիսանում էր 1992թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ի սկզբանե ստորագրած կողմ: Միևնույն ժամանակ, եթե 1999 թ. ապրիլի 2-ին, Սուսկվայում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզիստանի և Տաջիկստանի նախագահները ստորագրեցին Պայմանագրի երկարաձգման արձանագրությունը, Ուգբեկստանը Աղրբեջանի և Վրաստանի հետ միասին, հրաժարվեցին ստորագրել Պայմանագրի երկարաձգման արձանագրությունը: 2005թ. Անդիշինում տեղի ունեցած խորվությունները ճնշելու պատճառով Արևմուտքը Ուգբեկստանի նկատմամբ բանեցրեց մեկուսացման քաղաքականություն: 2005թ. վերջին ամերիկյան ռազմակայանը դուրս բերվեց ուղբեկական Կարշի-Խանաբադից, իսկ Ուգբեկստանն իր հերթին Ռուսաստանի հետ կնքեց դաշնակցային հարաբերությունների մասին պայմանագիր⁸² և վերականգնեց իր անդամակցությունը ՀԱՊԿ-ում:

⁸⁰ Տես՝ ՀԱՊԿ Կանոնադրության 19-րդ հոդվածը:

⁸¹ Տես՝ ՀԱՊԿ Կանոնադրության 20-րդ հոդվածը:

⁸² Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://lex.uz/docs/1345957>

2012թ. հունիսի 28-ին ուզբեկական կողմը ՀԱՊԿ քարտուղարությանը ներկայացրեց իր մասնակցությունը Կազմակերպության գործունեության մեջ կասեցնելու մասին պաշտոնական հայտագիր⁸³: Մինչ Քարտուղարությունն ուսումնասիրում էր ուզբեկական կողմի ներկայացրած փաստաթղթերի իրավական մասը՝ ուսումնական կողմը Ուզբեկստանի նման քայլը որակեց կանխատեսելի՝ հաշվի առնելով ՀԱՊԿ շրջանակներում Ուզբեկստանի մասնակցության պասիվության մակարդակը: Մասնավորապես՝ ուզբեկական կողմը բանեցնում էր հետևյալ մարտավարությունը՝ կամ չէր մասնակցում ՀԱՊԿ ՀԱԽ և ՊՆ հանդիպումներին, կամ մասնակցում էր՝ առանց որևէ փաստաթուղթ ստորագրելու: Մինչ Կառույցը լրելու ընթացակարգային խնդիրներին անրադառնալը, ստորև կներկայացվեն որոշ քաղաքական գործընթացներ, որոնք ուզբեկական կողմը հետևողականորեն իրականացնում էր 2008 թ-ից ի վեր, ինչն էլ իր հերթին ՀԱՊԿ-ի ներսում կարող էր դիտարկվել 2012 թ. կառույցը լրելու նրա դիրքորոշման կանխատեսելիության տեսանկյունից: Մասնավորապես՝ 2008 թ.-ից ամերիկյան կողմը սկսեց քայլեր ձեռնարկել Ուզբեկստանի հետ հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ՝ առավելապես պայմանվածորված Ուզբեկստանի տրանսպորտային և հաղորդակցային հնարավորություններով: Նույն տարում Միացյալ Նահանգները Ուզբեկստանի հետ պայմանավորվածություն ձեռք բերեց Նավոյի օդանավակայանի միջոցով ոչ մարտական բեռների տարանցում իրականացնելու վերաբերյալ, իսկ 2009թ. հոկտեմբերին ԵՄ արտգործնախարարների հանդիպման ժամանակ որոշում ընդունվեց Ուզբեկստանին գենքի մատակարարման սահմանափակումները չեղարկելու վերաբերյալ: 2011թ. Ուզբեկստանի Նախագահ Իսլամ Քարիմովի՝ Բյուսել կատարած այցին հաջորդիվ ստորգրվեց Ուզբեկստանում Եվրամիության պատվիրակության ստեղծման մասին համաձայնագիրը: Բացի այդ, պաշտոնական Տաշքենտը սկսեց գործուն ջանքեր իրականացնել Արևմուտքի տնտեսական աջակցությունը ստանալու համար, և, արդյունքում, ԵՄ-ն հանձնառություն ստանձնեց Ուզբեկստանին տրամադրել բարձր տեխնոլոգիաներ՝ առաջնահերթ նախագծերի իրականացման, ենթակառուցվածքների զարգացման և գիտատեխնիկական կապերի ընդլայնման համար, ինչպես նաև՝ մասնակցել էներգախնայող տեխնոլոգիաների ներդրմանը, տարածաշրջանների միջև տրանսպորտային, հաղորդակցության և տարանցիկ միջանցքների զարգացմանը: 2011 թ. սեպտեմբերի 22-ին ԱՄՆ Կոնգրեսը որոշում կայացրեց վերացնել Ուզբեկստանին ռազմական օգնության տրամադրելու 2004թ. սահմանված սահմանափակումները՝ Հյուսիսային բաշխիչ ցանցի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության հիմնավորմամբ, իսկ արդեն մեկ շաբաթ հետո երկու պետությունների նախագահների հեռախոսազրույցի⁸⁴ ժամանակ կողմերը վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը բաց և լիարժեք քաղաքական երկխոսություն շարունակելու առումով, ինչպես նաև ընդգծեցին իրենց շահագրգուվածությունը փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքների հիման վրա ընդլայնել ԱՄՆ-Ուզբեկստան գործընկերությունը:

⁸³ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gazeta.uz/ru/2012/06/29/odkb/>

⁸⁴ Տես՝ <https://www.uzdaily.uz/ru/post/8367>

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս գործընթացներին զուգահեռ, Ուզբեկստանը հետևողականորեն ի ցույց էր դնում իր ուրույն դիրքորոշումը զերծ մնալ այնպիսի խնտեգրացիոն նախագծերից, որտեղ առանցքային դերը վերապահված էր Ռուսաստանին: Մասնավորապես՝ 2008թ. հոկտեմբերին պետությունը դուրս եկավ ԵվրԱզԷՄ-ի կազմից՝ իր որոշումը պատճառաբանելով կազմակերպության անարդյունավետությամբ: Սույն ժամանակահատվածում Ուզբեկստանը մաքսիմալ սահմանափակել էր իր մասնկացությունը նաև ՀԱՊԿ գործընթացներում: Մասնավորապես՝ ուզբեկական կողմը հրաժարվեց մասնակցել օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի (ԱԱՀՈՒ) ստեղծմանը⁸⁵: Հատկանշական է, որ բացասական էր նաև ուզբեկական կողմի վերաբերմունքը Մաքսային միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների ամրապնդման վերաբերյալ: Պետության բարձրագույն դեկազրությունը սույն բացասական դիրքորոշումը հիմնավորում էր այն տեսանկյունից, որ ինտեգրացիոն գործընթացները կարող են դուրս գալ տնտեսական շահերից և ձեռք բերել քաղաքական բովանդակություն, ինչն էլ իր հերթին կարող էր բացասական ազդեցություն ունենալ ինտեգրացիոն միավորման անդամների՝ այլ արտաքին գործընկերների հետ ձևավորված կապերի և համագործակցության վրա, ինչպես նաև՝ խոչընդոտել երրորդ երկրների հետ ինտեգրացիոն գործընթացներ զարգացնելուն:

Ուզբեկստանի՝ ՀԱՊԿ-ը լրելու ընթացակարգային հարցերի թվում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Կազմակերպությունը կարող է լրել ցանկացած անդամ պետություն՝ Զավաքական անվտանգության մասին պայմանագրի 11-րդ հոդվածի և ՀԱՊԿ կանոնադրության 6-րդ գլուխ 19-րդ հոդվածի դրույթների համաձայն: Մինչդեռ, Կանոնադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետության մասնակցությունը ՀԱՊԿ մարմինների գործունեության մեջ կարող է դադարեցվել միայն ՀԱԽ կողմից՝ եթե տվյալ անդամ պետությունը չի կատարում իր կանոնադրական պարտավորությունները: Եվ միայն այն դեպքում, եթե տվյալ անդամ պետությունը շարունակում է իր պարտավորությունները չկատարել ՀԱԽ-ը կարող է որոշում ընդունել տվյալ անդամ պետությանը Կազմակերպությունից հեռացնելու մասին⁸⁶: Հետևաբար, ՀԱՊԿ կանոնադրական փաստաթղթերի համաձայն՝ Ուզբեկստանը իրավասու չեր Կազմակերպության գործունեության մեջ իր մասնակցությունը կասեցնելու մասին պաշտոնական հայտագրով դիմել Կառույցին, քանի որ, նման դրույթ առհասարակ բացակայում է ՀԱՊԿ կանոնադրական փաստաթղթի երրում: Մնացած անդամ պետությունները, հենվելով Ուզբեկստանի կողմից իր կանոնադրական պարտականությունները չկատարելու վրա, կարող էին կասեցնել պետության մասնակցությունը ՀԱՊԿ-ի մարմինների գործունեության մեջ, իսկ դրանց շարունակման դեպքում՝ Ուզբեկստանին հեռացնել Կազմակերպությունից: Մինչդեռ, 2012թ. դեկտեմբերի 19-ին, Սուկվայում, ՀԱՊԿ ՀԱԽ-ը ոչ միայն քննարկեց

⁸⁵ Տես՝ https://www.newsru.com/world/03aug2009/tashkent_protiv.html

⁸⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.zonazakona.ru/law/abro/115?fbclid=IwAR149qerkK88_bFhVWxVTEXBHGm4jBoyzTYqrBtI5c9wMFpgxQKraEk8DJ8

Ուզբեկստանի դիմումն, այլև որոշում⁸⁷ ընդունեց դադարեցնել Ուզբեկստանի անդամությունը ՀԱՊԿ-ում:

4) Մինչև 2025թ. ժամանակահատվածի համար ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարություն

ՀԱՊԿ-ի կայացման էվոլյուցիան բնութագրող հաջորդ հիմնարար փաստաթուղթը 2016թ. հոկտեմբերի 14-ին ՀԱԽ որոշմամբ ընդունված «Մինչեւ 2025 թ. Հավաքական անվտանգության պայմանագրի հավաքական անվտանգության ռազմավարությունն»⁸⁸ է (հետայսու՝ Ռազմավարություն): Վերոնշյալ փաստաթուղթը Կազմակերպության ռազմավարական նպատակի ու խնդիրների ամբողջություն է, ինչպես նաև ներառում այն միջոցառումների շարքը, որոնք իրականացվում են ՀԱՊԿ-ի կողմից՝ ի շահ հավաքական անվտագության ապահովման: Այն հանդիսանում է Կազմակերպության «ՀՊՀ-ի զարգացման ծրագրավորման հիմքը»: Կառույցը, ՀԱՊԿ հավաքական անվտանգություն ասելով, նկատի ունի անդամ պետությունների հավաքական շահերի պաշտպանվածության այնպիսի վիճակ, որը յուրաքանչյուր անդամ պետությանը թույլ է տալիս ապահովել իր անկախությունը, տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, պաշտպանունակությունը և սպառնալիքներից պաշտպանությունը՝ համատեղ գործունեության համակարգման և իրականացման հիման վրա: ՀԱՊԿ ՀԱՀ-ն իր հերթին հանդիսանում է Կազմակերպության մարմինների և պետական կառավարման ազգային մարմինների, ՀԱՊԿ անդամ պետությունների ուժերի և միջոցների ամբողջություն, որոնք, միջազգային իրավունքին և ազգային օրենսդրությանը համապատասխան ապահովում են անդամ պետությունների հավաքական շահերի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը հավաքական հիմունքներով:

Հստ այդմ, վերոնշյալ Ռազմավարության ընդունումը Հայաստանի կողմից դիտարկվել է որպես ևս մեկ հաստատուն քայլ՝ միտված անդամ պետությունների հավաքական անվտանգության պաշտպանվածության մակարդակի ամրապնդմանը, ինչն էլ իր հերթին Հայաստանին հնարավորություն պետք է ընձեռներ համատեղ գործունեության համակարգման և իրականացման հիման վրա ապահովելու իր անկախությունը, տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, պաշտպանունակությունը և սպառնալիքներից պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի վրա Ռազմավարության արդյունավետության և/կամ անարդյունավետության մակարդակը համապարփակ գնահատելու տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել, որ ՀԱՊԿ-ը Ռազմավարության ընդունումը պայմանավորում էր մի շարք գործոններով՝

⁸⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://odkb-csto.org/session/2012/session201212/#loaded>

⁸⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://odkb-csto.org/documents/statements/strategiya_kollektivnoy_bezopasnosti_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti_na_period_do/#loaded

աշխարհաքաղաքական իրադարձությունների զարգացման դինամիկայով, միջազգային հարաբերությունների փոխակերպմամբ և անդրսահմանային մարտահրավերների ու սպառնալիքների սպեկտրի ընդլայնմամբ: Հետևաբար, Ռազմավարության դրույթները կդիտարկվեն 2015թ. ընդունված ՌԴ ազգային անվտանգության նոր ռազմավարության մի շարք դրույթների հետ համադրման սկզբունքով՝ մի կողմից ի ցույց դնելու Կազմակերպության զաղափարական, գործառնական զարգացման և աշխարհաքաղաքական զարգացումներում Ռուսաստանի դիրքավորման շաղկապվածությունը, իսկ մյուս կողմից՝ ներկայացնելու համար գլոբալ և տարածաշրջանային անվտանգության ապահովման ոլորտում ՀԱՊԿ շրջանակներում արտաքին քաղաքական դիրքորոշումների համակարգման բացասական հետևանքների հնարավոր աճը Հայաստանի Հանրապետության համար, մասնավորապես՝ պայմանավորված Ռուսաստան-Հավաքական Արևմուտք հարաբերությունների ներկայիս պատկերով:

Այսպես՝ Ռուսաստանի դիրքորոշման համաձայն՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության ուժային ներուժի մեծացումը, «նրան զլորալ գործառույթներով օժտելը, որոնք իրականացվում են միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ», անդամ պետությունների ռազմական գործունեության ակտիվացումը, Դաշինքի հետագա ընդլայնումն ու նրա ռազմական ենթակառուցվածքի մերձեցումը Ռուսաստանի սահմաններին սպառնալիք են ստեղծում իր ազգային անվտանգության համար: Ավելին՝ 2015թ. Ռազմավարությունն ամրագրում էր, որ Արևմուտքի դիրքորոշումը ուղղված է ինտեգրացիոն գործընթացներին հակազդելուն և Եվրասիական տարածաշրջանում լարվածության օջախների ստեղծմանը, հետևաբար, բացասական ազդեցություն է բողնում ռուսական ազգային շահերի իրացման վրա: Այդ պայմաններում Ռուսաստանը որդեգրում էր այնպիսի քաղաքականություն, որը միտված էր ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում տարածաշրջանային և ենթատարածաշրջանային ինտեգրման և համակարգման ներուժը զարգացնելուն (ՀԱՊԿ, ԵԱՏՄ, Միութենական պետություն), «որոնք կայունացնող ազդեցություն են ունենում ԱՊՀ մասնակից պետությունների, Աբխազիայի Հանրապետության և Հարավային Օսիայի Հանրապետության հետ սահմանակից շրջաններում ընդհանուր իրավիճակի վրա»: Նոր Ռազմավարությունն ամրապնդում էր նաև այն թեզը, ըստ որի «ԱՄՆ և ԵՄ աջակցությունը հակասահմանադրական պետական հեղաշրջմանը Ուկրաինայում հանգեցրել է ուկրաինական հասարակության խորը պառակտմանը և զինված հակամարտության առաջացմանը»: Վերոնշյալ դիրքորոշումներին զուգընթաց, Ռուսաստանն ընդգծում էր, որ հանդես է գալիս ՀԱՊԿ որակական զարգացման, այն համընդիմանուր միջազգային կազմակերպության վերածելու օգտին՝ որը կարող է դիմակայել տարածաշրջանային մարտահրավերներին և ռազմաքաղաքական և ռազմական-ռազմավարական բնույթի սպառնալիքներին, ինչպես նաև՝ տեղեկատվական ոլորտում առկա սպառնալիքներին:

ՀԱՊԿ Ռազմավարությունն, իր հերթին, ՀԱՊԿ հավաքական անվտանգության արտաքին սպառնալիքների և մարտահրավերների շրջանակի մեջ ներառում էր ՀԱՊԿ պատասխանատվության գոտուն հարակից պետություններում չկարգավորված

հակամարտությունների առկայությունը, այլ պետությունների կողմից ռազմական ոլորտում գերազանցության հասնելու քաղաքականության իրականացումը, ՀԱՊԿ անդամ պետություններում պետական իշխանության խաթարման և սահմանադրական կարգի փոփոխմանն ուղղված գործունեությունը, Էլեկտրոնային տեղեկատվական ցանցերի և մերժառեսուրսների միջոցով անդամ պետությունների բնակչության վրա ապակառուցողական գաղափարական և հոգեբանական ազդեցության իրականացումը և այլն: Հավաքական անվտանգության ներքին սպառնալիքների և մարտահրավերների շարքը ներառում էր անդամ պետություններում հասարակական գիտակցությունը շահարկելու, հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ապակառուցողական ազդեցություն ունենալու նպատակով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը և այլն: Ըստ էության, ներքին և արտաքին սպառնալիքների և մարտահրավերների սույն ցանկն արդեն իսկ լավագույնս բնորոշում էր Ռուսաստան-Հավաքական Արևմուտք օրեցօր ահագնացող ֆունդամենտալ գաղափարական տարածայնությունները, մրցակցությունն ու գլոբալ շահերի բախումը և միանգամայն կանխատեսելի էր, որ արտաքին աշխարհի հետ հարաբերվելու համար ՀԱՊԿ-ը պետք է ձեռնամուխ լիներ այնպիսի միասնական վարքի կանոններ սահմանելուն, որոնք մի կողմից պետք է համահունչ լինեին «Հավաքական անվտանգություն» գաղափարին, իսկ մյուս կողմից խոչընդոտներ ստեղծեին Հայաստանի Հանրապետության (ի թիվս բոլոր անդամ պետությունների) համար այլ ուղղություններով ռազմաքաղաքական հարաբերություններ համակարգային պլանավորելու և կիրարկելու համար: Բացի այդ, մեր բնորոշմամբ, առանձնակի ուշադրության է արժանի ներքին սպառնալիքների ցանկը՝ ժողովրդավարական արժեքների և սկզբունքների, խոսքի, խղճի և մտքի ազատության, ինչպես նաև մարդու այլ իրավունքների ապահովման տեսանկյունից: Այս դրույթները կարող են կիրառվել որպես քաղաքական բռնաճնշումների իրականացման ու դրանց արդարացման գործիքներ՝ ՀԱՀ-ի և տարածաշրջանային կայունության ամրապնդման պատրվակով: Վերոնշյալի համատեքստում ընդգծենք, որ սույն աշխատության շրջանակներում դիտարկված փաստաթղթերի հետազոտությունը չի արձանագրել որևէ հիշատակում, որը միտված կլիներ ժողովրդավարական արժեքները, մարդու իրավունքների պաշտպանությունն ու կոռուպցիայի դեմ պայքարը որպես ՀԱՊԿ գործընթացներում հիմնարար արժեքներ դիտարկելուն: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև ներկայացնել անդամ պետությունների կառավարման համակարգերի առանձնահատկությունները: Այսպես «Freedom House» հեղինակավոր միջազգային իրավապաշտպան կազմակերպության կողմից ՀԱՊԿ անդամ բոլոր պետությունները՝ բացառությամբ Հայաստանի, ժողովրդավարական կառավարման մակարդակի (level of democratic governance) չափման սանդղակի համաձայն դիտարկվում են որպես կոնսոլիդացված ավտորիտար համակարգեր (consolidated authoritarian regime): Մասնավորապես՝ Ռուսաստանն այս սանդղակի համաձայն՝ ունի 100 հնարավորից 5, Բելառուսը՝ 3, Ղազախստանը՝ 6, Տաջիկստանը՝ 2, Ղրղզստանը՝ 13 միավոր: Սույն պետությունները, թե՛ մարդու ազատությունների պաշտպանության, թե՛

տեղեկատվության ազատության և թե՛ ժողովրդավարական կառուցակարգերի արդյունավետության սանդղակներով, զբաղեցնում են ցածրագույն հորիզոնականներ՝ դասվելով անազատ երկրների շարքին, մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունը՝³⁴ միավորով, համարվում է անցումային կամ հիբրիդային համակարգ (Transitional or Hybrid Regime):

ՀԱՊԿ ռազմավարության համաձայն, Հավաքական անվտանգության շահերի ապահովմանն աջակցելու համատեքստում անդամ պետությունները պարտավորություն ստանձնեցին ընդլայնել նաև քաղաքական համագործակցությունը զլորակ և տարածաշրջանային անվտանգության ապահովման ոլորտում և համակարգել իրենց արտաքին քաղաքական դիրքորոշումները: *Արտաքին քաղաքականության ոլորտում վերոնշյալ քայլերի իրականացումը մի կողմից կարող է դիտարկվել որպես Կազմակերպության շրջանակներում անդամ պետությունների քաղաքական ինտեգրման մակարդակի ամրապնդում՝ ի շահ իրենց հավաքական անվտանգության ապահովման: Միևնույն ժամանակ, սույն պարտավորությունները, մասնավորապես՝ Հավաքական անտանգության համակարգի թերացման և Կազմակերպության կողմից Պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածների դրույթներից բխող գործառույթների չկատարման համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել որպես խոչընդոտ՝ Հայաստանի արտաքին քաղաքականությանը մանկականություն հաղորդելու և ՀԱՊԿ-ից դուրս համակարգային երկկողմ ու քազմակողմ արտաքին քաղաքական բաղադրիչ զարգացնելու առումով: Սույն դիտարկումն առավել արդիական է դառնում պայմանավորված Ռուսաստան – Հավաքական Արևմուտք ներկայիս հարաբերությունների ծայրահեղ վատթարացմամբ: Հետևաբար, Աշխատությունն առաջարկում է Ռազմավարության սույն դրույթի՝ Հայաստանի Հանրապետության ազգային և պետական շահերի հետ համատեղելիությունը և/կամ անհամատեղելիությունը դիտարկել (ի թիվս այլ մոտեցումների) նաև ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում: Մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի որակմամբ՝ «ներկայում Ռուսաստանը Եվրատլանտյան անվտանգության համար առավել նշանակալի եւ անմիջական սպառնալիք է ներկայացնում»⁸⁹: Դաշինքը նաև անդամ պետություններին կոչ է անում «միջազգային տրիբունալ ստեղծելուն միտված հավաքական գործողություններ ձեռնարկել Ռուսականայի դեմ պատերազմի ընթացքում Ռուսաստանի կողմից կատարված ազրեսիայի հանցագործությունը հետապնդելու համար»: ՄԱԿ ԳԱ-ն⁹⁰ «ընդունում է, որ Ռուսաստանի Դաշնության ռազմական գործողությունները Ռուսականայի ինքնիշխան տարածքում ունեն այնպիսի մասշտաբներ, որոնք միջազգային հանրությունը չի տեսել Եվրոպայում տասնամյակներ շարունակ, և որ իրատապ գործողություններ են անհրաժեշտ այս սերնդին պատերազմի աղետներից փրկելու համար», ինչպես նաև «ամենավճռական ակտուանքն է հայտնում Ռուսականայի դեմ Ռուսաստանի Դաշնության ազրեսիայի*

⁸⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.nato-pa.int/download-file?filename=/sites/default/files/2022-11/RESOLUTION%20479%20-%20NATO%20POST%20MADRID%20.pdf>

⁹⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.aljazeera.com/news/2022/3/3/unga-resolution-against-ukraine-invasion-full-text>

կապակցությամբ՝ խախտելով կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետը» և «ափսոսանք է հայտնում Ուկրաինայի դեմ ուժի այս ապօրինի կիրառմանը Բելառուսի մասնակցության կապակցությամբ եւ կոչ է անում նրան կատարել իր միջազգային պարտավորությունները։ Եվրոպական Միության օրենսդիր մարմինն, իր հերթին, «Ռուսաստանը ճանաչում է ահարեկչության հռվանավոր պետություն»⁹¹։

Ինչ վերաբերում է Ռազմական անվտանգության ոլորտին, ապա, Ռազմավարության համաձայն, Հավաքական անվտանգության շահերի ապահովմանն աջակցելու համատեքստում, անդամ պետությունները պարտավորվեցին ա) կատարելագործել անդամ պետությունների պաշտպանունակությունը, նրանց զինված ուժերի, այլ զորքերի, ռազմական կազմավորումների և ՀԱՊԿ զորքերի (հավաքական ուժերի) մարտունակությունը, բ) զարգացնել ռազմատեխնիկական և ռազմատնտեսական համագործակցությունն ու ռազմաարդյունաբերական համակարգերի փոխգործակցությունը, դ) համաձայնեցված քաղաքականություն իրականացնել (քազմակողմ նպատակային ծրագրերի հիման վրա) Հավաքական անվտանգության ապահովման ուժերին զինված պայքարի վարման արդյունավետ միջոցներով զինելու առումով, ե) համաձայնեցնել ռազմական կադրերի և մասնագետների պատրաստման ծրագրերը, զ) համակարգել սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության, մատակարարման եւ վերանորոգման համատեղ ծրագրերը, ինչպես նաև՝ է) համաձայնեցնել անդամ պետությունների տարածքների օպերատիվ կահավորման հարցերը՝ հավաքական անվտանգության շահերից ենելով։ Ռազմական անվտանգության ոլորտում վերոնշյալ քայլերի իրականացումը մի կողմից կարող է դիտարկվել որպես Կազմակերպության շրջանակներում անդամ պետությունների ռազմական ինսեքրման մակարդակի ամրապնդում՝ ի շահ հավաքական անվտանգության ապահովման։ Միևնուն ժամանակ, սույն պարտավորությունները, մասնավորապես՝ Կազմակերպության կողմից Պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածների դրույթներից բխող պարտավորությունների չկատարման համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել որպես խոչընդոտ՝ Հայաստանի Հանրապետության կողմից ՀԱՊԿ-ից դուրս համակարգային ռազմական բաղադրիչ զարգացնելու առումով։

Այսպիսով, Ռազմավարության համաձայն՝ և՝ քաղաքական, և՝ ռազմական անվտանգության ոլորտում իրականացվող և/կամ իրականացվելիք միջոցառումները միտված են Հավաքական անվտանգության շահերի ապահովմանը, կրում են փոխկապակցված բնույթ (քաղաքական, դիվանագիտական, պաշտպանական և այլն) և պահանջում են համակարգում, ինչը Կազմակերպության ռազմավարական նպատակի (Հավաքական անվտանգության ապահովման) իրագործման տեսանկյունից օրինաչափ է, սակայն Հայաստանի Հանրապետության համար իիստ սահմանափակող՝ Կազմակերպության շրջանակներից դուրս համակարգային

⁹¹ Հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.europarl.europa.eu/news/en/headlines/priorities/ukraine/20221118IPR55707/european-parliament-declares-russia-to-be-a-state-sponsor-of-terrorism>

ուազմաքաղաքական հարաբերություններ պլանավորելու, կիրարկելու, հետևարար նաև՝ անվտանգային առումով արտաքին մաներականություն ապահովելու համար:

ԲԱԺԻՆ II ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԷՌԹՅՈՒՆԸ

Մինչ հայ-ռուսական երկկողմ և ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող ռազմատեխնիկական համագործակցությանն անդրադարնալը, անհրաժեշտ է հետազոտել, թե ինչ են իրենցից ներկայացնում ՀԱՊԿ պատասխանատվության գոտին և ՀԱՀ ուժերն ու միջոցները ռազմատեխնիկական համագործակցության բնույթն ու էությունը լավագույնս ներկայացնելու համար: *Հետևարար, սույն բաժինը հետազոտությունը է 1) ՀԱՊԿ ՀԱՀ միջոցներն ու ուժերը, 2) դրանց բաղկացուցիչ հանդիսացող Հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում գործող ուժերը, 3) դրանց բաղկացուցիչ հանդիսացող Արագ արձագանքման հավաքական ուժերը, 4) Կազմակերպության շրջանակներում և հայ-ռուսական երկկողմ հարթության վրա իրականացվող ռազմատեխնիկական համագործակցության հիմնական շեշտադրումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռազմատեխնիկական համագործակցության շրջանակը ձևավորող փաստաթղթերի մեծ մասը հասանելի չէ բաց ուժիմով՝ ոլորտին վերաբերող հետազոտությունը հենվում է բաց տիրույթում հասանելի փաստաթղթերի դրույթները ՀԱՊԿ ռազմավարական նպատակի (Հավաքական անվտանգության ապահովման) իրագործման տեսանկյունից դիտարկելու մոտեցման վրա:*

1) ՀԱՊԿ ՀԱՀ միջոցներ և ուժեր

ՀԱՊԿ պատասխանատվության գոտիները ներառում են երեք պատասխանատվության տարածաշրջաններ՝ հարավ-Եվրոպական (Բելառուս, Ռուսաստան), կովկասյան (Հայաստան-Ռուսաստան) և կենտրոնասխական (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ռուսաստան): Յուրաքանչյուր պատասխանատվության տարածաշրջան, հաշվի առնելով աշխարհագմավարական դիրքը, ներառում է մեկ կամ մի քանի անդամ պետությունների տարածքներ, որոնց շրջանակներում ապահովվում են նրանց ազգային և հավաքական անվտանգության շահերը: Կովկասյան պատասխանատվության տարածաշրջանում ներառված են Հայաստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունը: ՀԱՊԿ պատասխանատվության գոտու վերոնշյալ հատվածում գործում է Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում գորքերի (ուժերի) միացյալ խմբավորում և Հակաօղային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ: Այս երկուսը՝ Արևելյան Վրոպական տարածաշրջանում գործող գորքերի (ուժերի) միացյալ

խմբավորման և Հակաօդային պաշտպանության համատեղ տարածաշրջանային համակարգի, Կենտրոնասիական տարածաշրջանում գործող Արագ արձագանքման հավաքական ուժերի և Հակաօդային պաշտպանության համատեղ տարածաշրջանային համակարգի, Արագ արձագանքման հավաքական ուժերի, խաղաղապահ ուժերի և Հավաքական ավիացիոն ուժերի հետ միասին կազմավորում են ՀԱՊԿ ՀԱՀ ուժերն ու միջոցները:

ՀԱՀ ուժերն ու միջոցները նախատեսված են մասնակցելու այնպիսի գործողություններում ինչպիսիք են՝ ՀԱՊԿ մեկ կամ մի քանի անդամ պետությունների նկատմամբ զինված հարձակումը (ազրեսիայի) կանխիելն ու հետ մղելը, զինված գործողություններն ու հակամարտությունները տեղայնացնելը, անդամ պետությունների անվտանգության մարտահրավերներին ու սպառնալիքներին հակազդող միջոցառումները, անդամ պետությունների պետական սահմանների, պետական և ռազմական օրբեկուների պահպանությունն ուժեղացնելը, խաղաղապահ գործողությունները, ինչպես նաև ռազմական գործողություններ իրականացնելիս կամ այդ գործողությունների հետևանքով առաջացող վտանգներից բնակչությանը պաշտպանելը և այլն։ Ուժերի և միջոցների կիրառման վերաբերյալ որոշում կայացնելու առաջարկների պատրաստման հիմնական ձևը Կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչների և պրոֆիլային հանձնաժողովների համատեղ խորհրդակցությունների մեխանիզմն է։ Դրանք կարող են իրականացվել տարբեր մակարդակներում։ Աշխատանքի սկիզբը մեկ կամ մի քանի պետությունների օգնության պաշտոնական խնդրանքն է։ Հավաքական անվտանգության խորհուրդը որոշում է կայացնում ուժերի և միջոցների կիրառման և անհրաժեշտ օգնության տրամադրման մասին՝ հիմնվելով համապատասխան կոմիտեների և կազմակերպության քարտուղարության առաջարկությունների վրա։⁹²

2) Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում գործող ուժեր

Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում գորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը ստեղծվել է ՀՀ և ՌԴ երկկողմ պայմանավորվածությունների հիման վրա։ Յուրաքանչյուր տարի այս խմբավորման կազմից կառավարման մարմինների և գորքերի (ուժերի) հետ անցկացվում են օպերատիվ և մարտական պատրաստության համատեղ միջոցառումներ։

Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում Հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգը (այսուհետ՝ ՀԱԿՏ ՀՕՊ ԱՌՀ) ստեղծվել է «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 2015 թ. դեկտեմբերին ստորագրված Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային

⁹²Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://odkb-csto.org/structure/>

համակարգ ստեղծելու մասին» համաձայնագրի հիման վրա⁹³: Սույն Համաձայնագիրը կնքվել է հինգ տարի ժամկետով՝ հնգամյա ժամանակահատվածներով դրա գործողության ինքնաբերաբար երկարաձգման հնարավորությամբ, եթե Կողմերից որևէ մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին հերթական ժամանակահատվածի ավարտից առնվազն վեց ամիս առաջ: ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ-ն հանդիսանում է ԱՊՀ ՀՕՊ համակարգի բաղկացուցիչ մասը և գտնվում է դրա օրենսդրական բազայի շրջանակներում:⁹⁴

ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ գորքերի (ուժերի) ու հակաօդային պաշտպանության այլ տարածաշրջանային համակարգերի կազմի մեջ մտնող գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների համակարգումն իրականացնում է ՈՒ զինված ուժերի օդատիեզերական ուժերի գլխավոր հրամանատարը: ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների ընդհանուր դեկավարումն իրականացնում է ՈՒ Հարավային զինվորական օկրուզի գորքերի հրամանատարը: Հաշվի առնելով տարածաշրջանում ՀՀ և ՈՒ տարածքների անջատվածությունը՝ հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի կազմում ՀՀ պետական սահմանի ներքո առանձնացվեց Հավաքական անվտանգության առանձին շրջանի հակաօդային պաշտպանության միավորված համակարգ, որի գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների կառավարումը վերապահված է ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության գորքերի պետին⁹⁵: ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ ռազմական ենթակառույցի օբյեկտների օգտագործումն ու զարգացումը, ինչպես նաև դրանց Կողմերի անվտանգության ապահովման շահերից ելնելով, ըստ նշանակության օգտագործման պատրաստության մեջ պահելն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմական ենթակառույցի օբյեկտների համատեղ օգտագործման մասին» 2002 թ. հոկտեմբերի 1-ի համաձայնագրին համապատասխան⁹⁶, որն է իր հերթին նախատեսում է Կողմերի ռազմական ենթակառույցի օբյեկտների համատեղ օգտագործման հետ կապված հարցերը կարգավորելիս յուրաքանչյուր կոնկրետ օբյեկտի վերաբերյալ առանձին պայմանագրի կնքում:

Պայմանագրի համաձայն՝ ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ գորքերը (ուժերը) ագրեսիայի անմիջական սպառնալիքի և պատերազմի ժամանակ կատարում են մարտական առաջադրանքներ և կիրառվում են համատեղ գործողությունների պլանին համապատասխան:

⁹³ Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 11-ին և հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115436>

⁹⁴ Տես՝ <https://cis.minsk.by/news/12024/ob-obedinennoj-sisteme-protivovozdusnoj-oborony-stran-sng>

⁹⁵ Տես՝ «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 2015 թ. դեկտեմբերին ստորագրված Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագրի 6-րդ հոդվածը:

⁹⁶ Տես՝ Համաձայնագրի 11-րդ հոդվածը:

Խաղաղ ժամանակ ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ վրա դրվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ տարածաշրջանում հակաօդային պաշտպանության մարտական հերթապահության կազմակերպումն ու իրականացումը, հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի գորքերի (ուժերի) մարտական կառավարման համակարգը, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան կիրառման համար մշտապես պատրաստվածության մեջ պահելը, հակաօդային պաշտպանության տարածաշրջանային համակարգերի կազմի մեջ մտնող այլ գորքերի (ուժերի) հետ փոխգործակցությունը, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների ՀՕՊ միավորված համակարգի մաս կազմող գորքերի (ուժերի) և միջոցների հետ փոխգործակցության իրականացումը: Կողմերը (Հայաստանն ու Ռուսաստանը) պարտավոր են նաև ապահովել ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ-ի գորքերի (ուժերի) հագեցումը սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով՝ Կողմերի ռազմատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա, ինչպես նաև ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ-ի գորքերի (ուժերի) մարտական պատրաստության և ուսուցման պահանջների սահմանման մոտեցումների միասնականությունն ու դրանց օպերատիվ և մարտական պատրաստության կազմակերպումը:

Ուշագրավ է, որ Համաձայնագրին կից հավելվածով նախատեսված «Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանի հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի մասին» Կանոնակարգի 5-րդ կետի 5-րդ պարբերության համաձայն՝ խաղաղ ժամանակ ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ գորքերը (ուժերը) պահպանում են իրենց ազգային հրամանատարություններին անմիջական ենթակայությունը: Իսկ Կանոնակարգի 7-րդ կետը նախատեսում է, որ ՀԱԿՏ ՀՕՊ ՄՏՀ Հակաօդային պաշտպանության հերթապահ ուժերի կողմից գենքի կիրառման կարգը սահմանվում է այն Կողմի օրենսդրությամբ, որի օդային տարածքում գտնվում է օբյեկտը, որի նկատմամբ կիրառվում է գենքը:

Այսպիսով, համաձայնագրի 1-ին հոդվածով Հավաքական անվտանգության առանձին շրջան» հասկացությունը բնորոշվում է որպես ՀՀ տարածքի և օդային տարածության սահմաններում տարածաշրջանի մաս, հետևաբար, վերոնշյալ Պայմանագիրը չի գործել/գործում Լեռնային Ղարաբաղի տարածքի շրջանակներում: Միևնույն ժամանակ, պայմանագրային դրույթների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՕՊ միավորման առաջնային նպատակը ՀՀ օդային տարածքի պաշտպանությունն է, և ՀՀ օդային տարածքում սպառնալիքների առկայության պարագայում այն պետք է ենթարկվի ՀՀ համապատասխան մարմինների որոշումներին: 2022 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ ՊՆ տարածած հայտարարության համաձայն⁹⁷ «Վարդենիսի, Սոթքի, Արտանիշի, Իշխանասարի, Գորիսի և Կապանի ուղղություններով հակառակորդը կիրառել է իրետանային միջոցներ, ականանետեր, ԱԹՍ-ներ և խոշոր տրամաչափի հրաձգային գինատեսակներ թիրախավորելով թե՝ ռազմական, և թե՝ քաղաքացիական ենթակառուցվածքները:» ՀՀ պաշտպանական գերատեսչության 2022 թ. սեպտեմբերի 14-ին տարածված հայտարարության⁹⁸

⁹⁷ Տես՝ <https://www.mil.am/hy/news/11013>

⁹⁸ Տես՝ <https://www.mil.am/hy/news/11019>

համաձայն՝ «Մասնավորապես՝ Զերմուկի ուղղությամբ հակառակորդը կիրառել է հարվածային անօդաչու թռչող սարքեր»: Այսպիսով, ակներև է, որ ՀՀ տարածքը՝ Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում Հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի պատասխանատվության գոտին, ենթարկվել է այդ թվում նաև օդային հարձակման: Հարց է առաջանում՝ գործե՞լ է արդյոք համակարգը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա 2022 թ. սեպտեմբերին, ինչպես նաև դրան նախորդած 2021 թ. մայիսին ու 2020 թ. հոկտեմբերին աղբեջանական կողմի իրականացրած ազրեսիայի ժամանակ: Սույն հարցադրումն առավել արդիական է դառնում աղբեջանական լրատվական միջոցների տարածած տեսանյութերի⁹⁹ համատեքտում, որոնցից կարելի է եզրակացնել, որ 2022 թ. սեպտեմբերին կամ համատեղ ՀՕՊ գորքերը գործել են անարդյունավետ և ոչ բավարար ներդաշնակեցված, կամ մարտի դաշտում հայկական կողմի հրամանների կատարման համակարգը չի աշխատել, ինչի հետևանքով որոշ ՀՕՊ ստորաբաժանումներ խոցվել են մարտի մեջ չմտած և մարտական պատրաստվածության չբերված վիճակում:

3) Արագ արձագանքման հավաքական ուժեր

ՀԱՀ ուժերի և միջոցների բաղկացուցիչն են նաև Արագ արձագանքման հավաքական ուժերը¹⁰⁰, որոնց կազմում են ՀԱՊԿ անդամ պետությունների հատուկ նշանակության ուժերի կազմավորումները՝ ունակ կատարելու ինչպես ռազմական, այնպես էլ հատուկ բնույթի խնդիրներ (ընդհանուր թիվը՝ շուրջ 20 հազար մարդ): Արագ արձագանքման հավաքական ուժերը նախատեսված են ՀԱՊԿ անդամ պետությունների անվտանգության մարտահրավերներին և սպառնալիքներին արագ արձագանքելու համար: Դրանք պետք է տեղակայվեն անդամ ցանկացած պետության տարածքում՝ ռազմական ուժ կիրառելու պատրաստականություն ցուցադրելու նպատակով, կանխարգելեն և հետ մղեն զինված հարձակումն ու ազրեսիան, տեղայնացնեն զինված հարձակումները, մասնակցեն անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի միջոցառումներին, ամրապնդեն անդամ պետությունների պետական սահմանների պաշտպանության գորքերի և պետական ու ռազմական օբյեկտների պահպանությունը, իրականացնեն միջոցառումներ՝ միտված ռազմական գործողությունների ընթացքում կամ դրա հետևանքով առաջացած վտանգներից բնակչության պաշտպանությանը և այլն:

Հատկանշական է, որ ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի մարտական ներդաշնակեցման նպատակով 2012 թ. Հայաստանում կազմակերպվել և անցկացվել են ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի

⁹⁹ Տես՝ <https://apa.az/ru/armiya/moment-unictozeniya-s-300-i-drugoi-voennoi-tehniki-armenii-video-493220>

¹⁰⁰ Արագ արձագանքման հավաքական ուժերը ձևավորվել են ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի 2009թ. փետրվարի 4-ի որոշման հիման վրա:

զորավարժություններ: ¹⁰¹ Զորավարժությունների ընթացքում ՀԱՊԿ ուժերը ջախչախիել են «Սևանյա» համբապետության սահմանները անօրինական հատած ու դրա ինքնիշխան տարածքները բռնազավթած հակառակորդի ուժերը: Զորավարժության սցենարի համաձայն՝ հակառակորդին, դիրքային մարտերի արդյունքում, հաջողվել է զրավել ու ամրանալ Սևանյա հանրապետության սահմանային տարածքներում: Բացի այդ, հակառակորդը հարվածներ է հասցրել զինվորական ու քաղաքացիական ենթակառուցվածքներին՝ կիրառելով տարբեր տեսակի զինատեսակներ և օդուժ: Դրան ի պատասխան՝ ՀԱՊԿ ՀԱԽ որոշման համաձայն՝ ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերը, նախ կիրառելով օդուժ՝ ռեակտիվ և փողային հրետանի, ապահովել են հակառակորդի մարդկային ուժերի հզոր խոցումներ, այնուհետև՝ ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի հրամանատարը մարտի մեջ է նետել մոտոհրածագային ստորաբաժանումներ: Զորավարժության ընթացքում ազատագրվել են հակառակորդի կողմից բռնազավթված բնակավայր, գերիներ ու տարածքներ: Զորավարժությանը մասնակցել են ՀԱՊԿ անդամ բոլոր պետությունները:

Զորավարժության սցենարը բավական մոտ է 2021 և 2022 թթ. ընթացքում Հայաստանի վրա տեղի ունեցած աղբեջանական ռազմական հարձակումների սցենարին, որոնց հետևանքով աղբեջանական կողմը փաստացի օկուպացրել է ավելի քան 127 քառակուսի կմ ՀՀ սուվերեն տարածք¹⁰²: Հենվելով ՀՀ պաշտպանության նախարարության սետպեմբերի 13-ի¹⁰³, սետպեմբերի 13-ից լուս 14-ի զիշերվա¹⁰⁴ և սետպեմբերի 14-ի¹⁰⁵ հայտարարությունների, ինչպես նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պատրաստված «Հայաստանի Հանրապետության վրա աղբեջանական զինված հարձակման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցի վրա՝ կարող ենք արձանագրել, որ տեղի է ունեցել ոչ միայն ՀԱՊԿ անդամ հանդիսացող Հայաստանի ինքնիշխան տարածքի բռնազավթում, այլև դրա մի շարք բնակավայերի (Զերմուկ, Վարդենիս, Կապան, Գորիս, Քարաշեն, Վերիշեն, Կոռնիձոր, Խոզնավար, Իշխանասար, Ճակատեն, Ներքին Հանդ, Ծավ, Դավիթ-Բեկ, Արտանիշ, Սրաշեն, Սոթք, Նորաբակ, Կուտ, Գեղամասար և Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի այլ բնակավայրեր) նախապես ծրագրավորված և միտունավոր թիրախավորում: Վերոնշյալ բնակավայրերի նկատմամբ Աղբեջանի կողմից կիրառվել են տարբեր տրամաչափի զինատեսակներ, ներառյալ՝ ծանր հրետանի, տարբեր տրամաչափի ականանետեր, հարվածային անօդաչու թռչող սարքեր, խոշոր տրամաչափի հրանոթներ, ռեակտիվ կրակի համակարգեր և այլն:

Աղբեջանի զինված ուժերի կողմից իրականացված ոչ ընտրողական հարձակումների հետևանքով եղել են քաղաքացիական զոհեր, հարյուրավոր ավերված

¹⁰¹ Տես՝ https://odkb-csto.org/training/trainings_interaction/na_uchenii_ksor_odkb_vzaimodeystvie_2012_v_armenii_proshla_generalnaya_trenirovka_po_otrabotke_prakt-1115/#loaded

¹⁰² Տես՝ <https://www.azatutyun.am/a/32098182.html>

¹⁰³ Տես՝ <https://www.mil.am/hy/news/11007>

¹⁰⁴ Տես՝ <https://www.mil.am/hy/news/11019>

¹⁰⁵ Տես՝ <https://www.mil.am/hy/news/11021>

բնակելի տներ, ուսումնական և առողջապահական հաստատություններ, հյուրանոցներ, քաղաքացիական ու վարչական շենքեր: Աղբեջանական զինված ուժերը կրակ են բացել նաև Սյունիքի մարզի Նորավան, Սրաշեն և տասնյակ այլ համայնքների ուղղությամբ՝ վնասելով քաղաքացիական բնակչության համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ գազամատակարարման խողովակներ, օպտիկամանրաթելային մալուխներ և բարձրավոլտ էլեկտրալարեր: Վնասվել են Իշխանասարում «ԲԷՅ» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող էլեկտրահաղորդման օդային գծի հաղորդալարերը և խարսխային հենարանի լայնակ: Վերջինիս արդյունքում սահմանափակվել է դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրաէներգիայի արտահանումը: Ռիսկերը նվազեցնելու նպատակով բեռնաթափվել են «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և հայաստանյան որոշ այլ ՓԲԸ-ների կայանները՝ մինչև մինիմալ բեռնվածությունը: «ԲԷՅ» ՓԲԸ-ի աշխատակիցները ավելի քան 12 ժամ հնարավորություն չեն ունեցել վերանորոգման նպատակով մոտենալ վնասված հատվածներին՝ աղբեջանական կողմի կրակի պատճառով: Նմանատիպ ենթակառուցվածքների թիրախավորումը, դրանց վերանորոգմանը տևական ժամանակով խոչընդոտելը վկայում են աղբեջանական կողմի հներգետիկ՝ այդ թվում ատոմային էներգիայի ոլորտում հնարավորինս մեծ վնասներ պատճառելու և սպառնալիքներ առաջացնելու մտադրության մասին:¹⁰⁶

Այսպիսով՝ թեպետ զորավարժությունների ընթացքում ՀԱՊԿ-ը, սցենարի համաձայն, տեղակայել է Արագ արձագանքնման հավաքական ուժեր և զործարկել է հակառակորդին անդամ պետության տարածքից դուրս շպրտելուն և անդամ պետության տարածքային ամբողջականությունը վերականգնելուն միտված գործողություններ՝ 2022թ. սեպտեմբերին աղբեջանական կողմի իրականացրած իրական ազրեսիայի ժամանակ Կազմակերպությունն ի սկզբանե որդեգրեց կրավորական դիրք: Հայաստանի Հանրապետության Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածի վրա հիմնված դիմումին¹⁰⁷ հաջորդեց Կազմակերպության գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասի և Միացյալ շտաբի դեկանար Անատոլի Սիդորովի այցերը Հայաստան: 2022թ. հոկտեմբերի 28-ի Հավաքական անվտանգության խորհրդի նիստի ընթացքում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի ելույթների բռվանդակությունից ակներև դարձավ, որ Կազմակերպությունը չի պատրաստվում ո'չ դիվանագիտական, ո'չ ռազմաքաղաքական և ո'չ ռազմական միջոցներով վերականգնել ՀՀ տարածքային ամբողջականությունը:¹⁰⁸¹⁰⁹ Ավելին՝ 2022թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի

¹⁰⁶ Տես՝ ՀՀ ՄԻՊ արտահերթ հրապարակային գեկույցը՝ Հայաստանի Հանրապետության վրա աղբեջանական զինված հարձակման վերաբերյալ, սեպտեմբեր, 2022

¹⁰⁷ Տես https://seco.am/security_council/sessions/96?lang=hy

¹⁰⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://kremlin.ru/events/president/news/69700/videos>

¹⁰⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.youtube.com/watch?v=XmFGlcI6Xso&ab_channel=%D0%90%D0%A2%D0%9D%D3A%D0%BD%

նախազահությամբ տեղի ունեցած ՀԱԽ հերթական նիստի աղյունքում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրաժարվեց ստորագրել «ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հոչակագիրն ու Հայաստանի Հանրապետությանը՝ օժանդակություն ցուցաբերելու համատեղ միջոցառումների մասին» նախագիծը՝ արձանագրելով, որ Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին չի զայել Ադրբեջանին ազրեսիվ գործողությունների դիմելիս, և մինչ օրս ՀԱՊԿ անդամ պետությունները չեն կարողացել որոշում կայացնել Հայաստանի դեմ ադրբեջանական ազրեսիայի վերաբերյալ Կազմակերպության արձագանքի առումով:

4) Ռազմատեխնիկական համագործակցություն

Հավաքական անվտանգության ձևավորման կարևորագույն գործոններից մեկը ՀԱՊԿ անդամ պետությունների շրջանակներում ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությունն է, որը միտված է 1992թ. մայիսի 15-ին ստորագրված Հավաքական անվտանգության մասին պայմանագրի գործառնական իրականացմանը: Սույն ոլորտում համագործակցության սկզբունքները ձևավորող բազային փաստաթուղթը «1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» Համաձայնագիրն է¹¹⁰, որը, 2010թ. վերջնական խմբագրությամբ սահմանում է ՀԱՊԿ պետությունների կողմից «Հավաքական անվտանգության տարածաշրջաններում բազմակողմ ուժերի և միջոցների կազմի մեջ» հատկացվող ազգային զորամիավորումների համար ռազմական նշանակության արտադրանքի (այսուհետ՝ ՌՆԱ) մատակարարման արտոնյալ պայմանները՝ 1992թ. մայիսի 15-ին ստորագրված Հավաքական անվտանգության պայմանագրի գործառնական իրականացման նպատակով:

Համաձայնագրի դրույթների համաձայն՝ արտոնյալ պայմաններով մատակարարումները կատարվում են կողմերի ռազմատեխնիկական համագործակցության սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերով, իսկ ՌՆԱ-ի մատակարարման գինը ձևավորվում է Կողմերի ազգային գինված ուժերի կողմից սեփական կարիքների համար գնվող ՌՆԱ-ի գների հիման վրա: Անհրաժեշտ է ընդգծել, որ թեպետ Համաձայնագիրը նախատեսում է ռազմական նշանակության արտադրանքի առևտրում արտոնությունների տրամադրում ՀԱՊԿ անդամ պետություններին՝ այն կրում է շրջանակային բնույթ՝ առանց հատակեցնելու ՌՆԱ-ի գնման իրական մեխանիզմները, գնումների ընթացակարգերը, մատակարարվող սպառազինությունների որակը և այլն: Սույն հարցերն արտացոլելու համար ՀԱՊԿ

[D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8%D0%91%D0%B5%D0%BB%D0%B0%D1%80%D1%83%D1%81%D0%80%D0%B8%D0%BC%D0%B8%D1%80%D0%BA](https://odkb-csto.org/documents/documents/soglashenie_obeosnovnykh_printsipakh_voenno_tekhnicheskogo_sotrudnichestva_mezhdu_gosudarstvami_ucha/#loaded)

¹¹⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://odkb-](https://odkb-csto.org/documents/documents/soglashenie_obeosnovnykh_printsipakh_voenno_tekhnicheskogo_sotrudnichestva_mezhdu_gosudarstvami_ucha/#loaded)

[csto.org/documents/documents/soglashenie_obeosnovnykh_printsipakh_voenno_tekhnicheskogo_sotrudnichestva_mezhdu_gosudarstvami_ucha/#loaded](https://odkb-csto.org/documents/documents/soglashenie_obeosnovnykh_printsipakh_voenno_tekhnicheskogo_sotrudnichestva_mezhdu_gosudarstvami_ucha/#loaded)

անդամ պետությունները կնքում են հատուկ պայմանագրեր, ինչն էլ իր հերթին «1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» Համաձայնագրի շրջանակներում իրականացվող ՌՆԱ-ի առևտուրը դարձնում է մատակարարող և ներմուծող կողմերի միջև երկկողմ, յուրահատուկ պայմանավորվածությունների արդյունք՝ դրանից բխող դրական և/կամ բացասական հետևանքներով:

Համաձայնագրի շրջանակներում ստացված արտադրանքը/տեղեկատվությունը, ինչպես նաև մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը ստացված արտադրանքը/տեղեկատվությունը կարող է լինել «ինչպես մասամբ, այնպես էլ ընդհանուր առմամբ մտավոր կամ արդյունաբերական սեփականության առարկա, այդ իմաստով այն փոխանցած կողմից բացառիկ կամ այլ իրավունքի օբյեկտ է»: «Կողմերն, առանց մատակարարող Կողմից նախնական գրավոր համաձայնության, իրավունք չունեն Համաձայնագրի շրջանակներում մատակարարված ՌՆԱ-ն վաճառել կամ փոխանցել այլ ազգային գինվորական կազմավորումների, օտարերկրյա պետություններին, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կամ միջազգային կազմակերպություններին»:

Համաձայնագրի առանցքային դրույթներից մեկը վերաբերում է մատակարարված արտադրանքի վերահսկողությանը: Այսպես, «մատակարարող կողմն իրավունք ունի վերահսկողություն իրականացնել մատակարարված արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ», այն է՝ ստուգել դրանց առկայությունը Հավաքական անվտանգության տարածաշրջաններում բազմակողմ ուժերի է միջոցների կազմում հատկացված գինվորական կազմավորումներում, դրա դուրսգրման հիմնավորվածությունը (այդ թվում՝ անդառնալի կորուստների համար), ինչպես նաև մատակարարման հետ կապված և մատակարարող կողմի պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության միջոցների պահպանումը:

Վերոնշյալ պարտավորությունները խախտող կողմը պարտավորվում է եռամսյա ժամկետում ապրանքը մատակարարող կողմին ազատ փոխարկելի արժույթով վճարել մատակարարված ՌՆԱ-ի գնի և համաշխարհային շուկա նույնանման արտադրանքի մատակարարման ժամանակ ստեղծված գնի տարբերությունը: Հենվելով մատակարարված ՌՆԱ-ի՝ այլ գինվորական կազմավորումներին փոխանցելու արգելքի պահանջի վրա, կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ձեռք բերած/բերվելիք ՌՆԱ-ն իր հայեցողությամբ իրավասու չէ տեղափոխել իր իսկ ազգային գինվորական կազմավորումների շրջանում, ինչը կարող է զգալի սահմանափակել Հայաստանի կողմից իր գինված ուժերի սպառազինության բաշխումը:

Եթե որևէ անդամ պետություն դուրս է գալիս 1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրից, ապա տվյալ պետությունը, Կողմերի համաձայնությամբ, սահմանված ժամկետում, արտադրանքը մատակարարվ կողմին է փոխհատուցում արտադրանքի գնի և համաշխարհային շուկային

համանման արտադրանքի մատակարարման դեպքում ստեղծված գնի միջև ազատ փոխարկելի արժույթի տարբերությունը: Միևնույն ժամանակ, եթե որևէ անդամ պետություն որոշում է կայացնում դուրս գալ Համաձայնագրից, ապա պարտավորվում է 6 ամիս առաջ ՀԱԽ քարտուղարությանը գրավոր ծանուցում ուղարկել իր մտադրության մասին, և ծանուցում ստանալու օրվանից 6 ամիս հետո Համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը այդ կողմի նկատմամբ: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ եթե ծագում են Համաձայնագրի գործողության դադարեցման հետ կապված վիճելի հարցեր, կողմերը պարտավորվում են դրանք լուծել բանակցությունների միջոցով: Ընդ որում, քանի դեռ շահագրգիռ կողմերը բանակցությունների միջոցով չեն կարգավորել Համաձայնագրի գործողության դադարեցման հետ կապված բոլոր վիճելի հարցերը, Համաձայնագիրը լքել ցանկացող Կողմը պարտավորվում է՝

- ✓ առանց մատակարար Կողմի նախնական գրավոր համաձայնության մատակարարված արտադրանքը չվաճառել կամ չփոխանցել այլ ազգային զինվորական կազմավորումներին, օտարերկրյա պետություններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ միջազգային կազմակերպություններին, իսկ սույն պարտավորությունը խախտելու դեպքում եռամայա ժամկետում մատակարար կողմին վճարել արտադրանքի գնի և համաշխարհային շուկա նույնանման արտադրանքի մատակարարման ժամանակ ստեղծված գնի տարբերությունը (ազատ փոխարկելի արժույթով),
- ✓ ապահովել Համաձայնագրի իրականացման ընթացքում ստացված տեղեկությունների պաշտպանությունը և այդ տեղեկատվությունը չօգտագործել ի վնաս կողմերից որևէ մեկի շահերի:

Բացի այդ, այս դեպքում մատակարարող կողմը պահպանում է նաև Համաձայնագրի շրջանակներում մատակարարված արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իր իրավունքը: Քանի դեռ շահագրգիռ կողմերը բանակցությունների միջոցով չեն կարգավորել վիճելի հարցերը, ուժի մեջ են մնում նաև Համաձայնագրի 9-րդ հոդվածների դրույթները (եթե որևէ անդամ պետություն դուրս է գալիս 1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության պայմանագրից, ապա տվյալ պետությունը, Կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետում, արտադրանքը մատակարարած Կողմին է փոխհատուցում ռազմական նշանակության արտադրանքի գնի և համաշխարհային շուկային համանման ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման դեպքում ստեղծված գնի միջև ազատ փոխարկելի արժույթի տարբերությունը):

Եթե որևէ անդամ պետություն կարծում է, որ Համաձայնագրի դրույթներից բխող պարտավորությունները չեն կատարվել և դրա հետևանքով իր շահերին վնաս է պատճառվել, կարող է «հայտարարել իր և համապատասխան կողմի միջև հարաբերություններում Համաձայնագրի գործողության կասեցման կամ դադարեցման մասին որպես ամբողջություն կամ դրա մի մաս»: Սույն դրույթների դիտարկման արդյունքում առաջանում է հետևյալ հարցադրում՝ եթե որևէ անդամ պետություն Հայաստանին չի ապահովել ՌՆԱ-ով, և արդյունքում Հայաստանն իր դեմ

իրականացված ռազմական ազրեսիայի ժամանակ ի գորու չի եղել ապահովել իր տարածքային ամբողջականությունը, և այդ ընթացքում չի գործարկվել նաև Պայմանագրի 4-հոդվածից բխող հավաքական պաշտպանության ապահովման մեխանիզմը, ապա կարող է արդյոք մատակարարումը չապահովելու փաստը Հայաստանի կողմից դիտարկվել որպես բավարար հիմք՝ հայտարարելու իր և մատակարարող կողմի միջև հարաբերություններում Համաձայնագրի գործողության կասեցման կամ դադարեցման համար: Երկրորդ ուշադրության արժանի հարցադրումը հետևյալն է՝ եթե այնուամենայնիվ Պայմանագրի 4-րդ հոդվածից բխող հավաքական պաշտպանության մեխանիզմի չգործարկվելը խոչընդուռ չէ, և Հայաստանը կարող է հայտարարել իր և մատակարարող կողմի միջև հարաբերություններում Համաձայնագրի գործողության կասեցման կամ դադարեցման մասին, ապա ինչպես են կարգավորվելու Հայաստանի և մատակարարումը չկատարող Կողմի միջև տարբնթերցումները, արդյոք գործելու է նույն այն մեխանիզմը, որը նախատեսված է Համաձայնագրով՝ Համաձայնագրի գործողության դադարեցման հետ կապված ծագող բոլոր վիճելի հարցերը լուծելիս:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ 1) Համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ՌՆՍ-ն տրամադրվում է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության տարածաշրջաններում բազմակողմ ուժերի և միջոցների կազմի մեջ հատկացված ազգային կազմավորումներին, 2) իսկ ՀԱՊԿ ՀԱՀ ուժերին և միջոցներին վերապահված գործառույթներն ըստ էության միտված են ապահովելու Պայմանագրի պրակտիկ իրագործումը (Հավաքական անվտանգության կարիքների ապահովում), այսինքն Պայմանագրի 2-րդ և 4-րդ հոդվածների կիրարկումից բխող գործառույթներ, 3) Հայաստանն իրավասու չէ առանց մատակարար Կողմի նախնական գրավոր համաձայնության մատակարարված արտադրանքը փոխանցել այլ ազգային զինվորական կազմավորումների՝ սույն հետազոտությունն առաջարկում է Համաձայնագրի շրջանակներում իրականացվող ռազմատեխնիկական համագործակցության արդյունավետությունը և/կամ անարդյունավետությունը դիտարկել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և սուվերենության պաշտպանության գործում ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ապահովման սկզբունքների իրացման փաստի և/կամ կիրարկման արդյունավետության և/կամ անարդյունավետության տեսանկյունից, և դիտարկման արդյունքները քննել (և՝ բացասական, և՝ դրական) սույն Աշխատության ներածական մասում ներկայացված հայեցակարգային դրույթներից բխող հնարավորությունների և առաջին զյուրում հետազոտված հնարավորությունների և սահմանափակումների համատեքստում:

Բաց աղբյուրների վրա հենվելով հնարավոր չէ արձանագրել, թե Հայաստանի Հանրապետություն ներմուծված ՌՆՍ-ի քանի տոկոսն է իրականացվել/իրականացվում ՀԱՊԿ շրջանակներում առկա Համաձայնագրի, և քանի տոկոսը՝ 2013 թ. հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին»

պայմանագրի¹¹¹ շրջանակներում: Վերոնշյալ արձանագրումը կարևոր է, քանի որ հայուսական երկրողմ պայմանագրով, ի տարբերություն ՀԱՊԿ շրջանակներում առկա Համաձայնագրի, Հայաստանը կարող է ձեռք բերել ՌՆՍԱ իր ցանկացած գորամիավորումների համար: Երկրողմ պայմանագրի համաձայն՝ մատակարարվող ապրանքի գները ձևավորվում են ազգային զինված ուժերի շահերից ելնելով պատվերներ կատարելիս ռազմական նշանակության արտադրանքի գնագոյացումը կարգավորող ՌԴ օրենսդրությանը համապատասխան և Հայաստան մատակարարվող ռազմական արտադրանքն ազատվում է մաքսատուրքերից:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ա) ՀԱՊԿ շրջանակներում ռազմատեխնիկական ոլորտում փոխգործակցության զարգացումը հանդիսանում է ռազմական անվտանգության ոլորտում հավաքական շահերի ապահովմանն աջակցող կարևորագույն միջոցներից մեկը, բ) Կազմակերպության կենսունակությունն ապահովելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունը շահագրգությած է ամրապնդել ՀԱՀ ուժերն ու միջոցները և, հետևաբար, շահագրգությած պետք է լինի նաև հենց ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանին մատակարարել ՌՆԱ, ապա կարելի է առաջ քաշել ներքոնշյալ տեսակետը

- ✓ ՀԱՊԿ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներկրվող/ ներկրված արտադրանքի գերակշիռ տոկոսը իրականացվում/իրականացվել է «1992 թ. մայիսի 15-ի» Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» Համաձայնագրի շրջանակներում, և Հայաստանի կողմից դիտարկվում/ դիտարկվել է իր տարածքային ամբողջականությունն ու սուվերենությունը հավաքական հիմքի վրա պաշտպանելու հնարավորության տեսանկյունից:

¹¹¹ Հասանելի հետևյալ հղումով՝ <https://base.garant.ru/70422112/>

Առաջարկություններ

- ❖ Ազդանշել ԱՄՆ կառավարությանը և Կոնգրեսին, որ Հայաստանի Հանրապետությունը երկկողմ հարաբերություններում նպատակադրված է հասնելու ռազմավարական գործընկերության մակարդակի և ունի ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակցի կարգավիճակի ձգտելու հավակնություններ:
- ❖ ԱՄՆ կառավարությանը և Կոնգրեսին ազդանշել, որ Հայաստանի Հանրապետության անվտանգության, ներքին դիմակայունության և արտաքին մաներականության բարձրացման համար առաջնահերթություն է սահմանվել անվտանգային կարգավորումների, ռազմական համագործակցության և համապատասխան գործարքների միակողմանիությունն ու մեկ աղբյուրից վտանգավոր գերկախվածությունը զգալի նվազեցնելը՝ հետագայում նպատակ ունենալով դրանք փոխարինել կամ փոխլրացնել ԱՄՆ-ի՝ ՆԱՏՕ-ից դուրս հիմնական դաշնակցի կարգավիճակից բխող հնարավորություններով:
- ❖ ԱՄՆ գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ աշխատանքներ իրականացնել ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության խարտիայի/ակտի ընդունման և զարգացման ուղղությամբ:
- ❖ Որդեգրել ՀԱՊԿ-ը լրելուն միտված քաղաքականություն, որի շրջանակներում անհրաժեշտ է հետևողականորեն իրականացվել ներքոնշյալ քայլերը՝
 - ✓ սահմանափակել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՀԱՊԿ մարմինների հանդիպումներին,
 - ✓ նվազեցնել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը՝ ՀԱՊԿ ռազմավարական նշանակության փաստաթղթերի մշակման և համաձայնեցման գործընթացներում,
 - ✓ սահմանափակել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՀԱՊԿ շրջանակներում կազմակերպվող գորավարժություններին, հրամանատարաշտաբային վարժանքներին և զինվորականների միջև փորձի փոխանակման միջոցառումներին,
 - ✓ շեշտակի նվազեցնել Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը ՀԱՊԿ շրջանակներում գլոբալ և տարածաշրջանային անվտանգության ապահովման ոլորտում արտաքին քաղաքական դիրքորոշումների համակարգման աշխատանքներում
- ❖ Զօդուվել «1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» Համաձայնագրի շրջանակներում արտոնյալ պայմաններով ռազմական նշանակության արտադրանք ձեռք բերելու հնարավորությունից: Զուգահեռաբար, շահագրգիռ կողմերի հետ ծավալվող/ծավալվելիք ռազմական նշանակության արտադրանքի ներկրման գործընթացներում հենվելով սույն հետազոտության ներածական մասում

ներկայացված հայեցակարգային մոտեցումների և առաջին գլխում ներկայացված հնարավորությունների վրա:

- ❖ Ազդանշել Ըուսաստանի Դաշնությանը Հայաստանի Հանրապետության՝ ՀԱՊԿ-ը լրելու մտադրվածության մասին՝ սույն դիրքորոշումը գուգակցելով Հայաստան-Ըուսաստան ռազմավարական դաշնակցային հարաբերություններում առկա խնդիրների և հնարավորությունների գույքագրման և հարաբերությունների վերաիմաստավորման աշխատանքներով:
- ❖ Զեսակերպել և ռուսական կողմին ներկայացնել Հայաստանի Հանրապետության կողմից ոչբլոկային արտաքին քաղաքականության կուրս որդեգրելու շարժառիթները, ինչպես նաև՝ Հայաստանի ոչբլոկային կարգավիճակի առավելությունները՝ Հայաստանի և Ըուսաստանի շահերի համադրման համատեքստում:
- ❖ Տեսանելի քայլեր ձեռնարկել՝ ՀՀ ԶՈՒ գորախումբը Սիրիայի Արաբական Հանրապետությունից դուրս բերելու ուղղությամբ:
- ❖ Զեսավորել փորձագիտական, գիտական և արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնող շրջանակների ներկայացուցիչներից բաղկացած ինստիտուցիոնալ ձևաչափ (մարմին)՝ միտված Հայաստանի Հանրապետության այնպիսի արտաքին քաղաքականության հայեցակարգի և ազգային անվտանգության ռազմավարության համատեղ գծագրմանը, որը կբխի Հայաստանի արտաքին քաղաքական չեզոքության հայեցակարգային առանձնահատկություններից:

Oգտագործված տերմիններ

- ❖ *Ռազմավարական գործընկերություն* – միջազգային հարաբերություններում պետությունների միջև երկկողմ հարաբերության դասական դաշինքային տրամաբանությունից դուրս յուրահատուկ ձևաչափ՝ նպատակ ունենալով ստեղծել հարմարեցված ռազմավարական բնույթի հարաբերություններ:
- ❖ *ՆԱԽՕ-ից դուրս հիմնական դաշնակից* – ԱՄՆ կողմից միակողմանի շնորհվող կարգավիճակ այլ պետությանը ընդգծելով վերջինիս արտոնյալ դերը երկկողմ ռազմավարական հարաբերություններում:
- ❖ *Պաշտպանական միջոց* – Ցանկացած տարր կամ տեխնիկական տվյալ, որը հատուկ նախագծված, մշակված, կազմաձևված, հարմարեցված կամ փոփոխված է ռազմական, հրթիռային և արբանյակային օգտագործման համար կամ ներառված է Միացյալ Նահանգների զինամթերքի ցուցակում:
- ❖ *Հավելյալ պաշտպանական միջոց* – ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտին և ԱՄՆ առավինյա պահպանության ծառայությանը պատկանող պաշտպանական միջոցներ, որոնք ԱՄՆ զինված ուժերի կողմից հայտարարվել են հավելյալ/ավելցուկային:
- ❖ *ՀԱՊԿ հավաքական անվտանգություն* - ՀԱՊԿ անդամ պետությունների հավաքական շահերի պաշտպանվածության վիճակ, որը յուրաքանչյուր անդամ պետությանը թույլ է տալիս ապահովել իր անկախությունը, տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, պաշտպանունակությունը և սպառնալիքներից պաշտպանությունը՝ համատեղ գործունեության համակարգման և իրականացման հիման վրա
- ❖ *ՀԱՊԿ Հավաքական անվտանգության համակարգ* - ՀԱՊԿ մարմինների եւ պետական կառավարման ազգային մարմինների, ՀԱՊԿ անդամ պետությունների ուժերի եւ միջոցների ամբողջություն, որոնք, միջազգային իրավունքին եւ ազգային օրենսդրությանը համապատասխան, ապահովում են ՀԱՊԿ անդամ պետությունների հավաքական շահերի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը՝ հավաքական հիմունքներով
- ❖ *ՀԱՊԿ Հավաքական անվտանգության մարտահրավեր* - պայմանների ամբողջություն, որոնք կարող են վերաձել ՀԱՊԿ Հավաքական անվտանգության սպառնալիքի
- ❖ *ՀԱՊԿ Հավաքական անվտանգության մարտահրավեր* - պայմանների ամբողջություն, որոնք կարող են վերաձել ՀԱՊԿ Հավաքական անվտանգության սպառնալիքի
- ❖ *ՀԱՊԿ Հավաքական անվտանգության սպառնալիք* - ՀԱՊԿ ռազմավարական նպատակին հասնելուն խոչընդոտող գործոնների ամբողջություն
- ❖ *ՀԱՊԿ պատասխանատվության գոտի* - Կազմակերպության անդամ պետությունների տարածքներ, որոնք սահմանափակված են ՀԱՊԿ անդամ շիանդիսացող այլ պետությունների հետ պետական սահմանի հատվածներով (արտաքին սահմաններով), ներառյալ ներքին ջրերը, տարածքային ծովը և դրանց վերևում գտնվող օդային տարածքը, որոնց սահմաններում ապահովվում

են ՀԱՊԿ անդամ պետությունների ազգային և Հավաքական անվտանգության շահերը

- ❖ **ՀԱՊԿ զորքեր -** Վերոնշյալ ուժերը կոչված են ռազմաքաղաքական իրադրության զարգացման ցանկացած պայմաններում ապահովել կազմակերպության անդամ պետությունների անվտանգությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը՝ Պայմանագրի, ՀԱՊԿ կանոնադրության, ՀԱՊԿ Հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների ձևավորման և գործունեության կարգի¹, ՀԱՊԿ անդամ պետությունների ռազմական դոկտրինների դրույթների, ինչպես նաև «Մինչև 2020 թ. ՀԱՊԿ անդամ պետությունների ռազմական համագործակցության զարգացման հիմնական ուղղություններին» համապատասխան:
- ❖ **Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի զորքեր (ուժեր) -** տարածաշրջանում հակաօդային պաշտպանության խնդիրների համատեղ լուծման համար հատկացվող՝ Կողմերի գինված ուժերի ռազմական կառավարման մարմիններ, կառավարման կետեր (իրամանատարական կետեր), ինչպես նաև զինված ուժերի միավորումներ, կազմավորումներ և զորամասեր
- ❖ **Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի ռազմական ենթակառուցի օբյեկտներ -** Տարածաշրջանի սահմաններում տեղակայված զորքերի կառավարման կետեր, զորքերի (ուժերի) տեղակայման վայրեր, տեղանքի ինժեներական սարքավորման համակարգ, ՀՕՊ-ի ուժերի և միջոցների դիրքեր ու օբյեկտներ, օդանավակայաններ, կապի հանգույցներ և գծեր, վարժադաշտեր, գինանցներ, բազաներ, պահեստներ, ռազմական տեխնիկայի նորոգման ձեռնարկություններ և այլ օբյեկտներ, որոնք օգտագործվում են զորքերի (ուժերի) կողմից խաղաղ ժամանակ ամենօրյա գործունեության ընթացքում, և որոնք պլանավորվում են օգտագործվել ռազմական գործողությունների ընթացքում
- ❖ **Ռազմատեխնիկական համագործակցություն** - միջազգային հարաբերությունների բնագավառում գործունեություն, որը կապված է ռազմական նշանակության արտադրանքի արտահանման և ներմուծման, այդ թվում՝ մատակարարման կամ գնման, ինչպես նաև մշակման և արտադրության հետ
- ❖ **Ռազմական նշանակության արտադրանք** - սպառագինություն, ռազմական տեխնիկա, փաստաթղթեր, աշխատանքներ, ծառայություններ, մտավոր գործունեության արդյունքներ և դրանց նկատմամբ բացառիկ իրավունքներ (մտավոր սեփականությունը), ռազմատեխնիկական բնագավառում տեղեկատվություն, ինչպես նաև ազգային օրենսդրությամբ, կողմերի նորմատիվ իրավական ակտերով ռազմական նշանակության արտադրանքներին վերաբերող ցանկացած այլ արտադրանք

- ❖ **ՀԱԽ - ՀԱՊԿ** Հավաքական անվտանգության խորհուրդը Կազմակերպության բարձրագույն մարմինն է: Բաղկացած է Կազմակերպության անդամ պետությունների ղեկավարներից: Քննարկում է Կազմակերպության գործունեությանը վերաբերող սկզբունքային հարցեր, ընդունում է Կազմակերպության նպատակների և խնդիրների իրագործմանն ուղղված որոշումներ, ինչպես նաև ապահովում է այդ ուղղությամբ անդամ պետությունների համատեղ գործունեության համակարգումը:
- ❖ **ԱԳՆԽ - ՀԱՊԿ ԱԳ** նախարարների խորհուրդն իրականացնում է արտաքին քաղաքականության ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության համակարգումը:
- ❖ **ՊՆԽ - Պաշտպանության նախարարների** խորհուրդը համակարգում է անդամ պետությունների փոխգործակցությունը ռազմական քաղաքականության, ռազմական շինարարության, ինչպես նաև ռազմատեխնիկական ոլորտներում:
- ❖ **ԱԽՔԿ** - Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեին վերապահված է պետությունների ազգային անվտանգության ապահովման ոլորտում փոխգործակցության համակարգումը:

Հավելված 1



Հավաքական Անվտանգության մասին Պայմանագիրը ստորագրվել է 1992թ. մայիսի 15-ին, Տաշքենտում՝ Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի նախագահների կողմից: 1993թ. Պայմանագրին միացան նաև Ադրբեյչանը, Վրաստանն ու Բելառուսը: Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20-ին:

Հավելված 2



1999 թ. ապրիլի 2-ին, Մոսկվայում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի նախագահները ստորագրեցին

պայմանագրի երկարաձգման արձանագրությունը, որը նախատեսում էր յուրաքանչյուր հինգ տարին մեկ պայմանագրի ժամկետի ավտոմատ երկարաձգման նորմ: Աղբքեցանը, Վրաստանը և Ուզբեկստանը հրաժարվեցին ստորգրել պայմանագրի երկարաձգման արձանագրությունը: 2002 թ. Հավաքական անվտանգության պայմանագրի հիման վրա ստեղծվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը: Ներկայում, Կազմակերպությանն անդամակցում են Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկաստանի Հանրապետությունները և Ռուսաստանի Դաշնությունը:

Հավելված 3



2022 թ. դրությամբ նախկին ԽՍՀՄ հանրապետությունները ընտրել են անվտանգային ճարտարապետության ձևավորման միանգամայն տարբեր ուղղեցեր, մասնավորապես՝

- ✓ Մերձբալթյան երեք հանրապետությունները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան 2004 թ. մարտի 29-ից հանդիսանում են Հյուսիսաստղական դաշինքի (ՆԱՏՕ) անդամ¹¹²:
- ✓ Ուկրաինան, 2020 թ. սեպտեմբերին ընդունված իր նոր ազգային անվտանգության ռազմավարության համաձայն, ձգտում է անդամագրվել ՆԱՏՕ-ին¹¹³:
- ✓ ՆԱՏՕ անդամ պետությունները 2008 թ. Բուխարեստի գագաթնաժողովում համաձայնեցին, որ Վրաստանը կդառնա Դաշինքի անդամ՝ պայմանով, որ այն

¹¹²Տես՝ <https://www.nato.int/docu/update/2004/03-march/e0329a.htm>

¹¹³Տես՝ https://www.nato.int/cps/en/natohq/topics_37750.htm

բավարարի բոլոր անհրաժեշտ պահանջները: Այդ որոշումը վերահաստատվել է նաև ՆԱՏՕ-ի հաջորդ զագաթնաժողովներում:¹¹⁴

- ✓ Թուրքմենստանը 1995 թ. դեկտեմբերի 12-ից հոչակվել է որպես չեզոք պետություն, իսկ ավելի ուշ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի որոշմամբ ճանաչվել է մշտական չեզոք պետություն՝ 185 անդամ պետությունների միաձայն աջակցությամբ:¹¹⁵
- ✓ Ուզբեկստանի նոր պաշտպանական դոկտրինը, որն ընդունվել է 2018 թ. հունվարի 9-ին, վերահաստատել է պետության չեզոքությունը, որն առաջին անգամ հայտարարվել էր 2012 թ. հայեցակարգում: Միաժամանակ, այն արգելում է միանալ ռազմական դաշինքներին, եյուրընկալել օտարերկրյա ռազմակայաններ և զորքեր ուղարկել արտասահման հակամարտություններին մասնակցելու համար:¹¹⁶
- ✓ 2011 թ. մայիսի 26-ին Ադրբեյջանի Հանրապետությունը դարձավ Չմիավորման շարժման լիիրավ անդամ, որանով հանդերձ Ադրբեյջանը չի հոչակել իրեն որպես չեզոք պետություն:¹¹⁷

Հավելված 4

Երկրի անվանում	Տարածք	Բնակչություն	ՀՆԱ 2021	Բյուջե 2021	Պաշտպանական ծախսեր
Հայաստանի Հանրապետություն ¹¹⁸	29743 կմ ²	2.968 մլն.	13.88 մլրդ. ԱՄՆ դոլար	4.52 մլրդ. ԱՄՆ դոլար	678 մլն. ԱՄՆ դոլար
Ռուսաստանի Դաշնություն ¹¹⁹	17125191 կմ ²	143.4 մլն.	1.776.000 մլրդ. ԱՄՆ դոլար	343.2 մլրդ. ԱՄՆ դոլար	66000 մլն. ԱՄՆ դոլար
Բելառուսի Հանրապետություն ¹²⁰	207600 կմ ²	9.34 մլն.	67.6 մլրդ. ԱՄՆ դոլար	18.8 մլրդ. ԱՄՆ դոլար	763 մլն. ԱՄՆ դոլար
Ղազախստանի Հանրապետություն ¹²¹	2724000 կմ ²	19 մլն.	190.8 մլրդ. ԱՄՆ դոլար	41.4 մլրդ. ԱՄՆ դոլար	1618 մլն. ԱՄՆ դոլար

¹¹⁴ Տես՝ https://www.nato.int/cps/en/natohq/topics_38988.htm

¹¹⁵ Տես՝ <https://www.mfa.gov.tn/en/articles/2>

¹¹⁶ Տես՝ “Law of the Republic of Uzbekistan on the Defense Doctrine,” January 9, 2018, <https://lex.uz/docs/3495906>

¹¹⁷ Տես՝ [https://www.mfa.gov.az/en/category/international-organisations/non-aligned-movement-nam#:~:text=On%20May%202026%2C%2020211%2C%20the,the%20Movement%20\(2019%2D2023\)%3A](https://www.mfa.gov.az/en/category/international-organisations/non-aligned-movement-nam#:~:text=On%20May%202026%2C%2020211%2C%20the,the%20Movement%20(2019%2D2023)%3A)

¹¹⁸ Տես՝ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2021/12/21/Republic-of-Armenia-2021-Article-IV-Consultation-Fourth-and-Fifth-Reviews-Under-the-Stand-511248>

¹¹⁹ Տես՝

https://datacommons.org/place/country/RUS?utm_medium=explore&mprop=amount&popt=EconomicActivity&cpv=activitySource%2CGrossDomesticProduction&hl=en

¹²⁰ Տես՝ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2019/01/18/Republic-of-Belarus-2018-Article-IV-Consultation-Press-Release-Staff-Report-and-Statement-by-46526>

¹²¹ Տես՝ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2022/04/08/Republic-of-Kazakhstan-2021-Article-IV-Consultation-Press-Release-Staff-Report-Staff-516400>

Ղրղզստանի Հանրապետություն ¹²²	199,951 կմ ²	6.694 մլն.	8.543 մլրդ ԱՄՆ դոլար	2.3 մլրդ. ԱՄՆ դոլար	130 մլն. ԱՄՆ դոլար
Տաջիկստանի Հանրապետություն ¹²³	143,100 կմ ²	9.75 մլն.	8.746 մլրդ ԱՄՆ դոլար	3.2 մլրդ . ԱՄՆ դոլար	81.7 մլն. ԱՄՆ դոլար

¹²² Տես՝ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2021/07/30/Kyrgyz-Republic-2021-Article-IV-Consultation-Press-Release-and-Staff-Report-463121>

¹²³ Տես՝ <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2022/02/17/Republic-of-Tajikistan-2021-Article-IV-Consultation-Press-Release-Staff-Report-and-513280>